


891.99


U-47



37

Ս. ԱՆՍՐՈՆԵԱՆ

— ԽԱԻԱՐԻ  
ՄԷՋ —



Թ Ի Յ Դ Ի Ս

ԷԼԵՔՏՐՈՆԻԿ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՎԱՆԵԱՆԻ, ԽՈՒ. 7,

1910

891.99  
U-42

May 7 / 1933

27 MAY 2011  
*[Signature]*


Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

893.41  
675 U8.3

# ԽԱԻԱՐԻ ՄԷՁ

*Ստեփան Մարտիրոսյան*

1 Յունիս 1913



Բ Ի Յ Լ Ի Ս  
ԵՆԵՏՐԱՎԱՐԻ ՏՈՒՍՈՒՄ ԵՎ ԱՐԱՆԵԱՆՅԻ ՊՈՒՆՏՆԵՐ  
1910



18431

5.02.2013

ԽԱԻԱՐԻ ՄԷԶ.



2232-2011

## Prolog.

«Մենք նման ենք գառների, որոնք խայ-  
սում են մարգագետնի վրայ. մինչդեռ մսա-  
գործը կանգնած՝ լուռ դիտում է եւ ըն-  
րում մէկն ու մէկին»:

**Շապենհաուեր.**

Un grand sommeil noir  
Tombe sur ma vie:  
Dormez, tout espoir  
Dormez toute envie.

. . . . .  
Je suis un berceau  
Qu'une main balance  
Au creux d'un caveau:  
Silence, silence!

P. Verlaine.

Մի մեծ ու սև քուն  
Իջաւ իմ կեանքին,  
Դէ՛հ, քնէք յոյսեր, քնէք  
Իղձեր իմ բոլոր.

. . . . .  
Շիրիմների մութ քարայրում  
Մի օրօրան եմ ես,  
Որին մի ձեռք օրօրում է ան-  
դադրում  
Լսութիւն, լսութիւն!

Պ. Վերլէյն

I.

Բակի հին ու խարխլած դուռը, որպէս  
տեղահան արած գառամեալ, դժկամակ ծե-  
րուկ, տաղաուկ ճոնչոցով բացւեց:

Ներս մտաւ նախ մի սևաթոյր ձի, մեծ,  
բրդբրդոտ գլխով, ջլուտ, նիհար պարանոցով  
ու լայն գաւակով. և նրա յետևից երեսունն  
անց՝ միջահասակ, թխադէմ մի տղամարդ:

Երկսով էլ յոգնած էին, փոշոտ ու քրտնաթոր:

«Թթենու տակ՝ հողաթմբի վրայ նստած պառաւը գլուխը բարձրացրեց, դողդոջուն ձեռքով հովանի արեց հանգած աչքերի վրայ ու նայեց.

— Թաթուլ ջամն.

— Ես եմ, մայր.

— Եկա՞ր սրդի.

— Եկայ, մայր.

— Եկած ճամբիդ մեռնեմ: առողջ ես, բալաս.

— Առողջ եմ, մայր.

— Տէր, փառք քեզ. պառաւը նայեց դէպի երկինք.

Թթենին մեղմիւ օրօրեց գլուխը...

Փոքրիկ, երեք տարեկան երեխան յանկարծ կանգ առաւ բակում իր երերուն վազքի մէջ, կամացուկ ցած թողեց ձեռքից փայտէ ձին, նախ շրթունքներն ուռցրեց կէսամաշկոտ, կէս-ժպտուն, նայեց սիրուն յոնքերի տակից իր խոշոր, պայծառ աչքերով, ապա խայտալով վազեց դէպի հայրը, որ սպասում էր բազուկները բացած.

— Բարիկ ջան, Բարիկ ջան.

Հայրը զրկեց նրան, բարձրացրեց, քրնքոյշ ջերմութեամբ սղմեց կրծքին, իր քրտ-

նաթոր, արևառ այտերը քսեց նրա երեսին, համբուրեց պինդ, պինդ, յետոյ աչքերին նայեց, կրկին համբուրեց, դարձեալ սղմեց կրծքին այնպիսի խանդաղատանքով, այնպիսի ծով կարօտով, ասես ուզում էր իր հոգու մէջ լուծել գաւակին:

— Բարիկ ջան, իմ բալիկ, հայրիկը մատաղ քեզ.

Պառաւը ժպտում էր հիացմունքով ու երջանիկ.

Ձին՝ գլուխը քաշ ու հանդարտ՝ նայում էր իր պղտոր իմացական աչքերով, նայում էր ու սպասում, որ տէրը կշտանայ գաւակից ու իր բեռը ցած առնի մէջքից. կենդանին ծանօթ էր այս տեսարանին և լաւ գիտէր, որ պէտք է սպասել, մինչև Թաթուլը կարօտն առնի.

Ու սպասում էր.

Անհանգիստ էր թթենու տակ կապած անհագին շունը՝ Չօմաոր: Բակի դռան ձոնչոցի հետ՝ նա թռաւ ոտքի, ձգձգեց իր շղթան, յետին թաթերի վրայ ծառացաւ, բարեկամօրէն հաջեց ուշադրութիւն գրաւելու համար, կաղկանձեց ողբաձայն, կանչեց տիրոջը. իզո՛ւր, Թաթուլը անձնատուր իր փոքրիկին՝ մոռացել էր նրան:

Եւ շունը կրծոտում էր շղթան, լալիս էր ու կանչում:

Վերջապէս Թաթուլը՝ միշտ երեխան գըրկած, մօտեցաւ նրան. շունը բարձրացաւ յետին թաթերի վրայ, նետուեց դէպի տիրոջ կուրծքը. հոտուեց հեծեծաց, մինչդեռ Թաթուլը աջ ձեռքով Բարիկին պահելով, ձախ ձեռքով շոյեց նրա գլուխը, դունչը, բրդոտ թիկունքը:

— չը՞, կարօտել ես... դէ լաւ, լաւ, իմ սիրուն Չօմառ... տունը լաւ ես պահել, իմ խելօք, իմ քաջ... հանգստացիր, հանգստացիր...

Երեխան քրքշում էր կենդանի, արծաթահնչիւն ծիծաղով և իր փոքրիկ ոտներով՝ աշխատում էր հրհրել շան գլուխը:

— Չօմառ, Չօմառ, իմ խելօք Չօմառ. կրկնեց Թաթուլը ու հեռացաւ. շունը հանգստացած՝ վերստին պարկեց՝ գլուխը թաթերի վրայ:

Թաթուլը դարձաւ դէպի ձին և երբ յանկարծ հայեացքը նրա աչքերին ընկաւ, յօնքերը խոժոռեց. նա չէր սիրում այս ձիու աչքերի մէջ փայլող իմացականութիւնը, չէր ուզում, որ նա նայի այնպէս խորհրդաւոր, ասես մի բան գիտէ, մի բան է ծածկում, մութ, անորոշ ու սարսափելի:

Քանի անգամ մտածել էր վաճառել ձին, ազատել այդ հայեացքից, ու միշտ էլ իր միտքը իրան թւացել էր ծիծաղելի. և ձին մնում էր ու Թաթուլը ատում էր նրա աչքերը:

Մօտեցաւ, ցած բերեց գործիքներով լի խուրջինը, Բարիկին նստացրեց ձիու մէջքին. երեխան, գոհ ու երջանիկ ծափ էր տալիս թաթիկներով, քրքշում էր, շարժում էր փոքրիկ ոտները, իսկ Թաթուլը կամացուկ քաշում էր ձիու սանձը և ման ածում բակում յետ ու առաջ. կենդանին լաւ գիտէր, որ այս էլ անխուսափելի է ու թէև յոգնած, քրտնած, քայլում էր համբերութեամբ ու այնպէս էր օրօրում գլուխը, ասես ուզում էր ասել «գիտեմ, գիտեմ...»:

Եւ թթենին հանդարտ տարուբերում էր իր կատարը...

Թաթուլը ցած առաւ Բարիկին, ձին ախոռ տարաւ, կապեց, խոտ ձգեց առաջը և քիչ յետոյ երեխան ծնկերին, նստած էր մօր կողքին. մինչդեռ Բարիկը երջանիկ ու խնդադէմ՝ խառնում էր պտուղներով լի կապոցը, որ հայրը նրա առաջը դրեց:

Մայրը խանդադատանքով նայեց Թաթուլի դէմքին:

— Քրտնած ես, բալաս, շատ ես յոգնել:

— Հա՛, մայր, ձիուն մեղքացայ, ճամբի:

կէսը ոտքով եմ եկել.

Մայրը նրա գլխարկը հանեց և իր գոգնոցի փէշով ճակատի քրտինքը սրբեց:

— Ուշացար այս անգամ, Թաթուլ ջան.

— Հա, ուշացայ, բայց վերջացրի. այսուհետև կ'երթանք քարահանք:

Թաթուլը քարտաշ վարպետ էր, ինչպէս և իր հանգուցեալ հայրը: Մանուկ օրերին հայրը նրան ուղարկեց քաղաք, որ «հայի շիօլում կարգա, մարդ գառնայ»: Թաթուլը երկու-երեք տարի սովորեց հոգևոր դպրոցում. հօր անակնկալ մահը պատճառ եղաւ, որ նա կիսատ թողնի ուսումը: Քարտաշութիւն քիչ գիտէր հօրից, և սիրում էր. քաղաքում մտաւ աշակերտ յայտնի վարպետների մօտ և վերադարձաւ գիւղ, ուր մայրը նրան սպասում էր անձկանօք:

Եւ այնուհետև նա էր նորոգում շրջակայքի եկեղեցիները, հինաւուրց վանքերը, զանգակատները, քանդակում էր խաչքարերը, կերտում դամբարանները: Երբեմն օրերով, շաբաթներով տանից բացակայ էր լինում, յետոյ յայտնւում էր. մի քանի օր մընում հարազատների մօտ — ապա կամ կրկին գնում էր հեռաւոր կամ մօտաւոր գիւղեր, կամ իրենց գիւղից ոչ հեռու, լեռնաշղթայի մէջ բացւած քարահանքը:

Այս անգամ նա վերադառնում էր երկու շաբաթւայ բացակայութիւնից յետոյ. Ք... գիւղի եկեղեցուն զանգակատունն էր կառուցել:

— Սիրուն բան դուրս եկաւ, մայրիկ. շատ սիրուն. Թաթուլը դեռ երազում էր. նրա միտքը տակաւին պաշարւած էր հոյակապ գործի գեղանի ձևերով, որ իւր հոգու ծրնունդն էր.

— Չե՞նեքիդ մեռնիմ, ասաց մայրը.

— Բոլորն ի՞նչ է, հայրիկ, յանկարծ թոթովեց մանուկը, ցոյց տալով պտուղները.

— Հա, քոնն է, բալիկ.

— Տատին էլ կը տամ.

— Ապա, տատին էլ տուր.

Երեսան ջոկեց մի խնձոր, մեկնեց տատին, մի ուրիշն էլ ինքն առաւ, կծեց, մնացածը թողեց թմբի վրայ, վազեց, գտաւ իր փայտէ ձին և սկսեց խաղալ բակում:

Մայրը շարունակում էր նայել իր որդուն, թափ էր տալիս զգեստի փոշին, ապա նրա յոգնած գլուխը քաշեց և զգուշութեամբ ծնկանը դրեց:

— Հանգստացիր, բալաս, շատ ես յոգնած. սոված չե՞ս.

— Չէ, մայրիկ, սոված չեմ, ճամբայ ընկնելուց առաջ հաց կերանք:

Թաթուլը փոքրիկ երեխայի պէս գլուխը ծնողի ծնկանը դրեց ու նայում էր Բարիկի խաղին: Մայրը ձեռքը նրա մազերի մէջ թաղած՝ շոյում, գուրգուրում էր...

Դա մի սիրուն գլուխ էր.

Խիտ ու սև մազեր, որոնք բաց ճակատի վրայ մի փոքրիկ փունջով ցցունք կազմած, խրոխտ տեսք էին տալիս նրան. նօսր ու սև միրուքը եղերում էր ձուլածն դէմքը, իսկ արծաային քթից վար նոյնպէս նօսր բեխերը հազիւ էին ծածկում յամառ ու նուրբ շրթունքները: Քթից վեր, երկու յօնքերի արանքում փոքրիկ մի գիծ կար, որ զայրոյթի ու վշտի ժամերում խորանում, դառնում էր մի մռայլ կնճիռ:

Մայրը ցաւոտ հիացմունքով էր նայում զաւակի դէմքին, մանաւանդ նրա միրուքին, որ հակառակ իր այնքան թախանձանքներին Թաթուլը հրաժարւում էր ամեն ինչ սիրելի կնոջ՝ այն գեղանի Մարանի մահից յետոյ:

Մայրը յետ քաշեց նրա մազերի փունջը ճակատից, ապա կամացուկ կռացաւ Թաթուլի գլխին, նայեց ուշադիր հայեացքով:

—Վայ, քօռանամ ես, Թաթուլ ջան, մազերդ սպիտակել են, բացականչեց նա.

—Նոր չի, մայրիկ ջան, դու ես նոր տեսնում, քարտաշի գլուխ է չէ՛է, հող է թափ-

ւում, արևն է այրում, քարի կտորտանք են ընկնում վրան և յետոյ բաղձն էլ քար զարկեց, մայրիկ, բաղձը:

Մայրը խորունկ ախ քաշեց ու լռեց. անդ սուգը, որ մութ ամպի պէս նստել էր զաւակի սրտին և երեք տարուց ի վեր մայրն իզուր էր աշխատում վանել, փարատել, մեղմել:

Լուռ էր և Թաթուլը:

Աշնան սկիզբն էր: Թթենու վրայ առաջին դեղին տերևներն արդէն դողդողում էին մեղմ հովի առաջ. նրանցից մէկն ընկաւ Թաթուլի երեսին, նա վերցրեց ու խաղում էր ձեռքով:

—Թաթուլ ջան.

—Ի՞նչ է, մայրիկ.

Պառաւը չը շարունակեց. ըստ երևոյթին նա մի ծանրակշիռ ասելիք ունէր ու վախենում էր զաւակին վշտացնել: Բակում լսւում էր Բարիկի կանչը, նա ծեծում էր իր ձին ու վազվզում. շունը աշխատում էր բերանով բռնել մի ահագին ճանձ, որ բզզալով պտոյտներ էր գործում նրա գլխի շուրջը. կենդանին թափով շրխկացնում էր ատամներն ու մռմռում, երբ անյաջող էր անցնում ճանձրալի բզէզին բռնելու փորձը. ախոսից մերթ ընդ մերթ լսւում էր ձիու փոնջոցն ու ոտքի դոփիւնը սալած յատակի վրայ:

ճնճղուկները մի խենթուկ երամ զարկեց  
թթենու վրայ. նրանք մի վայրկեան ճու-  
ղեցին, քաշքշեցին իրար ու թռան անցան  
դէպի այլ բակեր, այլ ծառեր:

Մայր և որդի լուռ էին.

— Թաթուլ ջան, որդի. վերսկսեց մայ-  
րը. վախենում եմ շուտով մեռնեմ ու էս ե-  
րեխան մնայ էսպէս... պառաւի ձայնը դող-  
դողաց ու խզեց. նա շարունակել չըկա-  
րողացաւ և ձեռքը տարաւ դէպի խոնաւա-  
ցած աչքերը:

— Է՛հ, թող այդ, մայրիկ, ինչ մահ, ինչ  
բան, Բարիկիս միասին պիտի պսակենք,  
պար պիտի դաս հարսնիքին, ինչեր ես ա-  
սում, սիրտդ լէն պահիր, մայրիկ:

Թաթուլը շատ լաւ էր զգում մօր հո-  
գին ալեկոծող ահագին ու վշտախառն եր-  
կիւղը, բայց առհարկի կատակի էր տալիս.

— Պսակելի տղաս, շարունակեց մայրը  
աւելի հաստատ ու աւելի ցաւոտ շեշտով.  
տես, ես ձեռքից գնում եմ, կը մեռնեմ յան-  
կարձ՝ ինչպէս մի ճրագ փչես... յետոյ ո՞վ  
կընայի տանդ, Բարիկին:

Հա, մայրը ձեռքից գնում էր. նրա  
մէջքն աւելի ու աւելի կռանում էր ու  
զլուխը հասած հասկի պէս կախուռում էր դէ-  
պի մայր երկիրը. Թաթուլն այդ լաւ էր

նկատում, բայց աշխատում էր չը մտածել  
այդ մասին:

Առաջին անգամը չէր, որ մայրը ակ-  
նարկով, մեղմութեամբ, երբեմն կատակով  
փորձում էր որդուն համոզել երկրորդ ան-  
գամ ամուսնանալ, իր ծաղիկ կեանքը չը  
սկսեցնել, բայց երբէք այսքան վճռական,  
այսքան ցաւոտ շեշտով:

Թաթուլը մտածմունքի մէջ ընկաւ:  
Երկրորդ կի՛ն...

Ո՞վ է նա, ո՞վ պիտի բռնի այն չքնաղ  
արարածի տեղը, որ մի օր անդառնալի կեր-  
պով իր հետ հողի տակ տարաւ Թաթուլի  
սիրտը. Բարիկն ո՞ւմ պիտի ասի՝ «մայրիկ»:

— Ուզում եմ է՛է, մայրիկ, ես էլ ուզում  
եմ նորից ապրել, որ չի լինում, ի՛նչ անեմ.  
տեսնո՞ւմ ես այս տերևը— նա մեկնեց ձեռ-  
քի դեղին տերևը— Աստուած էլ չի կարող  
սրան իր տեղը կպցնել, որ նորից կանաչի:

— Որդի, չէ՛ եկող գարնան նրա տեղը  
էլի նոր տերև կը ծլի ու կը կանաչի. մէկը  
գնում է, միւսը տեղն է գալիս, որդի, աշ-  
խարհի բան է, էս իմ, քո գլխով չէ մենակ.  
Աստուած կամքն է.

— Է՛հ, մայրիկ, Քէշիշ օղլին ինձանից  
էլ, քեզանից էլ իմաստուն է:

2237-2011



«Հազար ու մի նեղութիւնով այգի տնկեցի,  
«Պաւաճանի ձեռքը դիպաւ, ծաղիկներս  
թափւեցին»:

Այսպէս է ասել իմաստուն, արդար  
մարդը. հաւատա, իմ խեղճ մայր, անիրաւ  
բաղդը ծաղիկներս փետեց, էլ սիրտ չը կայ  
նոր այգի տնկելու, բարով-խերով Բարիկին  
կը պսակեմ:

— Պսակւիր, որդի, մենք հողինն ենք, հողը  
մերը. ախր մեռնողից յետ՝ ապրող էլ պէտք  
է լինի էս վերան աշխարհում. պսակւիր,  
տղաս, արածդ Աստծուն էլ դուր չի գայ,  
թէ սուգ էր, երեք տարին էլ բաւական է, թէ  
կսկիծ էր, հալբաթ հովացաւ:

Թաթուլը չը պատասխանեց, նա մեղ-  
միւ սուլում էր, յոնքերի արանքի կնճիւղը  
խորացաւ և աչքերի վրայ ամպ իջաւ:

— Դու գիտես, որդի, վերջացրեց մայրը  
ընկճած ու աչքերը սրբելով. դո՛ւ գիտես,  
ուզում էի տեսնեմ, քանի գլուխս գետին չեմ  
դրել, քանի աչքերս չեմ փակել, երկնքի դուռը  
խօմ միշտ մեր առաջ փակ չի լինի. կ'ըլնի  
որ մի հալալ կաթնակեր էն ողորմածիկի տեղը  
կը բռնի, ու ես էլ դաղւած սիրտս հովա-  
ցած գերեզման կ'իջնեմ. դո՛ւ գիտես, որդի,  
էլ չեմ ասի, թո՛ղ սիրտդ չը ցաւի:

Երեկոյ էր արդէն. վերջալոյսի յետին

ցոլքերն էին խաղում կտուրների ու խոտե-  
րի դէզերի վրայ. դաշտից տուն դարձող ա-  
նասունները բառաչում էին գիւղի փողոց-  
ներում և եկեղեցու զանգը մեղմիւ լալիս  
էր խոնջած գիւղի վրայ:

Մայրը վերկացաւ, տուն մտաւ երե-  
կոյեան հացի պատրաստութիւնը տեսնելու.  
Թաթուլը անշարժ մնաց իր տեղում հայեաց-  
քը մի կէտի յառած: «Պսակւիր տղաս...».  
Ինչ ասաց մայրը. ինչո՞ւ ասաց:

Իր կնոջից, իր գեղանի Մարանից բա-  
ցի, ուրիշ պատկեր չը կար Թաթուլի գըլ-  
խում. և քանի՞ անգամ էր մտածել, որ-  
քան երևակայել, քրքրել յուշեր, հանդի-  
պումներ, ծանօթ դէմքեր. ոչ միշտ նա էր,  
միշտ Մարանը, աջ այտին սիրուն խալը,  
կոպերի եզրերը սև՝ ասես հէնց նոր սև դեղ  
էր քաշել աչքերին դեղդիրով, թերթերունք-  
ներն այնպէս երկար, որ այտերի վրայ սոււեր  
են ձգում, յետոյ հասակը՝ չինանր. ձայնը,  
քայլածքը, մագերը... հուսն, լեռների եղ-  
նիկ էր, ինչպէս մոռանալ: Թաթուլն աչքերը  
փակեց այս պատկերը պինդ, երկար պահե-  
լու համար: Երագում էր... Եւ այդ պատ-  
կերից այն կողմը, հեռուն, մի սև ու անու-  
րոշ բան, անշարժ ու վատ, որից վախենում

է թաթուլը, որ կ'ուզէր չը տեսնել: Ինչ է այն, մօր մահն արդեօք, մօտալուտ անխուսափելի, որի ստուերը խաղում է արդէն ծընողի ճակատին, թէ մի ուրիշ բան աւելի անաւոր, աւելի զարհուրելի:

«Մենք հողինն ենք, հողը մերը...»:

— Բարիկ, Բարիկ, իմ սիրուն բալիկ:

Երեխան վազէ վազ եկաւ դէպի հայրը. թաթուլը խելայեղօրէն յուզոտ խլեց նրան, սղմեց կրծքին, համբուրեց այնպիսի շերմութեամբ, որ մանկան փոքրիկ մարմինը սարսուաց և նա վախով նայեց հօր դէմքին. թաթուլը հայեացքը բնեռեց զաւակի աչքերին ու նայում էր այնպիսի ուժով, այնքան շեշտակի, որ երեխան ակամայ արագ թարթել սկսեց հօր հայեացքի բոց ցոլքերի դէմ:

Այդ աչքերը...

Բնութեան մի սքանչելի խաղով, մեռած մայրն էր այնտեղ ամբողջովին. նոյնպէս սև կոպեր երկար թերթերունքներով, ծովի պէս բիբեր ու թարթելիս, ինչպէս ակիւքների քնքոյշ խաղ: Յետոյ աջ այտի վրայի այդ սիրուն խալը, նուրբ շրթունքների այդ հրապուրիչ ժպիտը:

— Անողորմ Մարան, ինչ արիւր դու ինձ, մրմնջում էր թաթուլը, ու վերստին սղմեց

երեխային իր կրծքին, համբուրեց, հեծեծաց.

— Գնում եմ տատիկի մօտ. երեխան զգում էր հօր հոգու անօրինակ խռովքը:

— Գնա, բալիկ:

Բարիկը դուրս պրծաւ հօր գրկից ու շտապով ծածկւեց խրճիթում:

Թաթուլն անշարժ շարունակում էր իր ցաւոտ մտմտուկը:

Ու յիշեց իր և Մարանի սէրը, որ ամբողջ մի տարի գիւղի և շրջակայքի զարմանքի, նախանձի և հետաքրքրութեան առարկան էր:

Դեռ երբէք գիւղը չէր տեսել սիրային զգացմունքի այդքան համարձակ, այդքան յանդուգն ու գեղեցիկ պատկեր: Խնամութիւն կար, ասում էին «չ'հաս է», բայց ոչ թաթուլի և ոչ Մարանի փոյթն էր այդ գիւղի դաժան մոմոցի, ծերերի ու պառաների բողոքի, ազգականների վախկոտ խորհուրդների դէմ սիրահար զոյգից իւրաքանչիւրը միայն մի պատասխան ունէր.

«Սիրում եմ, կ'առնեմ...»

Եւ այդ հօր, աննման սէրը, որ զարնան վարդի պէս փթթել էր բոլոր հայեացքների առաջ, իր թափով ու գեղեցկութեամբ ամենաչկամ սրտերի սառոյցը հալեց: Մատաղ աղջիկներն ու ջահիլ հարսները իրենց

հրապոյրի թովիչ հովանու տակ առանձնաբան ու ծաղկի պէս անուշ, դաշտերի պէս արձակ ու վայրի երգ յօրինեցին, հազար տարիներով նախապաշարմունքների ճիրաններով ծւաւած մի սիրտ էր, որ այս անգամ սքանչելի և խիզախ շեշտերով իր յաղթանակն էր երգում:

«Թաթուլի զընգզընգան Մարանն եմ ես...»

Եւ այդ «զընգզընգան» Մարանը, որ իր գեղեցկութեան ու սիրոյ խնկաբոյր հրապոյրներով այնպէս ուժգնօրէն գերեց գիւղն ու Թաթուլին, մի տարի, միայն մի տարի ժըպտաց իր ամուսնուն, աշխարհին, արևին: Առաջին ծնունդի վրայ նա մեռաւ, հոգին թողնելով Բարիկի աչքերի մէջ և իր հետ գերեզման տանելով Թաթուլի մխացող սիրտը: «Հուճ, էս անիրաւ աշխարհում սիլ է երջանիկ... մենք ցաւինն ենք, ցաւը՝ մերը» և ծեր ու պառաւ օրօրում էին գլուխները:

Աղջիկների շրթունքներին սառեց սիրոյ յաղթանակի շեշտը, նրանք սսկեցին՝ ինչպէս ճռողող սարեակները, երբ լսում է ցինի թևերի շրշիւնը գլուխներից վեր:

Ոչ ոք չը բողոքեց. ճակատները գունատեցին և անյուսօրէն քաշ ընկան սև զարհուրանքի ծանրութեան տակ, որ ճնշում

ու փշրում է ամենից գեղեցիկը, ամենից ընտիրը:

Լճու, լճու... և գիւղը լոեց:

Ահագին, անակնկալ հարւածից Թաթուլը շշմեց. կնոջը չէին թաղում, այլ իրեն՝ Թաթուլին: Դագաղի յետևից քայլում էր անգիտակից ու անմիտ. մթագնած աչքերի հայեացքը ոտների տակ՝ քայլում էր, ու չը գիտէր, ո՛ւր, ինչ ո՛ւր... միայն գերեզմանի փոսի առաջ, երբ մի բուռ հողը տւին նրան կնոջ սառը դիակի վրայ ցանելու, յանկարծ՝ ասես կարմրած շամփուրներ մխեցին ուղեղի մէջ, նա անօրինակ, ոչ մարդկային ձայնով ճչաց, հողն իր գլխին ցանեց, ծնկները ծալեցին և փուկեց խոնաւ հողակոյտի վրայ:

Նրան տուն բերին անզգայ. երկար հիւանդ պարկեց:

Եւ երբ վերկացաւ անկողնից, օրերով նստում էր ծառի տակ լուռ ու անշարժ, փայտով խաղում էր ոտների առաջ, և գիշերները գնում էր թաւալում, տրորում Մարանի գերեզմանի վրայ և մինչև լոյս՝ նրա մտղմ հեծկլտանքը հնչում էր գիշերային լուռ խաղաղութեան մէջ:

Գիւղացիք ասում էին՝ «Թաթուլը կը խենթանայ, Լէյլի ու Մէժլումի սէրն էր...»

Թաթուլը չը խենթացաւ:

Բարիկը փրկեց նրան:

Մայրը կար. չորացած ձեռների վրայ առաւ մօրից որբ մնացած թոռանը, դռնէ դուռ ընկաւ դողդողալով, բոլոր ջահել ծրծմայրերին աղերսեց, կերակրել տւեց, փոքրիկ Բարիկին խնամեց, մեծացրեց:

Եւ նա այժմ երեք տարեկան է, թըխլիկ, գանգրահեր, սիրուն երեխայ և աչքերի մէջ՝ մայրը, Մարանի հոգին...

«Պսակւիր, տղաս...»

—Օ՛ֆ, մայր, ի՞նչ ասիր, ի՞նչ ասիր: Երեկոյեան խաւարն իջաւ, իջաւ, պատեց արար-աշխարհը:

Եւ թթենին օրօրում էր իր կատարը մեղմ հովի առաջ:



## II

Լուսաբացին Թաթուլը դուրս քաշեց ձին, պատրաստուում էր ճամբայ ընկնել դէպի Լեռները, դէպի քարահանքը. մայրը պաշարեղէնի կապոցը տեղաւորեց խուրջինում. ու նայում էր, թէ ինչպէս է որդին մեկնում: Վախենում էր նայել գաւազի ճակատին, ուր նկատել էր արդէն ծանօթ կնճիոր:

—Չէ, մայրիկ, չէ, ասաց Թաթուլը դռնից դուրս գնալիս:

—Ի՞նչը չէ, որդի:

—Երեկ իրիկուն ասածդ:

Մայրը ախ քաշեց. որդին դեռ ապրում էր նախընթաց երեկոյի յուզմունքը. ամբողջ գիշեր Թաթուլը մտածել էր, տառապել, Մարանի յուշերով երազել, տենդով բռնաձի պէս՝ թաւալել էր անկողնի մէջ, այժմ էլ շարունակում էր հոգու ալեկոծումը: Գոհ էր, որ գնում է աշխատանքի, այդ նրա փրկութիւնն էր միշտ այսպիսի ժամերում:

Մայրը լուռ նայում էր հեռացող որդուն և երբ ծածկւեց դրան յետևում, գլուխն օրօրեց ու դարձաւ դէպի տուն ընկճւած ու վշտագին:

Աշնանային մեղմանուշ առաւօտ էր. Թաթուլը գնում էր այգիների մեծ փողոցով: Օդը լի էր ցօղերով. գիշերն էր լացել բնութեան վրայ իր խորհրդաւոր վշտի արցունքը: Ծառ, թուփ, հող ու քար ողջ արցունքոտ էին, ինչպէս թանկագին էակի թաղումից դարձող յուղարկաւորներ: Աղուրի թանձր փոշին, գիշերային տամուկ մթնոլորտի հպումից կապտաւուն տեսք էր առել և նրա վրայ յստակօրէն ծրագրւում էր դաշտ գնացած առաջին անասունների ոտնատեղին: Այս ու այն կողմ՝ ճամբի եզրին փռած դեղին տերեւները իրենց գոգաձև կծկումների մէջ նոյնպէս պահում էին ցօղի կաթիլներ, որպէս արցունքոտ գերեզման մեռնող միջատներ:

Փողոցի երկու կողմից ուղղաձիգ ու բարձրաբերձ բարդիներն՝ սէգ կեցւածքով խիտ առ խիտ իրար կողք շարւած, վաղորդեան հովի առաջ դողդողուն՝ մեղմիւ թափ էին տալիս իրենցից գիշերային մառախուղն ու ցօղի կաթիլները, որոնք մաղւում, թրջում էին այգիների պատերն ու

գետինը: Կանաչի այդ յեղյեղուկ ու բարձր պատերի վրայ վերից իջնում էր երկնքի մի կապտաւուն շերտ, և ամբողջ փողոցը, որպէս մի հսկայական բաւիղ, գալարւում, սողում էր դէպի բաց դաշտը:

Հեռաւոր հորիզոնի վրայ արշալոյսը նախ քնքշօրէն զգոյշ, ապա յորձանուտ երփներանգ լոյսերի հեղեղով, փուկացաւ ակնապարար ու դիւթական խաղերով:

Ծառերի արևելեան երեսների մուգ կապոյտը գունատւեց, գունատւեց ու սսկեփայլ վաւեց:

Արևը բարձրացաւ.

Բարդիների սոււերները խօլ ու անծայր, նախ նօսր շամանդաղի պէս, ծրագրւեցին, ապա բարձրացած ու խիտ շարքերով՝ փողոցի վրայից անցան ու նետւեցին հակառակ կողմը, փարեցին ծառերին, լուծւեցին նրանց սաղարգների մէջ, որպէս լուռ բանբերներ մի անծանօթ աշխարհի: Սոււերների արանքից՝ որպէս վիթխարի և փայլփլուն սրեր, արևի ցոլքերը թափանցում էին բարակ շերտերով, լիզում էին գետնի խոնաւութիւնը, և վազում, խաղում էին հակառակ կողմի ծառերի մարգարիտ ցօղերի վրայ:

Ամբողջ փողոցը խայտաբղէտ ու թըրթռուն՝ լի էր շողով, ցօղով, բուրմունքով:

Թաթուլը յետ ձգեց գլխարկը ճակատից և լայն կրծքով շնչում էր գաղջ անուշաբոյր մթնոլորտում: Ու վերստին յիշեց իր երգը, որ այնքան անգամ հնչել էր այս իսկ փողոցում, այս իսկ ժամերին կամ երեկոյեան դաշտ գնացող կամ վերադարձող աղջիկների շրթունքներով: Եւ Մարանը քանի անգամ է լողացել այս լոյսերի ու սոււերների ծովի մէջ, ուր նոյն ցօղերն օծել են նրա մազերը, նոյն ցօղքերը խաղացել այտերին. քանի անգամ նրա յետից, պատերի տակից ինքը քայլել է գաղտագողի, ինչպէս եղնիկը, որ փնտրում է իր ընկերուհուն:

Նա մեղմիւ շնչաց իր երգը:

«Թաթուլի զընգզընգան Մարանն եմ  
ես»...

Ասաց ու ժպտաց դառնօրէն. յետոյ հարւածեց ձիուն առանց պատճառի. կենդանին փնչացրեց, խոշոր գլուխը թափահարեց, երկու քայլ առաւ թափով, ապա կրկին հանդարտեց և նրա ոտնաձայները դարձեալ հետեւեցին համաշափ ու տաղտուկ, ինչպէս կեանքը:

Ու յանկարծ մի անծայր խղճահարու-  
թիւն համակեց նրա հոգին դէպի այս կեն-  
դանին, որ լուռ հնազանդ քաշ էր տալիս իր  
կեանքի բեռը:

դիտմամբ երևակայեց Սօնային իր կին, որ  
պիտի փոխանակի Մարանին: Հեգնախառն  
այդ մտքի դէմ իր հոգին ծառայաւ:

— Չէ, մայրիկ, չէէ...

Բայց չէր շտապում ձին քշել ու անցնել.  
ու շարունակում էր աւելի և աւելի ուշագիւր՝  
նայել կնոջ երերուն թիկունքին, նրա հա-  
րուստ զիստերին, որոնց վրայ ծփում էր  
հնամաշ, խունացած շրջագգեստը և մանա-  
ւանդ՝ այն զոյգ ծամերին, որոնք իրենց  
ալեծածան խաղերի մէջ ինչոր չարածճի ու  
նենգօրէն հեգնող բան ունէին: Թաթուլն  
սկսում էր ինքն իրեն չարանալ իր այդ  
հետաքրքրութեան, իր մտքերի համար. նը-  
րան գայրացնում էին այդ զոյգ ծամերը,  
որոնք զոյգ աչքերի պէս նրան թարթում  
էին տարփօրէն:

— Անամօթ, մումուաց նա ատամների տա-  
կից, բայց ասել չէր կարող, թէ ինչո՞ւ է  
«անամօթ» այդ կինը, որ միանգամայն ան-  
գէտ նրա մտքերին, գնում է իր գործին,  
իր ցաւին: Թաթուլը գլխարկը ճակատին  
քաշեց, խփեց ձիու կողերին, մօտեցաւ, կի-  
նը կենդանու ոտնաձայնի վրայ յետ նայեց,  
նրա վառ-կապոյտ աչքերի փայլը մի վայր-  
կեան խաղաց Թաթուլի բիբերի վրայ, յոյ-  
գի, թէ դողի պէս սարսուռով իջաւ մինչև

կուրծքը. Թաթուլն այդ զգաց և գրեթէ  
զայրոյթով բացականչեց.

— Բարի լոյս, Սօնա քուրիկ. ուզում  
էր ծածկել յուզմունքը:

— Աստծու բարին, վարպետ, կնոջ պա-  
տասխանի մէջ հնչում էր զարմանք, այդ  
բարեի, այդ ուշադրութեան համար:

Թաթուլն էլ աւելի բարկացաւ, շտա-  
պեցրեց ձիուն, առաջ անցաւ, դուրս եկաւ  
արձակ դաշտը և լայն կրծքով շունչ առաւ,  
ինչպէս անհաճոյ մղձաւանջից ազատւած:

Լուռ էր բաց դաշտում:

Սարեակներն ահագին խմբերով անց-  
նում էին դեղին խոզանների վրայով, ճուռ-  
դում էին ու խայտում: Հնձւած արտերի  
միապաղաղ գունատութեան մէջ առոյտնե-  
րը իրենց վառ կանաչով սրտապարար և  
զրաւիչ երազների պէս՝ տակաւին յամառա-  
բար պահում էին գարնան հմայքը: Աւելի  
հեռուն բացւած բամբակի արտերը քաշ էին  
ձգել մետաքսանման կոկոնները, ինչպէս ան-  
թիւ ճերմակ թռչուններով բեռնաւորւած:  
Եւ նրանց շուրջը հոտաւէտ կանեփները փրն-  
ջաձև կատարներով՝ շարւած էին ինչպէս  
հրաշագեղ տեսարանը դիտող մի ամբոխ խիտ  
առ խիտ իրար վրայ սղմւած: Լորերը սուլում  
էին հնչուն կայտառ իրենց վաղորդեան երգը:

Մի երեխայ փոշու մէջ կորած հեիհն քշում  
էր երկու կով անցած նախրին հասցնելու,  
որ սևին էր տալիս հեռու հորիզոնի  
տակ, որպէս սև, երերուն զանգւած: Մի  
սայլ էր ճռնչում մօտակայ բլրի յետևում,  
որտեղից մի նապաստակ թռաւ, ճամբան  
կտրեց շեշտակի, և կորաւ բամբակի արտե-  
րում: Աւելի հեռուն՝ լեռները վաղորդեան  
մշուշից ազատւած՝ գեղանկար ելևէջերով  
ձգւում էին դէպի Մասիսը, կապոյա թի-  
կունքները մեղկօրէն արևի շողերին դէմ  
տւած:

Թաթուլի հոգին թեթևանում էր. միտ-  
նուշ մեղմութիւն, քնքոյշ բուրմունքի հետ  
բարձրանում էր բնութիւնից թախիժով թա-  
թաղուն և համակում նրա ամբողջ ալեկոծ  
էութիւնը: Սանձը ձիու պարանոցին ու գը-  
լուխը կրծքին քաշ ձգած, նա գնում էր, հա  
գնում, նիրհուն, երազուն վիճակի մէջ:

— Բարի լոյս, վարպետ.

Թաթուլը գլուխը բարձրացրեց. ան-  
նկատելի կերպով նա հասել էր քարահանք,  
ուր իրանից առաջ արդէն հասել էր ընկերը—  
Գասպարը:

— Բարի լոյս, Գասպար. ինձանից ա-  
ռաջ ես եկել:

— Էսօր ուշացար:

— Հն ուշացայ, պատասխանեց թաթուլը մտազբաղ, յիշեց ինչու է ուշացել, և յօնքերի արանքի գիծը խորացաւ, տրամադրութիւնը վերստին փոխւեց:

Գասպարը նայեց նրան ու լռեց. նա լաւ էր ճանաչում վարպետին:

Մօտ երեսուն տարեկան մի թանձրամարմին հսկայ տղամարդ էր Գասպարը. բիրդ ու միամտօրէն վայրի, ինչպէս ժայռերի կրճքից դուրս վիժւած: Նրա կարճ ու հաստ պարանոցի վրայ ահագին գլուխը նստած էր այնպիսի ուժգնութեամբ, որ յետ նայելու համար Գասպարը գայլի պէս կէս պտոյտ էր անում: Կողերից լայնացած և վերից սղմած խոշոր գանգը, ցածր ու դաժան ճակատը մի տեսակ յիմարական բրտութիւն ունէին, որ առաջին հայեացքից խիստ ու անախորժ տրպաւորութիւն էին գործում: Այդ տպաւորութիւնը սակայն, վայրկենապէս մեղմանում էր նրա աչքերի հեզ, անուշ արտայայտութեամբ. նա նայում էր սովորաբար մի աչքը նեղացնելով փակելու չափ և միւսով ասես լուռ ժպտում էր, կոշտ այտերը գրեթէ չէին երևում սև մազերի թանձրութեան տակ, որ բարձրանում էր մինչև աչքերը, իջնում, խառնւում բեխերին, և թողնելով ազատ միայն լայնըռունգ քիթը, և վարի հաստ

կողքին, հեալով, պաշտամունքի երկիւղածութեամբ, նայում էր թէ ինչպէս ըստ երևոյթին անհոգ անկարգ հարւածները շղկապւում, ներդաշնակւում են և մէկ էլ տեսար ծաղիկը բացւեց, կամ ոստը փուեց քարի վրայ վարպետի հրաշագործ ձեռքով:

— Հը՛, ես քու ձեռներին մատաղ, վարպետ, բացականչում էր նա, բերանաբաց, վարի շրթունքը դողդոջուն, աջ աչքը չռած զարմանքից և ձախը իսպառնեղացրած: Նա պատրաստ էր այդ ժամերին լեռները փուլ բերել, անդունդներն իջնել լաւագոյն քարերը դուրս շորթել երկրի կրճքից, միայն թէ վարպետը «նախշի», սրբատաշ քարերին շունչ ու լեզու տայ:

Այդ վայրենի, այդ բիրտ արտաքինի տակ թագնւած էր միամտօրէն քնքոյշ, նըրբագոց հոգի: Նա ոչ միայն հասկանում ու բաժանում էր վարպետի գործի յափշտակութիւնները, այլ և եղբօր պէս ապրում էր նրա խնդրութիւնն ու ցաւը:

Գասպարը երեխայի պէս լալ գիտէր, բայց միշտ ծածուկ աշխարհից...

Թաթուլին հասած ահագին աղէտի կսկիծը նա բաժանել էր լռելեայն. տանջւել էր նրա ցաւով, ամենքից ծածուկ սզացել էր Մարանի մահը, և կրճքի տակ արցունք թա-

փել: Այժմ էլ տարիներ յետոյ՝ երբ նկատում էր Թաթուլի յօնքերի կնճիռը, աշխատում էր էլ աւելի կամակատար, էլ աւելի հաճելի լինել, որևէ կերպով նրա ցաւած սիրտը չը դառնացնելու համար: Եւ հաճելի լինելու իր ճիգերի մէջ նա միշտ անհեղեղ էր, ինքնուրոյն մտածածը՝ երեխայական, շարժումներն աններդաշնակ, երբ շտապում էր արագութեամբ կատարել վարպետի կարգադրութիւնները: Թաթուլը նկատում էր այդ, ժպտում էր ու տրամադրութիւնը փոխում:

Այսօր էլ Գասպարը վայրկենապէս նըկատեց, որ վարպետին բան է պատահել:

Թաթուլը փոխանակ իսկոյն գործի կենալու, նստեց մի քարի վրայ, ծնկները գրկկեց, նայում էր լեռներին ու սուլում մեղմիւ:

Գասպարը գիտէր, որ այդ վատ նշան է ու մտածում էր ի՞նչ անել:

— Գասպար, ասաց յանկարծ Թաթուլը. արի քեզ պսակենք:

— Հի, հի, հի... վա... վարպետ... հի, հի հի... վարպետ. Գասպարը ծիծաղում էր ցընցելով իր ահագին ուսերը:

— Պառաւեցիր Գասպար, պսակիր, շարունակեց Թաթուլը ժպտադէմ նայելով նրան:

— Կնիկ... ինչի՞ համար կնիկ... հի, հի, հի... Թոնիր վառի, հի, հի, հի...

— Ապա, Թոնիր կը վառի, երեխայ կը բերի:

— Երեխայ... հի, հի, հի... վարպետ, երեխայ, կնիկ... ինչպէս կնիկ... հի, հի, հի, կնիկ չը կայ ախր...

Թաթուլը ծիծաղը չը կարողացաւ պահել, այն աստիճան խղճալի էր իր լաւ ընկերը:

— Կնիկ չը կա՞յ... սո՛ւ Մարուգենց Սօնան:

— Թմփլիկ Սօնան... էն օրն ուսիս զարկեց ծիծաղեց... չի առնի... սո՛ւ, քեզ կառնի վարպետ... համա չէ, չէ... շատ է ծիծաղում, մէկէլ վարպետ, բէխէր կնիկ է, գլխակեր... մէկ նշանածը մեռաւ... մէկ էլ մարդը... հի, հի, հի...

Թաթուլը կրկին լռեց, կրկին ժպիտը կորաւ դէմքից ու մտախոհ հայեացքը ուղղեց դէպի լեռները:

Գասպարը շարել էր. չը գիտէր ինչ անել, վարպետի թախիծը ցրելու համար. յանկարծ նա մօտեցաւ, Թաթուլի ձեռքից քաշելով տարաւ դէպի մի փոս և ձեռքով ցոյց տւեց մի քար:

— Էս առաւօտ բաց արի, ասաց նա.

Թաթուլը կանգ առաւ հմայւած. նրա վարպետ աչքի առաջ ընկած էր մի ահա-

գին, սևաթոյր քար, բաց վարդագոյն գը-  
ծերով, ինչպէս երակներ, որոնք տեղ-տեղ  
իրար անցնելով, հանգոյցներ էին կազմում  
զարդարելով ամբողջը սքանչելի ծաղկափն-  
ջերով:

— Լճն է, համ, ասաց Գասպարը, գոհ ու  
երջանիկ, որ կարողացաւ իր վարպետին հա-  
ճոյք պատճառել, հետաքրքրել, այ, էս տեղ  
էլ կայ էս քարից. Գասպարը ցոյց տւեց  
նրանց դէմ ու դէմ, լեռան լանջից կախած  
մի ահագին մոխրագոյն ժայռ:

— Ինչ գիտես.

— Բարձրացայ սարը, իջայ վրան տե-  
սայ, վառօդով քանդենք, վարպետ: Թաթու-  
լը լուռ էր. երկար նայում էր մէկ ժայռին,  
մէկ առաջի քարին, մտախոհ, հմայւած:  
Գասպարը մի աչքը կիսախուփ, միւսը լայն  
բացած, շրթունքը գողգողուն, դէմքին ժպի-  
տը քարացած՝ նայում էր ու սպասում, թէ  
ինչ կ'ասի վարպետը:

— Մուրճերն ու կտրոցները տուր:

Գասպարը բերեց գործիքները և ըստ  
սովորութեան լուրթեամբ հեռացաւ, խորա-  
պէս հաւատացած՝ որ վարպետը մի հոյա-  
կապ բան պիտի կերտի:

Սկսեց աշխատանքը:

Գասպարը փշրում էր, կտրում էր նո-

րանոր քարեր սարի կրծքից և աչքի տակով  
երբեմն նայում էր Թաթուլի աշխատանքին:

Երեկոյեան դէմ քարի անձև զանգա-  
ծից Թաթուլի հրաշագործ ձեռքի տակից  
դուրս էր եկել մի աննման յօրինւածք: Դա  
մի գերեզմանաքար էր, երկարուկ ու նուրբ,  
որպէս կանացի հասակը: Թաթուլը կոփել էր  
ու յղկել այն իր արւեստի բոլոր ճարտարու-  
թեամբ և յետոյ քանդակելու համար ուր-  
լագծել էր քարի կոկ մակերևոյթի վրայ գե-  
ղեցիկ խորհրդանշաններ:

Բաց-վարդագոյն երակները մուգ տախ-  
տի վրայ քմահաճ գալարներով զարդարում  
էին քարի կողերն ու մէջքը և իրենց միաց-  
ման կէտերում նուրբ հանգոյցներ կազմում,  
որպէս փթթած ծաղիկներ: Բարակ օձեր,  
որոնք իրար պոչը կրծոտելով, փարում էին  
իրար, բարձրանում, պտոյտներ գործում,  
վար իջնում եգերելով քարը իրենց մոայլ  
օղակների մէջ: Կետրոնում նետով խոցւած  
մի սիրտ, որից արիւնը ծորում էր. և նրա  
վրայ բարձրանում էր մի սգատերև ուռենի,  
որ կախկիսւած ոստերով հովանի էր անում  
ու լալիս էր խոցւած սրտի վրայ:

Թաթուլը կռացած սուր գործիքի ծայ-  
րով ուղադիր ու յափշտակւած դեռ գծա-  
գրում էր, երբ մօտեցաւ Գասպարը, կանգ

առաւ ու բերանաբաց, ապշած նայում էր նա չէր համարձակուում խօսել, հարցնել, թէ ի՞նչ է այդ, միայն նայում էր ու ժպտում:

— Հը՞, Գասպար, ի՞նչ կ'ասես:

— Վարպետ... վար... Գասպարը չը գիտէր ինչ ասել, հիացմունքը նրա լեզուն փակեց, միայն ժպտում էր աջ աչքը լայն չռած՝ ձախը դողդողացնելով:

— Մարանի գերեզմանաբարն է... երեք տարի է չէէ, որ անքար է, ասաց թաթուրը ոտքի կանգնելով:

Լուսթիւն տիրեց...

— Օղորմի իրան ասաց յանկարծ Գասպարը ցածրաձայն և աչքերը թացացան. ապա կամացուկ զնաց դէպի ձին, որ կանգ առած ժայռի տակ՝ նայում էր երկու ընկերներին իր մռայլ, մտախոհ աչքերով:

Ճանապարհ ընկան դէպի տուն. ձին տանում էր գործիքները, նրանք քայլում էին կողք-կողքի, լուսթեամբ:

Այգիների փողոցը կենդանացել էր. հօտաղները քշում էին անասունները ու աղջիկները խմբերով վերադառնում էին դաշտերից, բամբակաքաղից:

Նրգ, ծիծաղ, կատակ չորս կողմում.

Ընդհանուր տրամադրութիւնը համակեց և երկու ընկերներին:

— Որքն էս հաւանում, Գասպար, ասաց յանկարծ թաթուրը ցոյց տալով աղջիկներին:

— Հի, հի հի... վարպետ, դու գիտես:

— Այ, տես, ի՞նչ երկար ծամեր ունի Գօքօրենց Սաքանի աղջիկը, ի՞նչ կ'ասես, հըր՞...

— Վայ. Սօնան... հի, հի, հի...

Այն, այնտեղ էր նաև Սօնան. թաթուրը վայրկենապէս լռեց, յօնքերը կիտեց, բայց դարձեալ աչքի տակով նայեց նրա գոյգ ծամերին, մերկ սրունքներին և շտապեց առաջ անցնել:

Այն գիշեր թաթուրը դարձեալ անքուն էր:

Նա մերթ երևակայում էր հեռու քարահանքի գործը, այն սիրուն քարը, յօրինում էր նորանոր քանդակներ, զարդարում էր կողերը նորանոր ծաղիկներով և յանկարծ աչքի առաջ ցցւում էր Սօնան, իր երկու ծամերով, որոնք խայտում էին նրա գիրգ թիկունքին, և որոնց ծայրերի փնջերը հեգնօրէն ցցւած վեր, խանդավառ ու տարփոտ՝ շոյում էին նրա հայեացքը:

Ու զայրանում էր ինքն իր վրայ, զայրանում էր Սօնայի վրայ, որ այդ օրը սատանայի պէս երկու անգամ իր ճամբին դուրս եկաւ: «Անամօթը...» մոմուում էր նա ստամբերի արանքից: Երևակայութեան ցա-

ւագին ճիգով դուրս էր քաշում անցեալի մշուշի միջից Մարանի պատկերը, այն գարմանալի պատկերը, որ երազներից էր հիւսւած արշալոյսի պէս շողշողուն:

Մեղմիւ գրկեց կողքը պարկած Բարիկին, համբուրեց խենթ սիրով, յետոյ հոգու խորքում մի պատւար փլաւ, արցունքը հեղեղեց կուրծքը, և նա երկար երկար լալիս էր հեկեկալով:

— Թաթուլ ջան... Թաթուլ ջան, վայ քոռանամ ես...

Մայրն էր, որ խաւարի մէջ վաղուց հըսկում էր դժբաղտ զաւակին, հետևում էր նրա անհանգիստ շնչառութեանը, նրա մեղմ տընքոցին:

— Թաթուլ ջան, որդի, մի սպանիր մօրդ, ախր կը մեռնեմ էէ, կը մեռնեմ, բալաս, դարդիդ մատաղ, թող մեռնեմ, թաղիր ինձ, յետոյ դու գիտես...

Թաթուլը սսկւեց, հանգստացաւ, բայց խաւարի մէջ դեռ երկար լսում էին պառաւ մօր մեղմ հեծկլտանքներն ու ալօթքի մրմունջները...



## III

Հինգ տարին արդէն լրացրել էր Բարիկը, երբ իրար յետևից մի քանի խոշոր անցքեր տեղի ունեցան և տակն ու վրայ արին նրա կեանքը, նրա փոքրիկ աշխարհը:

Նախ՝ հայրը միրուքն ածիլեց և իսպառ կերպարանափոխւեց. յետոյ տանը մի օտար կին յայտնւեց Մարուզենց Սօնան, ու տատիկն ասաց թէ «նրան» պէտք է կանչել «մայրիկ». և երրորդ՝ ամենից խոշորը — այս երկու անցքերից մի քանի ամիս յետոյ այն լաւ տատիկը յանկարծ անկողին ընկաւ, մի քանի օր մեղմիւ տնքաց ու մեռաւ:

Այս անցքերից իւրաքանչիւրը տարբեր ներգործութիւն արեց Բարիկի կեանքի վրայ, տարբեր յոյզեր ու տրամադրութիւն յարուցեց նրա հոգում: Ածիլած միրուքով հայրը շատ զւարճալի էր. Բարիկը մի քանի օր անընդհատ պատեն առիթին քաշքշում էր հօր

բեխերը ու հարցնում, թէ ո՞ւր է միրուքը, ո՞վ տարաւ. հայրը պատասխանում էր, թէ մկները գիշերը իր քնած ժամանակ կրծոտել են կերել:

— Ես մկներին կ'սպանեմ:

— Հն, Բարիկ, սպանիր մկներին, որ երբ մեծանաս, քո միրուքը չը կրծեն:

Եւ մանուկը շուտով հաշուեց հօր կերպարանափոխութեան հետ — ծնողինոր պատկերը նրա համար նոյնքան գրաւիչ ու սիրելի էր, որքան առաջինը:

Այլ էր այդ անծանօթ կնոջ, այդ «մայրիկի» առեղծածը: Տատիկն ասում էր, թէ սա Բարիկի մայրիկն է, հեռու տեղ էր գնացել ու վերադարձաւ եկաւ: Բայց Բարիկը լաւ է յիշում, որ երբ վերջին անգամ գերեզմանատանն էր, մի սիրուն նաշխած քար կար մի գերեզմանի վրայ, հայրը լալիս էր ու ասաց.

— Բարիկ ջան, մայրիկդ այստեղ է պարկած. յիշում է նոյնպէս, որ տատը բարկացաւ, թէ ինչո՞ւ է հայրիկն այդպէս ասում:

Ուրեմն մայրիկը հեռու տեղ չէր գնացել, այլ այն քարի տակ պարկած էր, վերկացաւ, եկաւ, մտածում էր երեխան, ու սաստիկ կ'ուզէր էլի մի անգամ գնալ գերեզմանատուն աչքով տեսնել, շուռ տւե՛լ են

քարը, բայց է մօր գերեզմանը: Եթէ ոչ, ինչպէս է դուրս եկել քարի տակից...

— Տատիկ, ե՞րբ կ'երթանք գերեզմանատուն:

— Ինչի՞ գնանք, բալիկ:

— Գնանք մայրիկի մօտ:

Պառաւր գլուխն օրօրեց ու լռելեայն նայեց հարսին. նրանց հայեացքներն իրար հանդիպեցին պառաւինն աղբրսական, հարսինը մութ, անհասկանալի:

Անպատասխան մնացած երեխան տանջւում էր մեռած մօր և այս նոր «մայրիկի» շուրջը դարձող հարցերով. տանջւում էր ու ելք չէր գտնում:

Եւ նրա ցաւը մենակ այդ չէր:

Բարիկը չէր սիրում այս «մայրիկին», և... վախենում էր նրանից:

Սօսան այդ նկատում էր, ու թէև հոգու խորքում գայրացած ու գրեթէ ատելութեամբ, բայց առհարկի աշխատում էր քնքոյշ լինել դէպի երեխան, գուրգուրել, փաղաքշել նրան: Իզո՞ւր. Բարիկն աւելի էր խոյս տալիս, աւելի էր վախենում, մանաւանդ՝ երբ հայեացքը հանդիպում էր նրա կոլորկապոյտ աչքերին, որոնց խորքում մանուկը մի բան էր տեսնում, անծանօթ ու մութ բան... և միշտ մի թեթև սարսուռ էր զգում

և երեսը դարձնում աշխատելով բնաւ չը նա-  
յել խորթ մօր երեսին:

Մի լուռ պայքար էր սկսւում այդ կնոջ  
և այս փոքրիկ երեխայի մէջ, մէկը վար-  
պետօրէն նենգ ու թունոտ, միւսը՝ անմե-  
ղօրէն վախկոտ, թոյլ և զինւած միայն իր  
յստակ հոգու բնազդով: Սօնայի սկզբնական  
հակակրանքն ու սառնութիւնը դէպի այդ  
երեխան կամաց կամաց թանձրանում, դառ-  
նում էր բուռն ատելութիւն այն օրից, երբ  
նա իմացաւ, որ Բարիկն իր աչքերի մէջ  
կենդանի ու հրապուրիչ պահում է մօրը: Այդ  
պառաւ կեսուրն ասաց մի օր անմեղօրէն գո-  
վելով իր թոռանը: Այնուհետև միայն Սո-  
նան հասկացաւ, թէ ինչու թաթուրը այն-  
պէս քնքշութեամբ, այնքան խենթ յափշտա-  
կութեամբ յաճախ համբուրում է Բարիկի  
աչքերը, յետոյ նայում է նրա բիբերին եր-  
կանք, երկանք... Կատաղի խանդոտութիւնն ու  
ատելութիւնը օր աւուր ածում էր նրա հո-  
գում դէպի փոքրիկ երեխան և այլ ևս ան-  
տարբեր չէր կարողանում նայել նրան: Այդ  
երեխան նրա աչքում իր կենդանի ու ամե-  
նագօր հակառակորդն էր, որ առաւօտից երե-  
կոյ շարժւում էր իր աչքերի առաջ, տի-  
րում էր հօր սրտին, և անգիտակցաբար պինդ  
պահում էր նրա հոգում այն տեղը, որ մի

օր իր հարազատ մօրն էր պատկանում:

Բարիկն զգում էր իր հետևից օձի պէս  
սողացող ատելութիւնը, բայց քանի տատը  
կար, փոյթը չէր, նա խոյս էր տալիս մօ-  
րից, փաթաթւում տատի փէշերին, առա-  
ւօտից երեկոյ նրա հետ շրջում, կողքին  
նստում, կամ գլուխը դնում էր ծնկանը,  
կրծքին ու հանգստանում, գիշերներն էլ նա  
պարկում էր տատի գրկում, փոքրիկ թա-  
թիկները միշտ նրա պառաւած ստինքնե-  
րի վրայ, ու քնում էր, աշխատելով բնաւ  
չը մտածել այս «մայրիկի» մասին, որից  
վախենում էր, և հասկանալ չէր կարողանում,  
թէ ի՞նչ ունի նա իրենց տանը, իր հօր հետ:

Սօնան անգօր էր այդ փոքրիկ արարա-  
ծի հանդէպ և ինչ որ աւելի ծանր էր, նա  
չէր կարողանում իր ատելութեանը ընթացք  
տալ, ստիպւած էր նոյն իսկ կեղծել, քնքոյշ,  
գորովալի ձևանալ, ստիպւած էր սիրող, քնն-  
քոյշ մօրիկեր յանձն առնել, փաղաքշել, ժրպ-  
տալ երեխային, որի մահը կը համարէր իր  
մեծագոյն երջանկութիւնը:

Պառաւը խորունկ ցաւով տեսնում էր  
հարսի ծածուկ և թունոտ ատելութիւնը դէ-  
պի իր պաշտած թոռը. փորձեց մի քանի ան-  
գամ մեղմ ախարկներով հասկացնել Սօնա-  
յին իր արարքի տգեղութիւնը, որ «նչ Աս-

տծուն դուր կը գայ և ոչ աշխարհին» ասաց պառաւը:

Ի դուր. սրտի գործ էր. իսկ ատելութեան ու սիրոյ մէջ սրտի օրէնքներն անհասանելի են ու անսանձ ինչպէս աւերիչ հողմ: Սօնան պատասխանում էր պաղ, քարացնող հայեացքով:

Եւ պառաւը մեռաւ կսկիծով, թողնելով Բարիկին միանգամայն որբ:

Թաթուլը նախատեսնում էր մօր մահը. նրա թախանձանքին էր զիջել ու ամուսնացել. Սօնան էր նրա կինը. ինչո՞ւ Սօնան և ոչ մի ուրիշը. «միւսնոյն չի, ո՞վ, երբ Մարանը չը կայ». մտածում էր նա:

Մահւան անկողնում մայրը որդու ձեռքը բռնեց.

— Ամանաթ իմ Բարիկը քեզ ո՞րդի... կինդ... ես ի՞նչ գիտեմ...

— Մայրիկ, դու ասիր...

— Հա, որդի, ես ասիր... դէ, երկրորդ կին է... խորթ մայր... յետոյ էլի ուրիշ բաներ ունէր պառաւ կըծքի տակ կուտւած, բայց, լո՞ւնց չ'ասաց.

Նա չ'ասաց, որ մեռնում է ահագին վշտի բռնի տակ խորտակւած, որ հարսը դրեց նրա սրտին. չ'ասաց, որ Սօնան երեկոները, երբ Թաթուլը տանը չի, յաճախ է նստում

բակի դրանը, ժպտում է գիւղի ջահիլներին և մանաւանդ շինական գրագրին, որը այդ ժամերին շատ է անց ու դարձ անում փողոցում կասկածելի հայեացք նետելով դէպի Սօնան: Չ'ասաց որ խորթ մայրն ատում է Բարիկին, և դժնդակ ու սև պիտի դառնայ այսուհետև խեղճ երեխայի օրը. չ'ասաց, որ իր ծեր ալիքներն ու կնճիռները հարսը յաճախ է անարգանքի ենթարկել:

Լո՞ւնց այս բոլորը, որովհետև օգուտ չը կար խօսելուց, և ինքն էր յորդորել զաւակին ամուսնանալ, ինքն էր դնացել Մարուգենց Սօնայի ձեռքը խնդրել Թաթուլի համար: Ու մեռաւ ծեր կինը իր հետ գերեզման տանելով մի մութ ու ծանր վիշտ:

Թաթուլն այսուհետև ապրում էր ինչպէս մշտական մղձաւանջի մէջ. կեանքը իր անակնկալներով նրան մղում տանում էր հեղեղի պէս և նա էլ չէր պայքարում, այլ խորհում էր: Շատ էր աշխատում, և վերջին ժամանակները նաև յաճախ խմում էր: Կինը նրա փշրւած կեանքին յենարան ու թարմութիւն չ'եղաւ. գոհ էր, որ իր բացակայութեանը Բարիկին խնամող, նայող կայ, գոնէ նա այդպէս էր հաւատացած. և նրան թւում էր, թէ իր կեանքի գիրքը փակւեց. այլևս գրելիք չը կայ:

«Աշխարհը մի փանջարայ է,

«Ամեն եկող կը նայի ու կ'անցնի...»  
կրկնում էր նա յաճախ հին, իմաստուն ասացածքը:

— Գասպար, շուտ հասանք «փանջարային» բարեկամ:

— Հա... հասանք... կրկնում էր վարպետի խօսքը Գասպարը:

Բարիկն էլ կծկեց ու խեղճացաւ. մօր աչքերի մէջ փայլող կատաղի ատելութեան, իր շուրջը հեացող վտանգի դէմ նա էլ ապաստան չ'ունէր. տատի մահով՝ նա գլխովին որբացաւ և պաշարւած վախուկ փոքրիկ այծեամի պէս չը գիտէր ո՞ւր փախչել, ո՞ւր պատմել, ո՞ւր օգնութիւն խնդրել, երբ մնում էր մեն.մենակ մօր բացարձակ իշխանութեան ու քմահաճոյքի տակ:

Երեխան դուրս էր փախչում տնից, թափառում էր փողոցներում հասակակից երեխաների հետ, միշտ ոտաբօքիկ, կեղտոտ, պատառոտուն ու քաղցած, և վերադառնում էր միայն ուշ երեկոյին: Մայրը բնաւ չէր հարցնում, թէ ո՞ւր էր, ինչու էր գնացել և ինչո՞ւ այդպէս ուշ է վերադառնում տուն: Իսկ եթէ որեւէ պատճառով տանն էր մնում, ժամերով նստում էր Զօմառի կողքին, խաղում էր նրա հետ, փաթաթում էր պարա-

նոցին, դունչը քաշքշում կամ բարձրանում էր թթի ծառը և այնտեղից տերևներ թափում կենդանու գլխին, որ աշխատում էր բերանով բռնել:

Մի քանի անգամ փորձեց համոզել հօրը, որ իրան տանի հետը ուր և լինի. հայրը չը հասկացաւ, ու երեխան դարձեալ մնաց լըքւած, վշտաբեկ սրտով, մենակ մատնւած խորթ մօր կապոյտ աչքերի փայլին, որոնք հալածում էին նրան դաւադիր կրակով:

Բարիկը մաշոււմ էր, գունատոււմ. նրա փոքրիկ հոգին մխում էր լռելեայն, և ըզգում էր ինչպէս մի անագին աղէտ քայլ առ քայլ մօտենում է:

Երջանիկ մանկութիւնը շամանդաղի պէս անցաւ և զարթեց տանջանքը...

Եւ մի օր երեկոյեան, երբ արդէն մութը կոխել էր աշխարհը ու նա տուն դարձաւ, իրենց բակում մօր հետ կանգնած խաւար անկիւնում մի մարդ տեսաւ, մի փոքրիկ, նիհար մարդ, որ հագին չուխայ ունէր, արծաթապատ խէնջար, սպիտակ մորթէ գլխարկ, երկարավիզ կօշիկներ. Բարիկը կանգ առաւ քարացած՝ ու նայում էր. մարդը վայրկենապէս ծածկեց կատուի զգուշութեամբ, մինչդեռ շունը կատաղօրէն ձգձգում էր շղթաները, ծառանում էր, պոկւելու հա-

մար դէպի անծանօթը. Սօնան մտաւ տուն-  
 Բարիկը ներս չը գնաց, նստեց շան կողքին,  
 նրան փայփայեց հանգստացրեց ու մտածում  
 էր, ո՞վ էր այդ մարդը, ի՞նչ էր անում բա-  
 կում, ինչ էր խօսում մօր հետ: Այդ սուե-  
 րի պէս անյայտացած փոքրիկ մարդը ա-  
 հագին սոսկում էր թողել իր յետևից և ե-  
 րեխան դողում էր մութ, անորոշ սարսա-  
 փով բռնւած: Բակը, տունը նրան խեղտում  
 էին և մի վայրկեան մտածեց դուրս փախ-  
 չել, գնալ, գնալ և այլևս երբէք չըվե-  
 րադառնալ. գնալ, բայց ո՞ւր... Իսկ եթէ այն  
 մարդը գիշերն էլ գայ... «կը գայ, կը գայ»  
 մտածում էր նա. և... չը գիտէր ինչ կ'անի,  
 բայց հաւատացած էր, մի չար բան, մի ա-  
 նիրաւ, անողորմ բան...

— Բարիկ, այ Բարիկ. լուեց Սօնայի  
 ձայնը...

— Ի՞նչ է, մայրիկ:

— Քաղցած չե՞ս. արի հաց տամ կեր:

— Չէ: Մայրը կրկին ծածկեց. նրա  
 ձայնը այսօր առանձին քնքշութիւն ունէր,  
 և առաջին անգամն էր նա Բարիկին հացի  
 կանչում:

Այն գիշեր Բարիկը մի քանի անգամ  
 զարթնեց սարսափով և մի քանի անգամ նը-  
 կատեց, թէ ինչպէս մայրը ներս ու դուրս

է անում, մինչդեռ Չօմարը հաշում է կատա-  
 դաբար:

Յաջորդ առաւօտ՝ մայրը շատ անուշ,  
 շատ սիրալիր էր. նա միրգ տուեց Բարիկին,  
 և՛ կօնֆետ, և՛ չամիչ ու ընկուղ. ու պատ-  
 ւիրեց հայրիկին չ'ասել, թէ «այն մարդը»  
 եկել էր իրենց տուն:

— Լսում ես, Բարիկ, որ չ'ասես, էլի  
 կանֆետ ու չամիչ կը տամ, չը պէտք է ա-  
 սես, թէ չէ լաւ չի լինի:

— Չեմ ասի, մայրիկ:

— Ուրիշներին, դրսի երեխաներին էլ  
 չ'ասես:

— Չեմ ասի, մայրիկ:

— Ա՛յ, հայրիկին կ'ասեմ կտոր առնի,  
 նոր շոր կարեմ քեզ համար:

— Հա՛, մայրիկ:

— Իմ Բարիկը խելօք տղայ է:

— Հա՛, մայրիկ, կրկնում էր երեխան  
 մեքենայաբար:

Ո՛չ, Բարիկը հայրիկին չի ասի: Ոչ ոքի  
 չի ասի, ոչ թէ նրա համար, որ մայրը միրգ  
 տուեց, խոստումներ արեց, այլ որ լուրթեան  
 պատուէրը տալիս՝ ասաց՝ «վատ բան կը պա-  
 տահի» և նայում էր նրան իր կապոյտ աչ-  
 քերի պաղ պողվատի փայլով, նայում էր այն-  
 պէս, որ մանկան անմեղ հոգին սարսուռում

էր, ինչպէս փետրագուրկ ձագուկը աշնան սառը հովի շնչի տակ: Եւ նա մինչև այժմ էլ իր սև օրը միշտ լուել էր հէնց այդ էգ վագրի կատաղի աչքերի սարսափից:

Այնուհետև «այն մարդը» դարձեալ մի քանի անգամ սոււերի պէս երևաց իրանց տանը ուշ գիշերներին, Բարիկը տեսաւ, դողաց, կծկեց անկողնում, ու լուեց:

Հայրը գալիս էր, գնում, և Բարիկը լուռ էր, նոյն իսկ բնաւ չէր խօսում, ժամերով նստում էր հօր կողքին, և լուում էր: Հօր փաղաքշանքներին պատասխանում էր անտարբերութեամբ, զժկամակելով: Միայն կուզէր գնալ նրա հետ, ազատել այս տնից, ուր այլևս ոչ ոք չը կար, որի մօտ իր հօգին ջերմանար: Նա վախենում էր իրենց տնից, մօրից, գիշերներից և մանաւանդ «այն մարդից», որ ամեն անգամ յայտնւում էր, երբ հայրը մի քանի օրով բացակայում էր:

Եւ այդ գիշերները... խաւարը բոց էր դառնում, ու լափում երեխայի մարմինը. աչքերն արցունքով լի՝ նա կծոտում էր շրթթունքները չը ճշալու համար: Վախենում էր առանց ոչինչ հասկանալու այն ահաւոր գաղտնիքից, որ խորթ-մայրը բիրտ, անողորմ ձեռքով տեղաւորել էր նրա հոգում մի փունջ տատասկի պէս և պատւիրել էր լուել: «Եւ

այդ տատասկը ծակոտում, խոցոտում, արնոտում էր նրա մատաղ, խղճուկ սիրտը, քամում, տրորում էր նրա հոգին, և դժբաղդ մանուկը մեռնում էր մաս մաս:

Եւ որպէս ծայրայեղ միջոց, երբ մի անգամ հայրը դարձեալ տուն եկաւ, երեխան վճռեց անպատճառ նրա հետ գնալ. կ'ընկնի ձիու առաջը, ոտներին կը փարի, կը ճշայ, կը թաւալի գետին, բայց կ'երթայ հօր հետ, անպատճառ կ'երթայ: Այսպէս վրձուեց երեխան և մտախօս սպասում էր հօր մեկնելու օրին:

Երբ հայրը պատրաստւում էր մեկնել, երեխան վազեց ձիու առաջը փակեց:

— Հայրիկ ջան, հայրիկ, ինձ էլ տար հետդ, ձեռքերը տարածած՝ աղերսում էր մանուկը, ինչպէս ծովում խեղդողը:

— Չէ, բալիկ ջան, սըր գաս, գնում ենք շատ հեռու, ուրիշ գեղեր, մի շաբաթ չենք գայ, ինչ անես այնտեղ, այ երբ գնալու լինենք քարահանք, քեզ կը տանեմ:

— Հայրիկ ջան, տար ինձ հետդ, հայրիկ, ես ոտքով կը գամ, ես ձին կը պահեմ:

— Չէ, մատաղ, մնա տանը, քեզ համար տես ինչեր կը բերեմ:

— Հայրիկ, հայրիկ...

Հայրը հեռու էր... երեխան ճչում էր,

լալիս, թափ առաւ, վազեց նրա յետևից, ի-  
զուր... հայրը անողոք մնաց:

Բարիկը յետ եկաւ, նստեց բակի պա-  
տի տակ, գլուխը ձեռներին մէջ առաւ, և եր-  
կար, երկար լալիս էր դառնացած:

Դեռ երբէք նա իրան այդպէս որբ, այդ-  
պէս անտէր չէր դպացել:

Սօսան մօտեցաւ նրան, նստեց կող-  
քին, փորձում էր հանգստացնել, գլուխն էր  
շոյում, շորերը թափ տալիս, քաղցը խօսքեր  
ասում: Մանուկը ճակատը բարձրացրեց, և  
երբ հայեացքը խորթ մօր աչքերին հանդի-  
պեց, ոտքի թռաւ, շեշտակի վազեց դէպի դու-  
ռը և անյայտացաւ փողոցում:

Չօմառը կաղկանձում էր նրա յետևից:

Եւ թթենին մեղմիւ օրօրում էր իր գլուխը:



## IV.

Աշուղ Սարհաղը իր կնճիռներով պատած  
դէմքը դէպի վեր ու աչքերի սև խոռոչնե-  
րով ցաւագինօրէն ցոլքեր որոնելով երկըն-  
քում, ծլատում էր իր հինաւուրց սազը:  
Դէմքի վրայ ոչ մի ջիղ չէր շարժում, պաղ  
ու անյոյզ, նա նւագում էր ասես երկնքի  
համար. ուր նայում էր, և որտեղից քաղում  
էր ներշնչումներ: Ու մի ժպիտ, որպէս  
ծերուկ ժայռի մի խորշում, քարացել  
էր նրա շրթունքների երկու եզրերին. նա  
ժպտում էր, երբ սազը լալիս էր, ժպտում  
էր, երբ աշխարհը ցնծում էր կարճատև վա-  
յելքին անձնատուր:

— Գինի եմ ասում էէ, խմեցէք, թէ  
Աստուած կը սիրէք, կանչում էր թաթուլը:  
Սեղանակիցներն էին՝ քահանան, մի քանի  
ուրիշ արհեստակիցներ և շինական գրագիրը:  
Բարիկի անւանակոչութեան տօնն էր:

— Լաւ օր է, խմեցէք, Աստուած սիրէք,  
հրաւիրուամ էր Թաթուլը:

Ամեն տարի այս օրը Թաթուլի համար  
տօն էր. նա անպատճառ խնճոյք կը կազմէր  
և անպատճառ լաւ կը խմէր:

Պասպարը ըստ սովորութեան, ոտքի՝  
տանտիկնոջն էր օգնում, գինի և ափսէներ  
բերում տանում:

Բարիկը՝ նոր շորեր հագած, սանրւած,  
մաքուր, նստած էր հօր կողքին. նա անու-  
շաղիւր էր դէպի շրջապատի անց ու դարձը,  
խօսքն ու ծիծաղը. նրան չէր գրաւում ոչ  
Սարհաղի սագը, ոչ նրա նօսը, ձերմակ մի-  
րուքը, որ գլխի և ձեռքի շարժումների հետ  
ցնցւում էր աշուղի կրծքին և ոչ էլ հօր փա-  
ղաքշանքներն ու համբոյրները: Նրա ուշա-  
դրութիւնն ամբողջապէս կլանել էր այն փոք-  
րիկ, նիհար, գեղնագոյն մարդը, որ կատուի  
պէս սուր բեխեր ունէր ու պլստան մանր  
աչքեր:

Ո՞վ էր այդ մարդը, նա ասել չէր կա-  
րող, բայց Բարիկը վախենում ու զգւում էր  
նրանից նոյնքան, որքան այն խորհրդաւոր  
սոււերից, որ հօր բացակայութեանը, գիշեր-  
ները գաղտագողի տեսնւում էր մօր հետ, և  
որի մասին նա պիտի լռի, լռի, ահա ամիսնե-  
րից ի վեր լռում է: Զգեստը՝ սակայն նման չի.

«այն մարդը» միշտ գալիս է չուխայով ու  
խէնջարով. իսկ սա քաղաքացու սև շորեր  
ունի, մտածում էր երեխան:

Ու սատանայի պէս այս մարդը նստած  
է Բարիկի կողքին, բոլորովին մօտ. երեխան  
նայում է կողքից և գողտուկ, երբ նկատում է  
նրա սուր բեխերը ու դեղին, անախորժ դէմքը,  
կծկւում է հօրը մօտ, մօտ, աշխատելով էլ չը  
նայել, մի վայրկեան յետոյ՝ նա կրկին նա-  
յում է գաղտագողի ու կրկին կծկւում:

— Տեսնում ես ի՞նչ տղայ է, Մարտին  
բէգ, ասում է Թաթուլը դիմելով նոյն մար-  
դուն, աչքերին նայիւր էէ, աչքերին... հը՛ր,  
քանիսը կը գտնես քաղաքում, տես ի՞նչ է  
դառնալու, ըհ, ես սրա հոգուն մատաղ, Թա-  
թուլը պինդ համբուրում է Բարիկին: Մար-  
տին-բէգը լուռ ժպտում է, փորձում է շոյել  
երեխայի գլուխը, ձեռքն է վերցնում քրն-  
քշութեամբ. Բարիկը խոժոռւում է, յետ քա-  
շում ձեռքը և նետւում է դէպի հայրը:

— Պասպար, գինի բեր, գինի՛ի...

Պասպարը մտածկոտ է, մտորումներ  
կնիք կայ ձախտին. շարժումներն աւելի ան-  
ձուռնի են. նոյն իսկ մի երկու անգամ շիշեր  
ու ափսէներ վար ձգեց ձեռքից ու կոտրեց.  
սեղանակիցները ընդհանուր բրբիչ բարձրա-  
ցրին: Նա կարմրեց, յետ փախաւ, քիչ յե-

տոյ կրկին յայտնուեց աւելի շփոթեալ, աւելի խռովայոյց. այլևս ոչ ոքի չէր նայում բացի գրագրից և երբեմն կանգնում է նրա գլխավերևն ափսոսանքով, ասես պատրաստուած էր ոտքի մի հարեալով փշրել նրա մէջքը:

— Տէրտէր, աջիդ մեռնիմ, կենաց ասա, կանչում է թաթուլը:

— Բարիկի կենացը, որդի, բարով կանաչ-կարմիրը կապենք:

— Բերան խօ չի, տաճար, տաճար, հայ բերնիդ մատաղ, հայր ջան, թաթուլը համբուրում է Բարիկին և լիքը բաժակը դատարկում: Աստուած սիրէք, լիքը խմեցէք, յորդորում է նա: Բաժակները դատարկուած են ցնծութեամբ. սազը հեծկլտում է, ու աշուղ Սարհադի ծեր, խոպոտ ու յուզոտ ձայնը հնչում է տաքացած գլուխների վրայ, զարկում է բարկ ճակատներին որպէս աշխարհի անքուն ցաւի մրմունջ:

— Թաթուլ, քո կենացը, որդի, շարունակում է քահանան, ընտանիքիդ կնոջը կենացը, մի բարձի ծերանաք, որդի, ծլիք, ծաղկէք:

Թաթուլը բաժակը բարձրացրեց, մի վայրկեան գլուխը քաշ ձգեց մի ծանր մտքի տակ, ապա յանկարծ դիմեց կնոջը.

— Քո կենացը, այ կնիկ, Մարան, ջան Մարան...

— Սօնան սաստիկ կարմրեց ու գլուխը քաշ ձգեց:

Գասպարն ահանջներին չէր հաւատում. առաջին անգամն էր լսում, որ վարպետը իր երկրորդ կնոջը Մարան ասի:

Արդարև ամուսնութիւնից անմիջապէս յետոյ մայրը ըստ սովորութեան պահանջեց, խնդրեց, աղերսեց, որ թաթուլը երկրորդ կնոջը առաջինի անունով կանչի:

— Նրա փոխանակն է, որդի, համարիք գերեզմանից յարութիւն առած, Աստուած դրած կարգն է, պէտք է Մարան կանչես:

— Է՛հ, մէկ չէ՛, մայրիկ:

— Չէ, որդի չէ:

Թաթուլը հոգու խորքում դառնօրէն մըտածում էր. «Մարան... ո՛ւր է ապա նրա հասակը, նրա աչքերը, շրթունքները, ո՛ւր է նրա աջ այտի խալը, այն երկար պարանոցը եղնիկի, Մարան...»

— Մայրիկ, որ Աստուած կամենար, նրան չէր տանի էլի, չէ, սա, Սօնա է...

Գասպարն այդ բոլորը շատ լաւ գիտէր. և այժմ՝ յանկարծ Մարան, այն էլ բազմութեան մէջ:

— Խմիր, անպէր ջան, դիմեց թաթուլը Գասպարին, տես դեռ ողջ-առողջ եմ:

Գասպարը ահնարկը հասկացաւ. «գլուխը»

խակեր» մտածեց նա յիշելով իր ասած խօսքը. բաժակը ձեռքին դողում էր կանգնած տեղը, մէկ թաթուկին, մէկ Սօնային, ու մէկ էլ գրագրին նայելով և չէր խմում:

— Խմիր, Գասպար:

Ո՛չ, Գասպարը չէր կարողանում խմել «էս Մարանի» կենացը. մի անախորժ շշուկ, որպէս քամու բերած նուրբ գարշահոտութիւն հասել էր Գասպարին Սօնայի և գրագրի յարաբերութեան մասին, և նրա անմեղօրէն վայրի հոգին ալեկոծել. պէտք էր, որ հէնց այժմ թաթուկը այս անիրաւ կնոջը «Մարան» կանչի. նա չէր կարողանում հաշտեցնել այս նւիրական անունը իր սրտում մխացող մութ գաղտնիքի հետ, և չէր կարողանում խմել:

— Խմիր, Գասպար, ես քո տղամարդ ասողի...

Գասպարը գունատեց, շրթունքները դողդողացին, դէմքը ծռմուռեց լալ պատրաստուող մանկան պէս. հոգում փոթորիկ էր. նա կարծես ուզում էր մի բան ասել, մի զարհուրելի, ահաւոր բան, մի կատաղի ճիչ արձակել, մռնչալ, յետոյ մէկին հարւածել, ձեռքի բաժակը մէկի գլխին շարտել, մէկի գանգը փշրել...

— Վա-վարպետ... Խոր...

Գասպարը չը կարողացաւ շարունակել. նրան թւում էր, որ վարպետից բացի, բոլորը գիտեն, որ այդ «Մարանը» նոյնքան վարպետի կրնն է, որքան այ այն զգեցի մարդու, որ ժպտում է լկտի երեսով ու աչքերով, ահա բաժակ է մեկնում դէպի Սօնան. բոլորն էլ խմելիս ժպտում են, բոլորն էլ հեգնում են, մտածում է Գասպարը. նրա հոգու գաղտնիքը, որ մի խորը վէրք է, շանգուում են անիրաւները... Ի՞նչպէս խմել, ո՞ւմ համար խմել...

— Խմիր, Գասպար, խմիր թէ ախպէր տղայ ես... ու թաթուկը կամացուկ դարձաւ Մարանի-բէգի ահանջին ժպտալով ասաց, թէ Գասպարը հարբել է, յետոյ երկսով էլ ծիծաղեցին...

Գասպարը այդ էլ նկատեց. այդ ծիծաղը երկաթէ լարերով մտրակեց նրա հոգին. նրա յօնքերը՝ թաւ ու ցցւած՝ վար կախուեցին, ձախ աչքն էլ շուտեց աջի պէս, ծնօտներն իրար սղմուեցին և յանկարծ մի վշտախառն ցասում նրա կուրծքը բանդեց, մի խեղդած աղաղակ բողբոջ. դա ո՛չ ծիծաղ էր, ո՛չ հեկեկոց, ո՛չ լաց էր, ո՛չ քրքիջ, այլ այդ ամենը միասին, մի վայրի, զսպւած հոնդիւն:

— Հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ հո՛ւսէ... ու Գաս-

պարը շարտեց բաժակը, որ փշուր փշուր ընկաւ, իսկ ինքը փախաւ ծածկեց:

Ընդհանուր խելայեղ քրքիչ բարձրացաւ, ամենքը հաւատացած էին, որ Գասպարը հարբած է և թաթուրը ամենքի հետ:

— Գասպարի կենացը, Գասպարի կենացը, բացականչեցին այս ու այն կողմից: Բաժակները դատարկուեցին, հոհուցը, քրքիջը աղմուկը երկար շարունակուեցին էր. Գասպարը էլ ահանջ չէր դնում. և տանը՝ մի խաւար անկիւնում ահագին ցաւից մեղմիւ հեծկլտաց. և առաջին անգամ իր կեանքում վշտացած էր վարպետից, որ նա «այն մարդին» տուն է թողել, որ նա Սօնային նրա ներկայութեամբ «Մարան» սասց. բայց և իսկոյն շտապեց մեղմացնել վարպետի արարքի ծանրութիւնը. «ո՛չ, նա չը գիտէ, չը գիտէ... ինքը գիտէ, Գասպարը, գիտէ՛ իր ընկերոջ, ո՛չ՝ իր եղբօր ընտանեկան պատուին հասած սև անարգանքի գաղտնիքը, որ օձի պէս գալարուել է նրա կրծքի տակ ու եռում է, եռում է. ի՞նչ անել, ի՞նչ անել, ո՞ւմ ջարդել, ո՞ւմ ոչնչացնել...»

Նա այնպէս դժբաղդ էր...

Գիշեր էր. խնձոյքը շարունակուեց էր, ամենքը հարբած էին. ոմանք մոմուում էին, ուրիշները ճշում. կային՝ որ համբուրուում

էին, պարոււմ, մոմուում, լալիս անմտօրէն:

Սօնան խոյս տւեց և մտաւ տուն. նրա հոգին էլ ալեկոծ էր. Գասպարի վարմունքը նրան իսպառ խռովեց, մութ կերպով զգում էր, որ այդ բոլորի տակ մի բան կայ թագնւած, որի մէջ ինքը անմասն չի. նա, և միայն նա գիտէր, որ Գասպարը հարբած չի: Եւ Սօնան փնտրում էր Գասպարին այդ ճնշող առեղծւածը լուծելու համար, իր հոգու խռովքը մեղմելու համար:

— Գասպար...

— Գասպարը տանը չէր. նա դուրս էր գնացել:

Սօնան դուրս եկաւ բակը, պրպտեց բոլոր խաւար անկիւնները. նա մեղմիւ կանչում էր.

— Գասպար, այ Գասպար:

Բակի մի հեռաւոր անկիւնում, պատի տակ գետնի վրայ կծկւել էր Գասպարը գլուխը ձեռքերի մէջ... խաւարի մէջ նա մի սև ահագին կոյտ էր ձևացնում, անշարժ ու լուռ:

— Գասպար, այստեղ ի՞նչ ես անում:

Գասպարը լուռ էր:

Հիւրերը քրքջում էին, իմում, ոռնում, քաշքշում, Վ աշուղ Սարհաղը միանգամայն անտարբեր դէպի անցած դարձած ընկալում էր ու երգում՝

«Հազար ու մի նեղութիւնով այգի տըն-  
կեցի.

«Գաւաճանի ձեռքը դիպաւ ծաղիկներս  
թափւեցին».

— Հէյ վախ, հոգուդ մեռնեմ, ուստա  
Սարհադ, կանչում էր թաթուլը. ասա էէ, այդ  
ասա...

— Գասպար, ինչո՞ւ ես էստեղ. Գասպարը  
դարձեալ լուռ էր:

Աշուղ Սարհադը շարունակեց.

«Ես մի խեղճ լորուկ եմ, ու դու շար  
բազէ,

«Ճիրաններդ դիպան, փետուրներս  
թափւեցին»...

— Հէյ վախ, ջան, ջան ուստա Սարհադ.  
լուում էր թաթուլի ձայնը... Սօնան մօտե-  
ցաւ և ձեռքը քնքշութեամբ Գասպարի ու-  
սին դնելով, մեղմութեամբ կռացաւ նրա վրայ.  
Գասպարը գլուխը բարձրացրեց: Եթէ խա-  
ւարը չ'արգելէր, Սօնան կը տեսնէր նրա  
աչքերի մէջ խորունկ, անյոյս վիշտ աղեր-  
սանքի հետ խառն, նա կը տեսնէր Գասպա-  
րի ծով տանջանքը նրա դողդողացող շրթունք-  
ների, նրա շղաձգաբար քաշքշուող դէմքի, նրա  
ամբողջ մանկօրէն յուսաբեկ պատկերի վրայ:

Գասպարը կամացուկ վերցրեց ուսից

Սօնայի ձեռքը և պահեց իր տաք, դողդո-  
ղուն ձեռքում.

— Վա-վարպետն ափսոս է, քուրիկ...  
ախր վերեն Աստուած կայ... ինչի՞ է խմում  
վերջին ժամանակ... ախր, ախր քուրիկ...  
գդակ ունի գլխին... քուրիկ, Սօնա քուրիկ...  
Նա հեծեծում, աղերսում էր, արտասանում  
էր անկապ խօսքեր, որոնք սակայն ընկ-  
նում էին հալած երկաթի պէս և Սօնան  
բաց աչքով տեսնում էր խաւարի մէջ Գաս-  
պարի հոգին կրծող օձը. տեսնում էր ու դո-  
ղում. խօսք էր փնտրում ասելու, չէր կարո-  
ղանում, զգում էր սակայն, որ մի բան  
պէտք է ասել, Գասպարի կասկածը ցրելու  
համար, հարկաւոր է ցոյց տալ, թէ բան չի  
հասկանում այդ մութ ակնարկներից, որ  
սակայն շաա բան էր հասկանում:

— Ախր... տղամարդ է... արունք... ա-  
րունքի բան... յետոյ էլի ինչ որ ուզում էր  
ասել Գասպարը, մի չը լուած բան, որ սըղ-  
մում էր կոկորդը, որ խեղդում էր նրան:

Սօնան հեռւմ էր խաւարի մէջ, Գաս-  
պարի ձեռքի մէջ այրւում էր իր ձեռքը, և  
մի կիզիչ հուր խաղում, անցնում էր բո-  
լոր երակներում. նա ձեռքը ազատեց, յետ  
ձգեց դէպի պատը:

— Թո՞ղ ինձ չ'ասի «Մարան», խեղդւած

զայրոյթով ասաց Սօնան, ես չեմ ուզում... ես լէջ չեմ... ես գիտեմ ինչի՞ է ինձ Մարան կանչում... իր լակոտի էլ աչքի փուշն եմ...

Այն գիշեր տարփանքի ու խենթութեան մի ժամին, Թաթուլն ինչպէս անուրջները մէջ՝ մեղմիւ շշնջում էր կնոջ ախանջին.

— Մարան, իմ Մարան, ու շրթունքներով փնտրում էր նրա այտի վրա ծանօթ խալը.

— Այստեղ էր էէ, Մարան ջան, այ այստեղ, ինչ եղաւ... Թաթուլը կրքոտ կատաղութեամբ կծեց այն տեղը՝ ուր խալը պիտի լինէր. կինը ճշաց ու բռունցքի մի ուժգին հարւածով ամուսնու կրծին՝ յետ մղեց նրան:

— Քո Մարանը գերեզմանատանն է, անամօթ՝ գեօրբագեօր ընի նա, որ հողի տակից էլ ինձ հանգիստ չի տալիս...

Դեռ երբէք Սօնան այսքան յանդուգն, այսքան յուսահատօրէն կատաղի չէր եղել. նրա իւրաքանչիւր խօսքի մէջ եռում էր ատելութեան թոյնը ու անզուսպ խանդոտութիւնը դէպի մի մեռել, որի սոււերը խաւարի մէջ հեգնում էր նրան, և գլխավերևում

կանգնած սպասում էր պատեհ առիթի նրա անկողինը սողալու համար: Սօնայի աչքերը փայլատակում էին խաւարի մէջ, օրերի, ամիսների կուտած զայրոյթը դուրս ժայթքեց խանձող, բարկ հեղուկի պէս և զարկեց Թաթուլի երեսին:

Կնոջ հարւածից ու նշտրակի պէս սիրտը խոցոտող նրա խօսքերից ցնցւած, նա տրորեց աչքերը, ճակատը, նստեց անկողնում և աշխատում էր ինքն իրան հաշիւ տալ, թէ ինչ պատահեց:

Պատահածը որքան անակնկալ, նոյնքան զարհուրելի էր:

Մղձաւանջը փարատում էր աչքերից, խնձոյքը, հիւրերը, աշուղ Սարհազը, Գասպարը վայրկենապէս կատաղի պտոյտով անցան աչքի առաջից, ապա Մարանը, անարգւած, թքւած Մարանը իր կողքին պարկած կնոջ շրթունքներով. յետոյ ինչո՞ւ, սրտեղից այսքան ատելութիւն, այսքան թոյն Սօնայի շրթունքներից: Տուրտ, սարսուցցուցիչ մի դող անցաւ նրա բոլոր մարմնով, մի վայրկեան նրա ջլուտ բազուկները ձգեցին դէպի Սօնայի կոկորդը, մի վայրկեան նա թռաւ ծնկների վրայ, աչքերից կայծեր ցայտեցին, իրար սղմւած ատամները ճռռացին... նա կռացաւ պարկած կնոջ վրայ, տաք, չարա-


գուշակ հեքը ինչպէս բոց այրեց Սօնայի  
դէմքը. կինն զգաց ահաւոր վտանգը, դուրս  
թռաւ անկողնից ճշարով և սղմեց պատին  
տան հեռաւոր անկիւնում...

— Հայրիկ, հայրիկ, ես վախենում եմ...

Բարիկն էր զարթել աղմուկից... Թա-  
թուլի գլուխը մեղմիւ քաշ ընկաւ կրծքին,  
բազուկները կախեցին ցած:

— Նահլաթ քեզ, չար սատանայ, շշնջաց  
նա և գնաց դէպի երեխան...

Լուսանում էր...



V.

— Էս երեխան էլ չի տեսնում, ասաց կինը,  
երբ Թաթուլը ներս մտաւ դռնից:

— Ի՞նչ, ի՞նչ...

— Ասում եմ՝ էս երեխան էլ բան չի  
տեսնում, կրկնեց կինը մէկին ու անողորմ  
շեշտով:

Թաթուլը քարացաւ դրան առաջ՝ ան-  
կարող մի քայլ անել. լսած խօսքերը իրենց  
յանկարծական ու ցաւոտ դաժանութեամբ  
նրա մարմինը քստմնեցին ինչպէս թունա-  
ւոր միջատների խայթումից, երբ զգում ես  
անախորժ հպումը, բայց կսկիծը յետոյ է  
վրայ հասնում: Առաջին ցանկութիւնն էր  
կնոջ վրայ նետուել, հարւածել, շարդել, խեղ-  
դել: Զսպեց ինքն իրան. աշխատեց սառնա-  
սիրտ ձևանալ. զգում էր սակայն, որ դո-  
ղում է. գոյնը թռաւ, յօնքերը քաշ ընկան  
աչքերին և մէջքը թեթևակի կռացաւ:

— Իսկ դժև, դու տեսնում ես, բայց ուշ:  
Վիրաւորում էր կնոջը, նրա խօսքերի  
տակ թագնւած չարախնդացութեան համար.  
նա լաւ գիտէր, որ Բարիկը նրա աչքի փուշն  
է, այս առթիւ շատ էին ընդհարւել, շատ  
դառն խօսքեր ասել իրար:

Բարիկը նստած էր թոնրան շրթին, աչ-  
քերը թաշկինակով պատած ու լուռ ականջ  
էր դնում իր շուրջն անցած դարձածին:  
Տասն օրից ի վեր նրա աչքերը ցաւում էին.  
մոմոռը՝ ինչպէս բարկ, կծու հեղուկ, յօն-  
քերի տակից քամւում էր բարակ թելերով,  
խաղալով իջնում էր մինչև կուրծքը և քրք-  
րում, ծլատում էր նրա սիրտը: Երեխան  
ձչում էր ցաւից, գալարւում, մագերը փե-  
տում, գետնին թաւալւում. հայրը՝ ականա-  
տես միակ դաւակի անասելի տանջանքնե-  
րին, անգօր, յուսաբեկ, մատներն էր ճմուռում,  
գլխին տալիս, հառաչում, լալիս:

Բոլոր ճարերն անօգուտ անցան:

Դժնդակ ցաւը, յամառ ու յաղթական  
մեղմիւ աւերած էր գործում երեխայի բի-  
բերի տակ, կրծում էր աչքի նեարգերը, մը-  
խացնում քունքերը և թաթուլը գիշեր ցե-  
րեկ ծունկ չոքած տառապող երեխայի ա-  
ռաջ, կսկծում էր նրա ցաւով, տրորում էր  
կուրծքը, ծնկներին տալիս, աղօթում, լա-

լիս, տնքում, հայնոյում, կամ ձեռքերը ծո-  
ցին՝ խելագարի քայներով արագ-արագ թա-  
փառում էր բակում, երկնքի ու աստղերի  
տակ, որոնք թարթում էին պաղ ցոլքերով՝  
ասես աշխարհում ոչ մի ցաւ չը լինէր:

Վերջին երկու օրը միայն ցաւը կամաց  
կամաց մեղմացաւ, և ապա յանկարծ ընդհատ-  
ւեց: Բարիկի աչքերը դեռ պատած էին, բայց  
նա էլ չէր տառապում: Եւ թաթուլը հանգս-  
տացած՝ ներք ու դուրս էր անում, գիւղա-  
մէջ դուրս գալիս, ասում, խօսում, ժպտում:  
Այժմ՝ երբ խաղաղ հոգով տուն դարձաւ, կինն  
ասաց, թէ «երեխան էլ չի տեսնում...»: Այն,  
կինն ասաց և միանգամայն անտարբեր թէ  
ինչ է անում, ասում ամուսինը, կարը ձեռք  
առաւ, նստեց լուսամուտի առաջ և կարում  
էր հանդարտ առանց գլուխը բարձրացնելու:

Թաթուլը կամացուկ մօտեցաւ որդուն,  
ծունկ չոքեց առաջը, դգուշութեամբ յետ  
քաշեց աչքերի վրայից ծածկոցը ու Ֆնաց  
պողած: Աչքերն ըստ երևոյթին առողջ էին,  
միայն բիբերը լայնացել էին ու սև ինչպէս  
գիշեր, պատել էին ամբողջ գունդը: Մա-  
նուկը նայում էր վեր, բաց աչքով ու չէր  
թարթում. հայրը արագութեամբ ձեռքը  
տարաւ բերեց նրա աչքերի առաջ, երե-  
խան բնաւ չը թարթեց. մատը շեշտակի

մեկնեց գէպի բիբերը մի քանի անգամ, դարձեալ կոպերը մնացին անշարժ, քարացած. երեխան ոչինչ չէր զգում, չէր տեսնում. այն սև սքանչելի թերթերունքները, որոնք թաթուլի գողտրիկ երազներին ու յուշերին հետ էին խաղացել, այժմ քարացած մուգ փրփուրի պէս եզերում էին այս գոյգ մեռած լճակները. ուր իշխում էր յաւիտենական գիշերը, որ այլ ևս երբէք, երբէք, չը պիտի յուզէր գեղանի թարթիչներին հմայիչ հովհարումով:

Բարիկը չէր միայն, որ կուրանում էր, նրա հետ միասին Մարանի հոգին անդառնալի կերպով ծածկւում էր այս անիրաւ խաւարի մութ ծալքերում:

Լուռ էին:

Աշնանային հովը մեղմիւ ու միաձայն տարուբերում էր բակի խարխլած դուռը, որ ճոնչում էր իր մաշկած ճխանի վրայ, լալիս էր, տնքում ամեն անգամ ներս թողնելով դէպի տունը մի մութ աղէտ մաս-մաս: Անկողինների ծալքի տակ մի ձպուռ էր ճռռում միալուր ու տարտամ, ու դրսում թթենու վրայ մի կաշաղակ էր կարկաչում անախորժ, չոր ձայնով:

Թաթուլը չէր լսում. մի ծունկը դրկած՝ պարանոցն առաջ ձգած, նայում էր զաւակի աչքերին անթարթ, շեշտակի ու այնքան

ուժով, որ ասես աշխատում էր իր հայեացքի բոցով վերստին վառել հանգած լոյսերը, յետ քաշել այդ խաւարի մռայլ քօղը, հրդեհել այդ նզոված գիշերը, որ ինչպէս մութ ամպ յանկարծ իջել էր իր զաւակի բիբերի վրայ:

Ներս մտաւ Գասպարը:

— Վայ, վա. վա՛րպետ, աչքերս լոյս, լաւացել է երեխան... բացականչեց նա տեսնելով Բարիկին հանգիտ ու աչքերը բաց:

— Սո՛ւս... շնջաց թաթուլը ձեռքը բարձրացնելով դէպի նա, սո՛ւս...

Գասպարը քարացաւ դրան առաջ, խեղճացաւ, գունատւեց, ապա կամացուկ, գաղտագողի, ինչպէս յանցաւոր, առաջացաւ մի փոքր, կանգնեց սեան տակ ու նայում էր անմտօրէն ու վախլուկ:

Կրկին լուռթիւն տիրեց, յուղարկաւոր, ծանր լուռթիւն:

— Բարիկ ջան.

— Հայրիկ:

Թաթուլը չը գիտէր ինչ ասէր. մի փոքր մտածեց, ապա ոտքի ելաւ, յետ-յետ քաշւեց մինչև պատը:

— Բարիկ ջան:

— Հայրիկ:

— Բարիկ ջան, ես սրտեղ եմ:

— Այնտեղ:

Երեխանց ոյց տւեց ձայնի ուղղութեամբ,  
աշխատելով չը սխալուել:

Եւ չը սխալուեց:

Թաթուլի շրթունքների դողը մի փոքր  
մեղմացաւ. շնչառութիւնը հանդարտուեց,  
ժպտի պէս մի բան անցաւ դէմքով. նոյն  
իսկ յանդիմանողական մի ակնարկ նետեց  
դէպի կիներ, որ ուզում էր ասել, «չարա-  
սիրտ...»

Գուցէ Բարիկը միայն մօտիկից չի տես-  
նում, մտածեց Թաթուլը ու շարունակեց  
փորձը:

— Բարիկ ջան, ի՞նչ կայ ձեռքիս:

— Զեռքիդ... երեխան չէր տեսնում,  
մտածում էր հաւանական մի բան ասել:

— Զեռքիդ փայտն է, հայրիկ. Թաթուլի  
ձեռքում ոչինչ չը կար:

— Բարիկ, Բարիկ, այդ ի՞նչ արիր, ի՞նչ  
հող տւիր հայրիկիդ գլխին:

Եւ պատի երեսից թիկունքը սողաց,  
սողաց դէպի վար, Թաթուլը կամացուկ ի-  
ջաւ, նստեց յատակին, ծանրացած գլուխը  
հանդարտ քաշ ընկաւ ծնկներին:

Երեխան հասկացաւ, որ սխալուեց, զգաց,  
թէ ինչպէս տառապում է հայրը ու յան-  
ցաւորի պէս կծկուեց, խեղճացաւ, շրթունք-

ները դողդողացին իր փոքրիկ հոգին քամող  
ահագին կսկիծից:

— Հայրիկ ջան, ես կը տեսնեմ... ես...  
եւ... յետոյ կը տեսնեմ...

Մանուկը հեծեծում էր, նա աշխատում  
էր մեղմել հօր ցաւը:

— Հա, հա, իհարկէ կը տեսնես, մատաղ...  
ասում է Թաթուլը առհարկի խաղաղ ձայ-  
նով, կը տեսնես, Բարիկ ջան... Գասպար.  
Գասպար, զբաւեղ է գրւած որ ութ տարեկան  
անմեղ երեխան յանկարծ կուրանայ... Գաս-  
պար, խիւր տասներկու ժամի հիմք եմ տա-  
լեմ բոլորը, լսում ես, էյ կապուտուոր տէր,  
կը փշրեմ, կը վառեմ քո տները... վերջին  
խօսքերը նա ուղղում էր երկնքին.

Գասպարը չը կար. նա դուրս էր գնա-  
ցել սուտերի պէս, աննկատելի:

— Հայրիկ, քնում եմ:

— Քնիր, բալիկ, քնիր...

Մաշաձ, հոգեպէս ու մարմնապէս ցնց-  
ւած երեխան պարկեց ու քնեց: Թաթուլը  
ծածկեց նրան ու դուրս գնաց:

Նա արագ արագ քայլերով անցաւ գիւ-  
ղից ու դիմեց դէպի դաշտ. ող էր փնտրում  
չը խեղդելու համար:

Թաթուլը գնում էր դաշտերով, խողան-

ների ու թարմ ցելերի միջից, անցնում էր մեծ ու փոքր առուները, բարձրանում էր բլուրները, ցած իջնում, ապա նստում էր մի թմբի, մի քարի վրայ, գլուխը քաշ ձգում ծնկներին ծանր մտածմունքների մէջ, ու կրկին ոտքի էր ելնում վազում, ինքն էլ չ'իմանալով ո՞ւր, ինչո՞ւ համար:

Անասունները խրանում էին նրանից ու խմբերով խոյս տալիս, հօտաղները զարմանքով հետևում էին այդ մարդուն, որ ճամբից դուրս ընկած, տարւում էր դաշտերով ինչպէս մոլորւած քամի, իսկ Թաթուլը գնում էր հա գնում ու չը գիտէր ո՞ւր թափել ահագին ու խորտակիչ ցաւը, ո՞ւր փնտրել ճակատագրի այս անօրինակ անարգարութեան ծագումը, պատճառը: Այն անսահման, ամենակարող ու զարհուրելի էակին էր փնտրում հարցնելու համար, թէ ինչու այսպէս... Ա՛հ, ինչպէս կուզէր նա յանկարծ հանդիպել այն Աստծուն, այնպէս՝ ինչպէս հանդիպում են թափառական զէրվիշին մեծ ճամբաներին, առաջը փակել, փուկ գետնի փոշիների մէջ, ատամներով հողը կրծոտել, խիճերը փշրել, ձեռքերը տարածած գրկել նրա ոտները, որ յանկարծ չ'անցնի, չը գնայ:

Եւ Թաթուլը կ'ասէր նրան.

«Լսիր Տէր, ես էլ քո ստեղծածն եմ. ասել ես, մեր ճակտի ջրտինքով պիտի հաց ուտենք, ես ոտներիս ու ձեռներիս միսն եմ կերել ու կեանքի ճամբին միշտ փուշ եմ քաղել, ոսկորներս քարերի վրայ են մաշւել և կրունկներս օձերն են լիզել: Չեմ տրտնջացել, Տէր, ասում են դու ես կամեցել, որ ցաւը մեր ընկերը լինի աշխարհում. հաւատացել եմ քո գթութեանը քո բարութեանը հաւատացել եմ, ու աշխատել: Տես, ափերիս մորթին ծռմուկ է ինչպէս կաւէ ամանը բրուտի բարկ փուռի մէջ և երեսս արևն է մրկել ինչպէս վառ թոնրի կողերը: Ասա, ինչո՞ւ տարար իմ խեղճ կեանքի ընկերին՝ Մարանին, ինչո՞ւ տւիր ինձ նրա փոխարէն երկրորդ կին՝ որի աչքերից թոյն է կաթում իմ բաղդին. արևիս վրայ քո ցասումի սուերն ընկաւ, Տէր, մի հատիկ փայլուն էակ միայն մնաց, որ լուսաւորում էր իմ ցաւագար կեանքի ուղին. դա իմ միակ զաւակն է. այժմ ասա, ինչո՞ւ է թանձրանում քո ցասումն իմ գլխին. ինչո՞ւ ես խլում իմ զաւակի աչքերի լոյսը. քեզ ի՞նչ պէտք է անմեղ երեխայի երկու շողը, Տէր, ի՞նչ է քեզ համար երկու շող, չէ՞ ասում են դու ողջ լոյս ես. ինչո՞ւ ես խաւարեցնում իմ վիրաւոր, իմ ծւատւած կեանքը...»

Այն, Թաթուլը կ'ասէր այս բոլորը և

թաւալ կը տար նրա ոտքերի առաջ, ծնկները կը գրկէր ու կը համբուրէր և չէր հեռանայ, մինչև պատասխան չ'ստանար:

Դաշտում լուռթիւն էր. մեծ ճամբով դէրվիչ չէր անցնում, քամին էր բշտում փոշու մի գալարուն սիւն, զարկում էր աջ ու ձախ, բարձրացնում, վար նետում, ապա պառաւ վհուկի պէս ցրիւ տւեց երկնքի երեսին, ո՞վ գիտէ ում անիծելով:

Թաթուլը դեռ նստած էր առուի բարձր թումբին ու նայում էր դէպի հեռուն, դէպի անծայր տարածութիւնը:

Աշնան արևը թեքում էր դէպի մուտքը և նրա իւրաքանչիւր շողը հոգեվարք հիւանդի փակուղ բիբերի անծայր թախիծն ունէր իր մէջ. լեռների ու ծառերի սոււերները երկարում էին դեղին դաշտերի ու մարգագետնի վրայ և հեռու հորիզոնի տակ գունատ մշուշը որպէս հսկայական պատան մեղմիւ իջնում ու պարուրում էր հանգչող բնութիւնը: Ո՞վ գիտէ, ո՞րտեղից և ինչո՞ւ, յանկարծ բարձրանում էր օդի մէջ դեղին մի տերև, ծաղկի մի թօշնած թերթիկ, կամ մեռած թիթեռի գոյնզգոյն մի թևիկ, բարձրանում էր մի խաւար, անյայտ ոյժի սաստով, տարտամօրէն խոհուն՝ տարւում էր խոզանների, ցելերի, ու գունատ մարգերի վրայով,

մերթ իջնում էր, համբուրում հողը, կրկին նետում դէպի վեր, պտոյտներ գործում, գալարում ու գնում հեռու, հեռու լուծւելու անծայրածիր, թախծոտ մշուշի մէջ: Ուշացած կանաչներն ու մենաւոր ծաղիկները նայում էին խուսափող արևին ցրտից գողգողացող մոլորած մուրացիկի հայեացքով և կամաց կամաց գլխիկները ցած կախում անխուսափելի առաջ, որ մօտենում էր անշշուկ, գաղտագողի: Կանաչներից մերկացած լեռները՝ իրենց լերկ, հրէշաւոր կողերը, որպէս հսկայական վէրքեր երկնքի առաջ ցցած, դաժան, խեղդող առեղծւածի լուծումն էին խնդրում: Կատաղի անգղերը դիմացի բլրի լանջին քաղցած շների հետ պայքարելով, մի դիակ էին քաշքշում և մտի հոտած պատանները ցնցում էին վերջալոյսի առաջ, հեգնօրէն՝ յաղթական նայում էին արևին ու խռխում հաճոյքից:

Ամպի մի սոււեր, խօլ, այլանդակ ձեւերով՝ սահելով անցնում էր դաշտերի վրայից, դիտում էր բոլոր խորշերը, թումբերի, մացառների ու թփերի տակ, ժայռերի արանքը, որպէս մի հսկայ թռչուն, որ պըրպտում է ճողոպրած որսը:

Ամեն տեղ մահ էր, ամեն կողմ հոգեվարք: Եւ մայր երկիրը՝ ստինքները չորա-

ցած պառաւ մօր պէս, յոգնած ու վշտաբեկ, լուռ սգում էր անցնող այնքան կեանքերը, որոնք անդառնալի կերպով փուլ եկան յաւիտենական մրրիկների շնչով, փշրւեցին խօլական ոյժերի կրունկների տակ՝ ուրիշներին տեղ տալու համար:

Ոչինչ, ոչինչ, որ խուսափէր կեանքի այդ հսկայական, այդ աւերիչ փոթորկից, որ խորտակում, ջարդում էր լռելեայն համր ու անդարձ:

Հուճ... աղաւնիների երամբ...

Խուռն ու քմահաճ պտոյտներով նրանք անցնում են դաշտերի վրայով, սաւառնում են մօտ, մօտ երկրին, կրկին բարձրանում դէպի վեր, դէպի արևը, գողտրիկ շարժումով ու անխառն հաճոյքով վարդագոյն կրծքերը ցցում են նրա ցոլքերի առաջ, խաղում են լոյսերի հետ, ինչպէս լողացող մանուկները ջրերի ցնցուղիների հետ, մի վայրկեան կորչում են երկնքի տակ, ապա կրկին յայտնւում միշտ իշխելով իրենց ոտների տակ մայր երկիրը պարուրող համատարած վշտի վրայ:

Մի սոււեր անցաւ նրանց գլուխների վրայ սահուն ու մեղմ:

Աղաւնիները իրար անցան, սղմւեցին մօտ, մօտ, ապա ուշակորոյս ու անմիտ աջ ու

ձախ, վեր ու վար նետւեցին. ապաստան էին փնտրում... այն բազէն էր պատուում նրանցից վեր, նրա շեշտակի հայեացքն է այրում նրանց թիկունքը: Երկինքն ազատ ու արձակ, դաշտերը հարթ ու անծայր, ապաստան չը կայ ոչ վերևում, ոչ ներքևում և զարհուրելի սոււերը միշտ նրանց վրայ է, տարւում է նրանց հետ, խաղում է նրանց հետ: Սրաթև ու կատաղի, բազէն սլանում է երկնքի տակ, շեշտ հայեացքը երամին ուղղած. և չի շտապում, հրճանքով լսում է աղաւնիների թևերի շրշիւնը, գերագոյն հաճոյքով վայելում է իր գոհերի սարսափը, դիտում է և ընտրում: Աղաւնիները նրան չեն տեսնում, այլ միայն սոււերը, այն փոքրիկ խաչաձև սոււերը, որ ամեն տեղ նրանց հետ է, որից նրանց աչքերն են մթնում և մարմնով մահաւան սարսուռ անցնում: Խուճապը շարունակւում է. խելագար թռիչքով աղաւնիները անմիտ շրջաններ են կատարում, երկնքի տակ, ճւղում են մեղմիւ, իրար թևի տակ են մտնում, իրար գլխով անցնում և հնար չը կայ ազատել այն մահաբեր սոււերից:

Լսւեց մի ուժգին շրփոց...

Բազէն էր...

Նա գլխի վայր զարկւեց երամի վրայ

և աղաւնիներէց ամենասիրունը, ամենակայտառը մագիլներէ մէջ առաւ ու նրա հետ մէկտեղ ծածկւեց մացառների մէջ: Զոհը չը ճշացմնացածները ցաք ու ցրիւ կորան, ով ուր կարող էր, մինչև կը մոռանան ապրած սարսափը, նորից դուրս կը գան, կը սաւառնեն կը խայտան երկնքի տակ, նորից բազէ, նորից խոճապ և այսպէս անվերջ...

Նայում էր թաթուլը և աւերածի ու ցաւի այս դաժանօրէն գեղեցիկ ներդաշնակութեան մէջ չէր կարողանում տեսնել իր փնտրած ահաւոր, ամենակարող ոյժը, որ կոյր, համր ու խուլ անցնում էր փշրելով, ոչնչացնելով, անտարբեր դէպի գոհների տանջանքը, դէպի նրանց հեծեծանքն ու հոգեվարքի գալարումները...

Հեռու հեռու ճամբի վրայ մի աղօտ սուեր էր երերում:

Դէրվի՞շն է արդեօք... Թաթուլը պոկւեց իր տեղից և դարուփոս ոտի տակ տալով, նետուեց դէպի անծանօթը:

Աշուղ Սարհադն էր...

Սադն ուսին ձգած, մի ձեռքով երկար գաւազանին և միւսով մի փոքրիկ երեխայի ուսին յենած, նա քայլում էր խաղաղ, անհոգ քայլերով, միշտ աչքերի սև խոռոչները դէպի վեր և շրթունքները կիսաբաց...

Թաթուլը կանգ առաւ հիասթափւած, մի փոքր մտածեց, ապա հաստատ քայլերով առաջացաւ դէպի ծերունին:

— Բարի երեկոյ, ուստա Սարհադ:

— Թաթուլ դ՞ո՞ւ ես... բարով որդի, ի՞նչ ես անում դաշտերում էս ժամանակ:

— Աստծուն եմ փնտրում, սուտա:

— Աստծո՞ւն, նո՞ր ես փնտրում:

— Հն, ուստա, ուզում եմ հարցնել գարնանը կարկուտ կը լինի՞ թէ ոչ. թէ կը լինի, արտս չեմ ցանի, թէ չի լինի՝ կը ցանեմ:

Սարհադը լուռ մտածեց. նա զգում էր, որ այս խօսքերի տակ մի այլ բան կայ թագնւած, որ թաթուլը մի ցաւ ունի:

— Է, Աստծուն գտա՞ր. հարցրեց Սարհադը:

— Չէ, ուստա, չը գտայ:

— Կոյր ես, թաթուլ... ես տեսնում եմ... ալանջ դիր... լսում ես...

— Անգղերը թռան դիակի վրայից օրհնելով երկինքը, որ գիւղում անասունների ցաւ կայ:

— Չէ, չէ. էս մեղմանուշ սլալոցը չոր խոտերի մէջ... էս բարակ զրնգոցը, որ երկրի կրծքից է բարձրանում, յետոյ էս խուլ հեծկլտոցը... ո՞վ է լալիս էսպէս հօնքուրհօնքուր, թաթուլ, ջէյրանի ձագը ո՞վ սպա-

նեց... տես, քամին աւազախառն փոշի զարկեց երեսիս, փակիր աչքերդ, Թաթուլ, չը կուրանաս... զգոյշ քայլիր, որ մը ջիւններին չը տրորես... էնպէսը կայ, որ կենդանի ճանճ է տանում, թող տանի... ինչո՞ւ են խեղճացել արևի շողերը, չեն այրում... աշուն է հաս... դաշտերն ինչ դեղին են... դեղինն ի՞նչ է, Թաթուլ, ես իսկի չեմ տեսել... մեռելն էլ դեղին է... ամեն բոյս միտք է անում գլուխը քաշ ձգած... Թաթուլ, Թաթուլ, Աստծուն ի՞նչպէս չես տեսնում...

— Զէնց նոր բազէն զարկեց ու մի անձար աղանի տարաւ պատուտեց:

— Հա, հա, էդ էլ, ապա, էդ էլ Աստուածն է:

— Խեղճ թռչունն իսկի ձայն չը հանեց:

— Ինչ ձէն հանի, Թաթուլ, մահն է, որ եկաւ՝ կը տայ, պէտք է սուս անել. տես՝ ինչպէս սսկւել են դաշտ, սար ու ձոր, սսկւել են ու սպասում... գիտեն էէ, որ իրենց բազէն մօտ է, հոգն արդէն ընկել է վրաները ու դեղնել են... Հայ հուճ, Թաթուլ, բոլորս կ'երթանք, բոլորս... կ'երթանք լճու, լճու... իսկի միտք արել ես, այ, հարիւր տարի յետոյ՝ քո տեսած մարդկանցից ոչ ոք չի լինի աշխարհում, ո՛չ, ոք, ո՛չ ոք... մեծ, փոքր, մարդ ու կին, աղքատ ու հարուստ, բազ-

դաւոր ու անբաղդ, իրենց դարդ ու ցաւով իրար յեակից շարան-շարան կ'երթան, կ'երթան, կ'երթան... ու էլ իսկի յետ չեն գայ... Մէկ փակիր աչքերդ ինձ պէս Թաթուլ, կանգնիր մի անծայր ճամբի վրայ, ինձպէս միտք արա ու տես... կարաւանն եկաւ, եկաւ, ու անցաւ... էլ չը կան էէ, չը կան, ո՛չ մէկը... Զէյ աշխարհ, քո տունն աւերւի... ի՞նչ ես դու, քամի՞, Էրազ, փոշի... Ման եմ գալիս աշխարհ է, աշխարհ, դեղէ դեղ, սարէսար, տնէտուն, ձէներ եմ լսում, մեծի, փոքրի, մարդի, կնոջ, ու ամեն մէկն ալանջիս աւում է «ես էլ կը մեռնեմ, ես էլ... Ողջ կը մեռնեն, ու նրանց տեղ ուրիշները կը գան, բայց նրանք էլ իսկի չեն լինի, իսկի... ծընած օրիցս գիտեմ Թաթուլ, հողի տակ, մի մութ փոսում ինձ համար որդեր կան. մայր երկիրը նրանց կերակրում պահում է որսկան շների պէս, ու որդերը սպասում են իմ միտքին, ջիւերին, ոսկորներին. կուտեն... կուտեն, իրենք էլ կը մեռնին հող կը գառնան... Կոյր եմ ծնւել, որդի, ոչինչ չեմ տեսել, աշխարհն ինձ համար մի անվերջ բզբոց է. ձէներ, ձէներ, ձէներ... չղջիկն է զարկում ճակատիս, թռչունն է հովհարում երեսս, ծառերն են շշնջում չորս

կողմս, գիշերն է լալիս եմ գլխին, ջրերն հեծեծում թփերի տակ, թիթեռն է շոյում կոյր աչքերս... ձէներ, ձէներ, ողջ ձէներ, ու ես գիտեմ, որ բոլորը կը մեռնեն, կը մեռնեն... Իրենց ծնած օրից մեռնում են ու բոլոր ձէների մէջ Աստուած կայ...

— Ուստա Սարհատ, դու ո՞ւմ մեղքից ես կոյր ծնել:

Ում մեղքից... ոչ ոքի... Աստուած է կամեցել որդի... որ ես աշուղ դառնամ, մէկը պէտք չէ՞, որ էն ձէները լսի...

— Որ երգ ասի սաղերի համար. Թաթուլը հեգնում էր.

— Տի, հի, հի-հի... ծերունին ծիծաղում էր բանալով իր լայն բերանը նօսր, սևացած ատամներով, սաղերի համար... հի, հի, հի... բոլոր կենդանի ու անկենդան արարածներն են ինձ համար երգում և ես ո՞չ ոքի համար. ձէներ են է՛, նրանք բոլորն էլ ձէներ են, ասացի չէ՞, սաղ աշխարհը ինձ համար մի անծայր բզբոց է, մեռնում են բոլորը, ու ձէները մնում են... տեսնում ես էս խեղճ գանգս, ձէների փոթորիկ կայ էստեղ... լալիս են ծլատում իրար, սիրտս կրծոտելով, արիւնոտելով հեղեղի պէս դուրս են թափում իմ հոգու միջից... Նրանք քրքջում են ու ծիծաղում,

երբ աշխարհը լալիս է, և հեծեծում են ու լալիս, երբ աշխարհը ինդում է, իսկի չեն բռնում իրար իմ հոգու ձէներն ու աշխարհի բաները... յետոյ աշխարհը մեռնում է և նրանք կան, կան, կան, ձէներն անմահ են ինչպէս քամիները, Աստուածն է էստեղ... ո՞վ կարող է հասկանալ Աստուծու բանը... Թէ ինչի՞ է ինձ կուրացրել ու շարտել էդ ձէների մրրիկի մէջ...

Ո՞վ կարող է իմանալ, թէ ինչո՞ւ Աստուած լացացնում է նրան, որ պիտի խընդար, և խնդացնում նրան, ով պէտք է լար. ինչի՞ է մեռնում երեխան մօր արգանդի մէջ և ծաղկի պէս կոյսը՝ կեանքը չը տեսած: Աստուծու կշեռքն ո՞վ է տեսել, ու նրա քարերի ծանրութիւնն ո՞վ չափել:

Ծերունին խօսում էր յափշտակութեամբ, միշտ կոյր աչքերի խոռոչները դէպի վեր, յոնքերը դողդողացնելով, ասես թարթում էր մութ, անծանօթ, խորհրդաւոր էակներին, որոնք խոնքերամ ու կատաղի սաւառնում էին նրա գլխի շուրջը, շնչում էին այն յաւիտենական ձայները, որ միայն նա էր հասկանում, այդ անդրձիւրմեան ծերունին, հասկանում էր ու ժրպտում իր լայն բերանով, աշխարհից կտրուած, աշխարհին խղճալով, ցաւը տրորելով

իր հնազանդութեան կրօնականներէ տակ և վաղանցուկ, պատրանքներով հարուստ վայելքները հեզներով...

Թաթուլը վաղուց էր լսում ուշադրութեամբ, ու ինքն իրան կամացուկ շշնշում՝ «Իհրվիշ, դէրվիշ, միթէ սաէ ձեր դէրվիշը...»

— Չէ, Սարհատ, չէ, իմ ասուածն ուրիշ է. ես չեմ աղօթել այն աստծուն, որ լացացնում է, ով պէտք է խնդայ, և խընդացնում է ով պէտք է լայ... ես աղօթել, ես հաւատացել եմ նրան, որ անտէրի, ու խեղճի ձեռից բռնում, ոտի է հանում, արդարին հովանի անում, ու հարւածում չարին, փշրում անիրաւութեան մէջը. ես նրան եմ փնտռում հարցներու, թէ ինչո՞ւ է կուրանում իմ գաւակը:

— Կուրանում... գաւակդ...

— Հա, ուստա, կուրանում է իմ գաւակը, լսում ես, կուրանում է իմ Բարիկը, կուրանում է, կուրանում է...

Թաթուլը ճշում էր ձեռքերը երկինք տարածած, ու նրա ձայնը երկար արձագանքներով կրկնում է դաշտերի վերայ...

Ծերունին լուռ էր. գլուխը փայտին յենած, ձեռքով խառնում էր իր ցանցառ միրուքը, խորունկ մտածմունքի մէջ:

— Ասա, էէ, ի՞նչ ես սակել, ի՞նչ ես ասում քեզ «ձէներդ»...

Ծերունին գլուխը բարձրացրեց ու դառձեալ սև խոռոչները ուղղեց երկնքին:

— Կոյր եմ որդի, ու քայլում եմ մշտական խաւարի մէջ... քայլում եմ գլուխս միշտ վեր, որովհետև ներքեում էլ ոչինչ չեմ փնտրում... քայլում եմ, ու ոտքիս տակ արորում է՝ մըջիւն ու սողուն, և՛ որդ ու ճիճու, խոտ ու ծաղիկ, ծիլ ու կանաչ իմ կրօնականների տակ մեռնում են հեծեծալով, քնած բզէզներն են ճխլում, և ձագերի վրայ նրստած մայր թռչունն է անիծում ինձ, երբ իմ կրօնակը ցրիւ է բերում նրա բունը... լըսում եմ անէծքը, իմ ոտների տակ մեռնողների մըմունջը. ու դարձեալ քայլում, դարձեալ քայլում, դարձեալ փշրում, սպանում, լացացնում... մահն է կապած իմ ոտներին...

— Ինչո՞ւ:

— Կոյր եմ, մահւան պէս.

— Ասուած էլ չի տեսնում... նա էլ է

Կոյր.

— Չէ, որդի Ասուած կոյր չի, նա լաւ է տեսնում, բայց ոտքերի տակ չի նայում, այլ հեռուն, հեռուն... վայ նրան, ով ոտքի

տակ կ'ընկնի, վնյ նրան, վնյ նրան, վնյ նրան...

— Ո՛չ, ոչ, դու գուցե մարդ ես հանձնող, գուցե, քո աստուածն էլ գուցե է... Իմ աստուածը ջուկ է, ծերուկ, և իմ գալանակը պէտք է տեսնի, լսում ես, պէտք է տեսնի...

Թաթուլը ճշում էր, կատաղաբար ցրնցում ծերունու ուսը, որ առանց բողոքի անյոյզ, ինչպէս արձան, նայում էր դէպ երկինք, հին սպանիչ ժպիտը շրթունքներին սառած: Ապա նա քայլ առաւ, շարժեց, գնում էր դանդաղ, հաստատ քայլածքով, և կրունկներին տակից փոշին բարձրանում և ամպի պէս պարուրում էր նրա ալեգարդ գլուխը:

Թաթուլը նայում էր նրա յետևից, նրա երերուն թիկունքին, նրա դողդողացող, ծեր գլխին, այդ ամբողջ խորհրդաւոր պատկերին, որ տարւում էր մեծ ճամբաներով, ինչպէս մի մարգարէ, որ զարհուրելի դժնդակ ճշմարտութիւնները շրթունքներին, հողմերի հետ անցնում է աշխարհէ աշխարհ, և ուր յայտնւում է, սասանեցնում է ու ծածկւում:

Կոյր ու զարհուրելի, որպէս մահը...

Յոգնած, ուժասպառ Թաթուլը նստեց ճամբի եզրին:

Վերջալոյսի շողերը հանդարտ մարում էին լեռնակատարներին, շրջապատում ամեն ինչ լուրիկ երկիւղածութեամբ թխանում, ստերանում, ոչնչանում. իրերի սովորական ձևերը կամացուկ մաշւում, մշուշանում էին, ու մի հսկայական, անծայր ամբողջութեան մէջ լուծւում: Ու դաժանօրէն անխուսափելի, խորհրդաւոր մի սոսկում կար այդ լուռ հնազանդութեան մէջ, որով ամեն ինչ, շնչաւոր, թէ անշունչ, թռչուն, անասուն, ծառ, թուփ, քար, սար ու անտառ, դատապարտւածի դանդաղութեամբ մերկանում էր իր ինքնութիւնը, և կամացուկ սողում անյայտի ծոցից բարձացող մշուշի մէջ...

Գիշեր էր.

Թաթուլը դեռ նստած էր, գլուխը ծնկներին կախած. ու չը գիտէր ո՛ւր գնալ, ո՛ւմ դիմել, ո՛ւմ աղերսել:

Լուսինը հանդարտ բարձրացաւ արևելքից. նրա պաղ, գունատ ցոլքերի տակ բլրնութիւնը նորից կամացուկ դուրս սողաց խաւարի ծոցից և ամեն իր, ամեն մացառ, ծառ ու քար, վրան սպիտակ մշուշ ունէր, ու մեղմիւր դողդողում էր, որպէս պատաններով պարուրւած մեռելներ, որոնք դուրս էին եկել գերեզմանների ծոցից: Մի բու-

հեռուում հեկեկաց ու լռեց. հովն էր սլսլում,  
և բար լուսթեան մէջ մի խուլ ձայն մեղ-  
միւ մշմշում էր միակերպ ու խորունկ:

Թաթուլը դեռ նստած էր, մտածում էր  
ծեր աշուղի ասածների վրայ: Յանկարծ մի  
երջանիկ միտք, ինչպէս փայլակ լուսաւորեց  
նրա ուղեղը. «գուցէ Բարիկն այժմ տեսնում  
է, մտածեցնա—տեսնում է, տեսնում է...»

Ու ոտքի թռաւ. հաւատում էր իր  
մտքին:

Վազում էր դէպի տուն, հեիհե, քրտ-  
նաթոր, միշտ շնչալով:

«Տեսնում է... տեսնում է...»

Եւ ներս ընկաւ տուն. բազմաթիւն կար-  
հարեաններ էին, մեծ մասամբ կանայք, ո-  
րոնք աղէտի մասին լսելով, շտապել էին ե-  
կել իւրաքանչիւրն իր խորհուրդներով:

Թաթուլը պատռեց բազմութիւնը, Բա-  
րիկին հասաւ և ծունկ չոքեց նրա առաջ,  
ու դարձեալ հայեացքը յռոնեց նրա բիւր-  
րին:

— Բարիկ ջան.

— Հայրիկ, հայրիկ, երեխան կարօտա-  
գին դէպի նա տարածեց ձեռները:

— Բարիկ ջան, տեսնում ես ինձ:

— Չէ, հայրիկ...

— Ինչպէս թէ չէ, ճշաց Թաթուլը, դու

պէտք է տեսնես, լսում ես, ես ուզում եմ,  
որ դու տեսնես... աշուղ Սարհաղը ցնդեած  
է... Աստուած կոյր չի... ողորմած է... էյ,  
հարեաններ, ասացէք, ինչպէս կարող է ութ  
տարեկան անմեղ երեխան կուրանալ... ճի-  
տեղ է գրեած, ճի աւետարանի, ճի սուրբ  
գրքի մէջ... գնացէք, ինչի էք եկել... դժբ  
պէտք է լոյս տաք նրան... գնացէք, թողէք  
ինձ իմ գաւակի հետ... իմ Աստուած հետ:

Բազմութիւնը դուրս գնաց. կանայք  
գլուխներն օրօրում էին Բարիկից աւելի՝  
Թաթուլին նայելով:

Թաթուլը դողդողալով ու հեւլով, երե-  
խայի ձեռքից բռնեց դուրս եկաւ բակը, որ  
ողողած էր լուսնի շողերով:

— Բարիկ ջան, լուսինը տեսնում ես:

— Հա, հայրիկ, տեսնում եմ... երեխան  
վախենում էր, դողում էր, ճար հնար էր  
փնտրում հօր սիրտն ամոքել:

— Տեսնում ես... տեսնում ես... իմ լաւ  
բալիկ... էյ, էյ, Բարիկը տեսնում է լու-  
սինը... աչքերիդ մատաղ, ճրտեղ է լուսինը...

— Լուսինը... երեխան ճգնում էր չը  
սխալել, կողմերով որոշել լուսնի տեղը, և  
մտածում էր...


— Հա, բալիկ ջան, լուսինը.

—Այ, այնտեղ... երեխան ցոյց տւեց բոլորովին հակառակ կողմը.

Թաթուլը լռութեամբ թողեց զաւակի ձեռքը, յետ յետ քաշւեց զարհուրած աչքերով նայելով որդուն, ապա կրկին դուրս փախաւ:

Բարիկը մնաց մենակ բակում կանգնած, չը գիտէր, ո՞ւր գնաց հայրը, ի՞նչո՞ւ գնաց, ապա բարձրաձայն հեկեկաց.

Թթենին հեծեծում էր գիշերւայ հովի առաջ...



Երկրորդ օրն էր, Գասպարը չը կար.

Թաթուլը հասկանալ, բացադրել չէր կարողանում նրա բացակայութիւնը.

Երեկոյեան դէմ վերջապէս նա յայտնւեց յոգնած ու փոշոտ և մի ահագին մահակի վրայ յենւած՝ կանգ առաւ տան մէջ տեղում:

—Բերի, ասաց նա խորը շունչ առնելով. ու մեկնեց Թաթուլին քառակուսի ծալւած երկու փոքրիկ թղթի կտոր. տիրացուն ասաց, շարունակեց նա, այ, էս մէկը ասաց էրէք, մոխիրը ջրի մէջ ածէք թող խմի, էս մէկն էլ ասաց կտրէք... վրան կտրէք... ասաց աչքով են տւել...

Ու Գասպարը ժպտում է միշտ հեւալով, ահագին կուրծքը բարձր ու ցածր է անում, յետոյ փէշով սրբում է ճակատի քրտինքը. գեղեցիկ գործի գիտակցութեամբ և խորունկ հաւատով, թէ յաղթել է ցաւին, նստում է սեան տակ, իր սովորա-

կան տեղը, նստում է, ու սպասում, թէ անա Բարիկի աչքերը կը տեսնեն իր բերած հրաշագործ ճարով: Նա մի օրւայ ճանապարհ էր կտրել ոտքով, գնացել էր հրոշակաւոր գրբաց դպրի մօտ, թուղթ անել տւել և բերել հեիհն:

Թաթուլը յոյս ունէր. ծովում խեղդւողի պէս՝ անդունդների սոսկումից խելադար, նա կախւել էր տակաւին իր բաղդի ծւատւած փէշերից, ատամներն ու եղունգները թաղել էր նրա կարծր կրունկների մէջ, հոգու խորքում արցունք էր թափում հալած երկաթի պէս կասկարմիր, մենութեան մէջ իր արիութիւնից մերկացած՝ վերջին ձագը կորցրած վագրի պէս, մոնչում էր ու կուրծքը շանգում, պատրաստ էր հոգ ու մոխիր դառնալ նըրա առաջ, ով մի ճար կասէր. պատրաստ էր նոյն իսկ ոճիր գործել, անմեղութիւնը արորել ոտներով, միայն թէ զաւակի աչքերի լոյսը փրկէր: Եւ յոյս ունէր, սպասում էր հրաշքի, ինչո՞ւ այդ հըրաշքը չէր կարող լաւ Գասպարի բերած այդ փոքրիկ թղթի կտորների մէջ լինել:

Առաւ այդ թղթերը, մէկը վառեց մոխիրը խմացրեց, միւսը իր ձեռքով երեխայի թւին կարեց, ու անմիջապէս նայեց բի-

բերին... Գասպարը հեռուից, մի աչքը կիսախուփ, միւսը լայն չոած, հեալով նստում էր:

Բարիկը չը տեսաւ...

Այնուհետև գիւղում, շրջակայքում ոչ մի փորձ գլուխ չը մնաց, որին չը դիմէր խորհրդի. ոչ մի մուրացիկ, թափառական, ճամբորդ, որին չաղերսէր մի ճար ասելու: Եւ շատ բան ասացին, շատ դեղ ու դարման ցոյց տւին.

Ասացին ոգնու ճարպով պէտք է արորել կոպերը, քունքերը—կատարեց:

Ասացին շան փոքրիկ ձագը ողջ-ողջ պէտք է ջախջախել և արնաթաթախ ուտաք, երեխայի գլխին դնել—կատարեց:

Եւ հազար ու նման միջոցներ, որ խաւար, անձար գիւղը հսկայական ու բազմապիսի ցաւի դէմ յօրինել է մերթ խորհրդաւոր ու վայրի, յաճախ անողորմ ու գարշելի և միշտ անմիտ ու անգոր:

Ի գ՛ւր...

Բարիկը կոյր էր.

Թաթուլը դարձեալ անհաշտ էր. հաւատը կար տակաւին:

Աղէտն այնպէս մեծ էր և այնպէս հրէշաւորօրէն անմիտ՝ որ Թաթուլը չէր կարողանում հնազանդւել ճակատագրին,

չարիքի ծանրութիւնը տանելու համար հաստատուն քար էր փնտռում յենւելու, վրան կանգնելու համար, և քանի որ չէր գտնում, քանի որ ոտքի տակից բոլոր քարերը սայթաքում էին, նա չէր կարողանում բացատրել թէ ինչո՞ւ այս ահագին ցաւը միայն իր գլխին, ուստի և շարունակում էր յուսալ, թէ մի հրաշք կը լինի:

Եւ յետոյ՝ բոլորն ինչ ունէր աշխարհում, ինչի համար ապրում էր ու աշխատում, այդ մանկան աչքերի մէջ էր, նրա սև երկար թերթերունքների, նրա երազուն ծով հայեացքի, նրա բիբերի մէջ: Զոյգ վրձիտ լճակներ էին այդ աչքերը, որոնց մէջ Մարանի գեղանի դէմքն էր երևում և նրա հետ այնքան սփոփիչ յուշեր, զոգտը երազներ. իր հոգու տաճարն էր այնտեղ, ո՞վ է նա, որ յանձն առնի այդպէս անողորմ կերպով այդ տաճարի ջահերը մարել, և յաւիտենական գիշերը տարածել նրա վրայ:

Ո՛չ, այդ անկարելի է...

Սա սոսկ աղէտ չէր, որոնցով լի է կեանքը, այլ մի ուրիշ բան, որքան ահաւոր, նոյնքան՝ անմիտ, անուն գտնել անգամ չէր կարողանում այս անիրաւութեանը և դրա համար, երբ բժշկութեան փորձերն անօգուտ էին անցնում, նա նորից դառնում

էր Աստծուն, հարցնելու, միայն հարցնելու համար, թէ ինչո՞ւ համար է կուրանում ութ տարեկան իր անմեղ երեխան. ի՞նչ պէտք են Աստծուն նրա երկու շողերը...

Եւ այդ Աստծու փոխարէն քամին էր մոնչում մեծ ճամբաներում փոշու ամպեր ցրելով երկնքի երեսին և մայր բնութիւնը մեղմ սգում էր ամեն վայրկեան ընկնող կեանքերը և շորս կողմից մի լուռ թախիժ բարձրանում, ծաւալում, փռում էր կատաղի օձերի, երկչոտ սիրունաղաւնիների, ժպտուն ծաղիկների ու խայտացող թիթեռների վրայ...

Այնուամենայնիւ նա յամառ կերպով խնդրում էր Աստծուն:

Հաւատը կար տակաւին:

Գնաց եկեղեցի:

Այն աստիճաններով բարձրացաւ, որի իւրաքանչիւր քարը իր ձեռներով էր կռել, կոփել, յղկել ու յարդարել. կանգ առաւ կամարակապ մուտքի առաջ, որ իր պերճ երևակայութեան յօրինւածքն էր: Այստեղ իւրաքանչիւր քանդակ, իւրաքանչիւր դրուագ իր հաւատացող, իր արդար հոգու մի կտորն էր նրանց վրայ թաթուր ժամերով, օրերով, կորացրել էր իր քրտնաթոր ճակատը, նուրբ գեղանկար հիւսւածքներ կազ-

որպէս առանցքը փշրւած անիւ և շող ու ծիծառ, ծաղիկ ու դաշտ, գիւղ ու մարդիկ, արև ու գառ, բոլորը մէկէն քարացան ու բոլորի վրայ իջաւ մի փրփրուն, ալեկոծ անծայրածիր խաւար, տեղ-տեղ թանձրը որպէս թանաք, և տեղ-տեղ գունատ, որպէս մթնշաղի մշուշը:

Նրա փոքրիկ աշխարհը, ուր ապրել էր, խայտացել, երգել ու լացել, հրճւել ու տըխրել, յանկարծ դարձաւ անծայր ու ցաւագին յուշերի մի շղթայ, որոնք ամպերի կարաւանի պէս շարան-շարան սահում, անցնում էին նրա մթնշաղ երկնքով, ոմանք տակաւին պարզ ու մէկին, ուրիշները գունատւած, աւելի հեռուն՝ մթագոյն, և վերջապէս որպէս խօլ գիշերւայ մէջ երերուն, անորոշ ձևեր:

Վատ երազ էր, մղձաւանջ...

Եւ Բարիկը ճգնում էր վերստին տեսնել բոլորը պայծառ ու փայլուն, դուրս քաշել իր մտքի, յիշողութեան, երևակայութեան խորքերից մարտող, նւազող պատկերները ու ապրել լաւ օրերի պէս արևի տակ:

Ու թւում էր նրան, թէ պիտի կարողանայ վերջապէս վանել խաւարը, յետ քաշել այդ սև քօղը, թէ այս բոլորը միայն վաղանցուկ, ցնորական երազ է: Անակըն-

կալ, խեղդող խաւարի կապանքների մէջ թրսրտացող նրա փոքրիկ հոգին, անասելի ջանքերով իր բոլոր կենսական եռանդը, մտքի, յիշողութեան ամբողջ կորովը, երեւակայութեան բոլոր մանուկ թափը կուտում էր ճակատի տակ, խաւարի քօղը պատռելու համար: Ի գո՛ւր... Այդ ցաւագին ճիգերը միայն խորշոմներ ու կընճիռներ էին կազմում ճակատին, որպէս հողի փխրուն և նուրբ շերտի տակ սողացող բարակ որդեր:

Եւ Բարիկը չէր տեսնում:

Մանուկը սակայն չէր դադրում:

Նա վշտոտ կատաղութեամբ յոնքերը նետում էր դէպի ճակատը, լայն ու սև բիբերը մի վայրկեան դողդողում էին, կուպերը թրթռում, գանգը տնքում էր այդ յուսահատ, յամառ փորձերից, քունքերը ցաւում էին, սղմում ու բացում ասես մուրճի հարւածի տակ և առարկայական ու պայծառ պատկերների տեղ՝ դարձեալ միայն մշուշապատ ու աղօտ յուշեր, յուշեր անդարձ կերպով ծածկւած աշխարհի:

Սուսափող ու խայտաբղէտ թիթեռների յետևից վազող մանկան պէս, նրա յոգնած երևակայութիւնը թողնում էր հեռաւոր պատկերները, ու խաւարի մէջ գալար-

ւող ձևերը, և իր բոլոր թափը կեդրոնացնում էր տակաւին թրթռուն պայծառութեամբ ժպտուն յուշերին, իր սրտին, իր հոգուն ամենից աւելի մօտիկ, ընտանի պատկերներին, որոնք սերտօրէն ձուլւել էին նրա մանկութեան հետ:

Մերձաւորներից ամենից լաւ պատկերացնում է իր հօրը. յիշում է նրան լայն սև միրուքով, յիշում է և ածխած դէմքով: Երկու պատկերն էլ հաւասար չափով գրաւիչ են, իր հոգու վրայ թառել են անջընջելի կերպով: Բարիկը լաւ տեսնում է հօր ժպիտը, յետոյ քնքոյշ խանդաղատանքով փայլուն դէմքը, երբ նա այնպէս երկար նայում էր իր աչքերին: Ի՞նչու էր նայում. երևի գիտէր, որ Բարիկը պիտի կուրանայ:

Հօրից յետոյ ամենասիրելի պատկերը՝ նրա համար Գասպարն է, մի աչքը լայն, միւսը՝ նեղ, թանձր խճճւած միրուքով, որ ծածկում է նրա բերանը, ծնօտը, այտերը մինչև աչքերի տակը: Գասպարը իր ուսերի, իր գլխի վրայ նստացրած Բարիկին որքան է մանածել բազում, «փախկուկի» խաղացել հետը վաղէվազ արել, ձեռքից բռնած դաշտ ու այգիներ տարել, կանաչ ուռենու ճիւղերից շինէր շինել նրա համար: Լաւ Գասպարը...

Այա պարզ տեսնում է իրանց բակը, տունը, թթենին, նրա տակ կապած սիրուն, ահագին Չօմաուր, գլուխը թաթերին դրած, աչքերը կիսախուփ. յետոյ ձին, մեղմ, հանդարտ քայլածքով, որի վրայ հայրը այնքան անգամ նստացրել և ման է ածել Բարիկին:

Իրենց տնից, բակից դուրս՝ աւելի հեռուն, գիւղն իր փողոցներով, յետոյ այգիներ, դաշտ, արտեր, հօտեր ու հօտաղներ, բլուրներ ու լեռներ, գալարուն առուներ բարձր թումբերի մէջ, թռչուններ, թիթեռներ, ու բոլորը արևի ցուլքերով ողողած, կամ ամպերի խոնափող երերուն սուերների տակ անցնում են նրա մտքի առաջից, բայց արդէն գունատ, մշուշապատ, եզրերը մաշւած, այդ պատկերները երբեմն վազում են այնպիսի արագութեամբ, որ մանկան միտքը հագիւ է հասնում նրանց յետևից: Եւ լացն է գալիս, երբ թումբի յետև անցնող գառն էլ չի տեսնում, երբ կռացած հնձուրն էլ չի բարձրանում, երբ ճամբաներն անցնում են դաշտերով և խակոյն կորչում մի մութ տեղ, երբ չի կարողանում ճանաչել այն ջրուորին, որ բահն ուսին արագ-արագ գնում է. չի հասնում այն ձոնչացող սայլին, որ գնում է, գնում է դէպի հեռաւոր դաշտերը և իր հետ քաշ է տալիս տանում է դաշտ-ձոր, անտառ,

մարգեր, արտեր—Բարիկի բոլոր պատկերները:

Երբէք չէր փորձում պատկերացնել իր խորթ մօրը, մանաւանդ՝ նրա կապոյտ աչքերը, որոնք, սակայն, որպէս խաւարի մէջ պլպլացող զոյգ բոցեր, յաճախ յամառաբար ցցուում են նրա մտքի ճանապարհին, և չեն թողնում առաջ գնալ առանց իրենց վրայ նայելու: Երեխան ճգնում է վանել այդ աչքերի փայլը, ցնցում է գլուխը, շփում ճակատը ազատելու այդ զոյգ բոցերից և մտքի այս բացասական աշխատանքը նրա համար ամենից ծանրն է, ամենից ցաւոտը:

Խորթ մօրից աւելի նա դարչում է մի այլ պատկերից. դա մի փոքրիկ մարդ է, կատի պէս ճարպիկ, սողոսկուն շարժումներով, գաղտագողի քայլածքով և օձի պէս անձայն: Բարիկը երբէք լաւ չի տեսել նրան, որովհետև գալիս էր գիշերները, պատերի ստւերների միջից և այնպէս էլ անյայտանում էր: Բարիկի համար նա այժմ էլ մի դիւական ստւեր է, չարախորհուրդ, անխուսափելի, անողորմ, որին և՛ ատում է և որից սոսկում է միաժամանակ: Եւ մի խեղդող զուգադիպութեամբ այդ ստւերն ու խորթ մայրը միշտ միասին են պատկերանում նրան, իրար մօտ, մօտ, շնչալիս խաւարի մէջ, և

մանուկը չի կարողանում ազատել ոչ՝ մէկից, ոչ միւսից...

Իր թշնամիներն են նրանք, կենդանի, պայծառ աշխարհից բոլոր միւս աւելի կամ պակաս հաճելի մտապատկերների հետ անցել են այս նոր, մշուշապատ, ցնորական աշխարհը և ճմուռւմ, բզկտում են մանկան հոգին: Ամեն տեղ նրանք են, իրենց թունոտ շնչիւնով, իրենց խորհրդաւոր շարժումներով, և նրանցից բարձրացող մի սև բան սև ամպի պէս պաշարում է երեխայի միտքը, խեղդում է նրան:

Յաճախ, երբ այս զոյգ պատկերները շատ են ճնշում նրա հոգին, երբ խորթ-մօր ոտնաձայնը շփոթում է նրա խաղաղ անուշ մտքերի թելը, և հաճելի տեսարանների փոխարէն նրա առաջ ցցում է այդ տանջող, այդ դժնդակ մղձաւանջը, Բարիկը կամացուկ դուրս է գալիս և ձեռնափայտով շօշափելով գետինը գնում է դէպի աշուղ Սարհաղը:

Հայրը չի ուզում, որ որդին աշուղ դառնայ, չի հաւատում, չի հաշտւում այդ մտքի հետ, Բարիկը այդ գիտէ, գնում է գաղտնի:

Այն միտքը, թէ ինքն էլ կոյր է, որպէս աշուղը, նրա մէջ զարթեցնում է բնագրական մի ձգտում դէպի իր նմանը: Կեանքն

ու աշխարհը նրա համար կամաց կամաց դառնում են ձայներ, հնչիւններ, ձիչեր, որոնք հազար կողմից պաշարում են մանկան հոգին, մերթ լացի, մերթ ծիծաղի, մերթ հեծեծանքի, մերթ ցասումի ելևէջներով: Ամբողջ երազական մի աշխարհ, ինչպէս մի անծայր պարտէզ, բացւում է նրա առաջ, երբ նստած թմբի վրայ լսում է աշուղ-Սարհազի նւագը: Հասկանում է, և իր փոքրիկ էութիւնը լայն բացած, թողնում է, որ ձայները անուշ նեկտարի պէս իջնեն, իջնեն, հեղեղեն նրա հոգին, զովացուցիչ ցօղի կաթիլներով թրջեն նրա այրած սիրտը: Գլուխը կրծքին քաշ՝ նա լսում է, լսում է վարպետի նւագները, ինքն էլ մեղմիւ մրմնջում է և վշտոտ, երազող երգիչը կամաց-կամաց ծնւում է նրա հոգում:

Սարհազը զարկում է սագին այնպիսի յոյզով, որ լարերը ցաւից մորմոքում են ու լալիս, և խօսք առած՝ պատմում են այն զիւթական աշխարհի գաղտնիքները, ուր ձայների յաւիտենական մրրիկն է իշխում, և որ միայն կոյրերն են տեսնում անդունդների վրայ սաւառնոց արծիւների պէս:

Եւ մերթ հեծեծանքով ու լալագին, մերթ գոռ ու յաղթական այգ ձայներից թրթռում, ու դողում է Բարիկի մութ աշխարհը, պայ-

ծառ, անծայր հորիզոններ են բացւում այնտեղ, ուր թևերը փետուած թռչունների պէս հանգչում են կոյր երեխայի բոլոր երազները, բոլոր տենչերը...

Եւ թւում Բարիկին որ բաւական է մի սագ առնի, բաւական է ձեռք զարկի լարերին, և նրանք լաց կը լինեն ու կը խօսեն ինչպէս վարպետի ձեռքի տակ . . . . .

— Բարիկ, որդի, ինչո՞ւ ես լալիս...


— Ես ուզում եմ... ես... ես, քեզ պէս ածել... քեզ պէս. վարպետ...

Բարիկի հոգում էջ ձայների փոթորիկ է...

— Մի լար, բալաս, կ'ածես, կ'ածես... ինձ պէս... ինձ պէս:

Եւ ծեր աշուղը, փնտրում գտնում է փոքրիկ երեխային, գրկում է սղմում իր կրծքին նրա գլուխը, համբուրում է իր զաւակի պէս...

— Մի լար, բալաս, մի լար, թող աշխարհը լայ... ես ու դու... ես ու դու... է, մեր բանն ուրիշ է...



## VII.

Ուշ գիշեր էր, երբ Բարիկը զարթնեց։  
Չմբան սկզբի մի խենթ քամի դրսում  
թակում էր բոլոր դռները ներս ընկնելու  
համար, չանգոռում լիզում էր պատերը, մըռ-  
մըռում էր խոռոչներում և կատաղաբար կըր-  
ծոտում էր ծառերը, որոնց վրայ տակաւին  
մի քանի դեղնած տերևներ կային։ Ամենից  
աւելի ողբաձայն հառաչում էր բակի թթե-  
նին և նրա տակ Չոմառը կաղկանձում էր  
զիլ ու երկար։

Հայրը տանը չէր. մի քանի օրից ի վեր  
նա մեկնել էր. Բարիկը չը գիտէր՝ ո՞ւր...

Եւ մանուկն զգում է ինքն իրան այն-  
պէս մոռացած, այնպէս լքած, անտէր ու  
յանձնւած այս ահաւոր քամու կատաղու-  
թեանը, որ տան հերդիկից մերթ բառաչում  
էր, մերթ քրքշում խելայեղօրէն։

Բարիկն ահանջ էր դնում երկար։

Յետոյ նրան թւաց, որ բոլորովին մօ-  
տիկ, տան այն անկիւնում, ուր մայրն էր  
պարկած, մէկը շնջում էր, ընդհատ ընդհատ  
հեիհե։ Քամին չէ արդեօք...

Ո՛չ, քամին չէ։

Ընդհակառակը, երբ մեղմանում է քա-  
մու թափը, երբ հանգչում է թթենին, լուռ  
է ծեծւող դռների որոտը, այն ժամանակ  
այդ շուկը լսում է յստակ, մէկին, մերթ  
ինչպէս խարազանի տակ Ֆսսացող օձի հեք,  
և մերթ թանձրանալով, ինչպէս ջերմ համ-  
բոյրի ձայներ։

Բարիկը վախենում է. քամին մոռացած՝  
նա ահանջ է դնում այդ շուկին, որի իւ-  
րաքանչիւր շեշտը սուր ասեղի պէս ծակո-  
տում է նրա սիրտը։ Տաք ու պողքրտինքը  
տում է նրա ճակատը, թի-  
փոխ առ փոխ թրջում է նրա ճակատը, թի-  
կունքը։ Բարիկը գլուխը թագցնում է վեր-  
մակի տակ չը լսելու համար համբոյրի ձայ-  
նը. իզուր. շուկն ամեն տեղ է, տան բոլոր  
անկիւններում. դա այլևս ձայն չէ, այլ մի  
սև ահագին հրէշ, որ փռում, լայնանում է  
ու բռնում ողջ տունը։ Յետոյ Բարիկին թւաց,  
որ այդ խորհրդաւոր ձայն հանողը սողալով,  
սողալով ինչպէս օձ, գալիս է, մօտենում է  
իր անկողնին... մօտ է, մօտ է...  
— Մայրիկ, դու ո՞րտեղ ես...

Ձայն, պատասխան չը կայ. բայց այն «մէկը» սողում է, մօտենում է իրեն. Բարիկն աւելի կծկւեց, աւելի պինդ փաթաթեց գլուխը. շուկն ընդհատեց, քամին կատաղօրէն ծեծում է դռները և շունն է կաղկանձում անդադար:

Երեխան խեղդւում է օդի պակասութիւնից. կամացուկ գլուխը դուրս հանեց, լայն շունչ առաւ. ճակատի քրտինքը սրբեց:

Դարձեալ... այս անգամ մօր ձայնն է, մեղմ ինչպէս դաւադիրի փսփսուկ, նա ինչ որ բաներ է ասում խաւարի մէջ, ընդհատ, ընդհատ, շուտ շուտ, անհասկանալի խօսքեր, որին հետևում է օձի ֆսսոցը, և համբոյրի կատաղի շրփոցը...

— Մայրիկ, դու մենակ ես... դ՞ու ես խօսում... ո՞վ է խօսում... հայրիկ, հայրիկ, ես վախենում եմ...

Հայրը հեռու էր, նա լաւ գիտէր, բայց կանչում էր... մայրը լուռ էր. և երեխան դողում էր իր փոքրիկ անկողնում, թաւալ էր տալիս, մերթ գլուխը ծածկում, մերթ բացում, լայն շունչ առնում, իսկ այն ախտաւոր զարհուրելի շնչիւնը թոյնի փոշու պէս վարակել էր խաւարը, օդը, խեղդում էր երեխայի կոկորդը...

Օդ չը կար...

Դեռ երբէք կուրութիւնն այդպէս անդորմ կերպով Բարիկին չէր խեղդել:

Ժայռի պէս մի ծանր բան ընկել էր նրա կրծքին ու սղմում էր, սղմում:

Բարիկը կրծոտում է շրթունքները չը ճշարու համար: Յետոյ նա պարզ ու որոշ իր կոյր աչքերով տեսնում է մօր գոյգ աչքերը, կապոյտ, չար պողվատի փայլով և նրա հետ այն փոքրիկ, խորհրդաւոր սուտերը, որին մի քանի անգամ տեսել էր խաւարի մէջ, իրենց բակում, պատերի տակ, լուռ, անշուկ, զգոյշ անցնելիս և որի մասին մայրը պատւիրել էր լուել. և նա՝ Բարիկը լուել էր այնքան տանջանքներով:

Այն ժամանակից, երբ Բարիկը կուրացել է, երբ էլ չի կարողանում բաց աչքով ստուգել իր շուրջն անցած դարձածը, երբ կեանքը շարժուն, կատաղի, կրքոտ կեանքը դարձել է միայն ձայն, շուկ, փսփսուկ, դեռ երբէք այսպիսի զարհուրելի գիշեր չէր ունեցել: Նրան թւում է, թէ իրենց տան շորս անկիւնում մարդիկ են շարւած, որոնք փոխ առ փոխ համբուրւում են իր մօր հետ, յետոյ քրքշում են, հեգնում են իր կուրութիւնը, լեզու են ցոյց տալիս, հայհոյում, ծաղրում են իր հօրը, թքում են նրա վրայ հեռուից և ինքը՝ նրա որդին պիտի լսի, լուի:

ու լուի... որովհետև մօր աչքերը պողվաւի  
փայլ ունին...

Դարձեալ կրբոտ հեք, դարձեալ համ-  
բոյրի շփշփոց:

Եւ բնագոյր խօսում է մանկան հոգում,  
ախտաւոր մթնոլորտի մէջ նա հասունանում  
է վայրկեան առ վայրկեան... Նա էլ չի վա-  
խում, այլ գարշում է...

Ո՛չ. նա էլ չի լուի... այդ իր մօրն է  
համբուրում «այն մարդը»...

Նա անկարող է լուել. յաւիտենական  
խաւարը հրդեհի բոցի պէս վառում է նրա  
ներսը, և նրա կրծքի տակ, ինչպէս վառ  
հնոցում, թրձում է նրա խեղճ, նրա արիւ-  
նոտ սիրտը...

Ի՞նչպէս լուել...

Ի՞նչ ունի «այդ մարդն» իր մօր հետ,  
ինչո՞ւ է գալիս գիշերները, երբ հայրը տանը  
չի. ինչո՞ւ են համբուրում իրար «նա» և իր  
մայրը, Բարիկն ասել չի կարող, բայց գիտէ,  
լաւ գիտէ, որ խաւարի մէջ կատարում է  
մի վատ, շատ վատ բան, որ իր հայրը չը  
գիտէ, և երբ իմանայ, մի սարսափելի, մի  
ահաւոր բան կը կատարւի:

Եւ թո՛ղ պատահի «այդ բանը»...

Բարիկն էլ չի լուի... այ, նորից համ-  
բուրւեցին...

— Մայրիկ, ո՞վ կայ քեզ մօտ:  
Մայրը դարձեալ լուռ է...  
Մայրիկ... մայրիկ... ախր դու արթուն  
ես... ախր խօսում ես...

Դարձեալ լուռ թիւն:  
Բարիկի ձայնի մէջ չոր, խիստ շեշտ  
կար. կուրու թիւնն ու կրած սարսափն ու  
անարգանքը, հոգու խորքում աղտոտ լաթի  
պէս ծալ-ծալ նստած այդ մութ գաղանիքը,  
այս գարհուրելի գիշերները, որոնք լի էին  
գարշահոտ շուկներով, օձի ֆոսոցով, բոլորը,  
բոլորը հասունացնում, առնացնում էին այդ  
բոլորը հասունացնում, առնացնում էին այդ  
փխրուն, մանուկ հոգին, ու գայրոյթի, ցա-  
ւի, ատելութեան փոթորիկ հանում կրծքի  
տակ:

Ի՞նչպէս կուզէր նա այժմ մեծ լինել,  
լուսաւոր աչքերով, հաստ ուժեղ բազուկ-  
ներով, ինչպէս Գասպարը: Այն ժամանակ  
ահագին մահակը ձեռքին նա կը ծառանար  
այն զազրելի անկիւնում և մի հարւածով  
այն փոքրիկ մարդու գանգը կը փշրէր:

Անկարելի, խեղճ ցանկութիւն...

Հնարաւորը կար, Աստուծո՛ր...  
Եւ մանուկն իր փոքրիկ հոգու բոլոր  
անմեղութեամբ աղօթում էր Աստուծոն, որ  
հայրը հիմայ յանկարծ գայ Գասպարի հետ-  
օ՛ճ, Բարիկն էլ չի լուի, նա կը պատմի ճը-

չալով, կատաղաբար, կը պատմի այնպէս, որ հօր մագերը դիզանան գայրոյթից:

Հայրը չը կայ, չը կայ... մօր ու այն մարդու շնչիւնն է մերթ լաւում, մերթ ընդհատուում յանկարծ, երբ քամին թափով գարկուում է դրանը, խառնում խոտերի դէզերը, և շառաչում թթենու մերկ ոստերի մէջ:

Բարիկը նստեց անկողնում, ամափելով գտաւ շորերը, հագաւ, վերցրեց կողքի ձեռնափայտը և դուրս եկաւ բակ:

Յուրտ էր. ձմրան առաջին ձիւնը մանրամաղ թափուում էր երկնքից, սառը քամին շփեց նրա երեսին, կիսաբաց կրծքին և երեսալի մարմինը սրթսրթաց:

Ո՞ւր գնալ, ո՞ւր փախչել կոյր աչքերով, ուշ գիշերին, չը լսելու համար այն համբոյրների ձայները, այն զագիր շնչիւնը, որ այժմ ամեն կողմից հնչուում էր մերթ ծառի շառաչի, մերթ չոր խոտերի խշշոցի և մերթ դռների ճոնչոցի մէջ:

Ո՞ւր գնալ, ո՞ւր փախչել, մտածում էր երեսան ցուրտ քամու ու ձիւնի տակ կանգնած բակում և գլուխը անյուսօրէն յենած իր փայտին: Նա կուզէր պոռալ, ճչալ, այնպէս ճչալ, որ ողջ գիւղը գարթնի, որ հայրը ուր և լինի, լսի նրա ձայնը...

Ո՞ւր... հայրը շատ է հեռու և նա այնպէս փոքր է, այնպէս անգօր, և ձիւնը թափուում է, թափուում է նրա որբ գլխին...

Շունը կաղկանձում էր շարունակ և խաւարի մէջ Բարիկին ճանաչելով, աղիողորմ հաջեց, կանչեց, աղերսեց իր մօտ գալ:

Բարիկը գնաց դէպի Չօմառը:

Նա տակաւին կապուած էր, ինչո՞ւ էր կապուած, չէ՞ որ գիշերէ...

Բարիկը քնքշութեամբ փաթաթեց կենդանու պարանոցով, փաղաքշեց, գուրգուրեց, գրկեց գլուխը, ճակատը դրեց նրա ճակատին, երկուսով էլ որբ էին, երկուսով էլ լքուած, անտէր, ու հասկանում էին իրար:

Ապա Բարիկը կոացաւ, արձակեց շրթթան. կենդանին ոստիւն գործելով թռաւ ինչպէս մրրիկ, մի քանի կատաղի պտոյաներ գործեց բակում, հոտոտեց պատերի տակ, վերստին մօտեցաւ իր փոքրիկ տիրոջը, քսքսեց, փաթաթեց, մեղմիւ կաղկանձեց, դարձեալ թռաւ դէպի բակը, շրջաններ աղբայր միշտ հոտոտելով, ապա գնաց նստեց տան-դրան առաջ, հայեացքը շեշտակի դէպի մուտքը յառած:

Բարիկը նստած մնաց սառը թմբի վերայ, թթենու տակ, որ ցնցում էր ոստերը

և մաղուժ նրա գլխին ձիւնի մանրիկ թերթիկները. երեխան երկար մնաց այդպէս նստած՝ ապա գլուխը ձեռքերի մէջ առաւ, սիրտը փղձկաց ահագին, անձար վշտից, որ նրա փոքրիկ կուրծքը պարսկել չէր կարողանում, և դառը, դառը հեկեկաց: Արցունքը թափուում էր կոյր աչքերից, քամին լիզում էր նրա պղտոր կաթիլները և ձիւնը վերից մաղուժ էր, մաղուժ էր նրա գլխին...

Բարիկն այնպէս դժբաղտ էր, այնպէս անտէր...

Յանկարծ լուեց տան դրան ձայնը մեղմ ու զգոյշ:

Բարիկն այդ լաւ լսեց, գլուխը բարձրացրեց ու ահանջ էր դնում. բայց այնուհետև ինչ կատարեց, նա ուշ հասկացաւ. Չօմառի ձայնը ամեն ինչ խեղդեց: Բարիկը նախ լսեց նրա ահագին, սպառնական հովոցը, ապա նրա խեղդեած մոնչիւնները, ցասկոտ խոխոցը. շուներ խաւարի մէջ խեղդում էր մէկին, պատառոտում, քաջքշում ատամներով, մինչդեռ զոհը յուսահատ ճիչեր էր արձակում ամենի գազանի ճիրանների ու ժանիքների մէջ:

Բարիկը հասկացաւ, շուներ խեղդում էր «նրան»...

Բարիկը լսում էր նաև մօր յուսահատ աղաղակները, նա աշխատում էր յետ քաշել կատաղած շանը, սպառնում էր, հարւածում, ի դ՛ուր, շունն, ասես վճռել էր վերջ տալ իր զոհի կեանքին, որի վրայ ամիսներ շարունակ անզօր մոմոացել էր, զայրոյթից կրծոտել իր շղթաները, շանգուռել գետինը, և որի պատճառով այնքան գիշերներ կապւած էր մնացել: Եւ քանի Սօնան աւելի էր քաջքշում, շունն այնքան աւելի էր կատաղում, աւելի ուժգին թափով թաղում էր իր սուր ժանիքները զոհի մարմնի մէջ, բզկտում էր կաշին, և ծւէն ծւէն ձորձի պէս քաշ ձգում նրա արիւնոտ միսերը...

«Սյն մարդը» տնքում էր, ճշում, օգնութիւն կանչում, շուներ խեղդում էր, շուներ ոչնչացնում էր... Եւ յանկարծ լուեց ատրճանակի պայթիւն, յետոյ երկրորդը, երրորդը, ու նոյն վայրկենին Չօմառը բաց թողնելով իր զոհին, աղիողորմ, կաղկանձելով մահամերձ խոցեած, արիւնլայ յետ շպրտուեց, ընկաւ կրծքի վրայ, ապա ոտքի ելաւ ու եկաւ մեռնելու Բարիկի ոտքերի տակ...

Գիշերային երկու պահապաններ բակի դուռը թակեցին... յետոյ խօսակցութիւն ան-

կարգ, այլանդակ, ապա տնքոց, խեղդած ծիծաղ պահապաններին, յետոյ ամեն ինչ լուեց...

Քամին էր շառաչում ու ձիւնը շփում այս ու այն կողմ, և շունը մահամերձ հորնդիւններ արձակում, ձգձգում ու դողդոզում թթենու տակ:

Բարիկը նստած տեղում դողում էր ցրտից և մի ուրիշ բանից... ինչոր կատարեց, նա չէր ծրագրել... բայց կատարեց. գլխում մտքերի շփոթ էր, չը գիտէր, ո՞ւր է ինքը, ի՞նչ եղաւ, ինչո՞ւ եղաւ...

Իրանից բոլորովին մօտիկ լուեց ոտնաձայն. մէկը կանգնեց նրա կողքին և լուռ հետևում էր...

Մայրն էր...

— Բարիկ...

Երեխան լուռ էր:

— Բարիկ, քեզ եմ ասում. Սօնայի ձայնը հնչում էր խեղդուկ ատելութեամբ, ընդհատ, ընդհատ... նա շնչասպառուում էր...

Երեխան դարձեալ լուռ էր:

— Ի՞նչ արձակեցիր շունը:

— Հնա:

Կարճ ու չոր այդ պատասխանի մէջ երեխան դրեց այնպիսի վճռականութիւն, այնքան յանդուգն շեշտ, որ Սօնայի գայրոյթը հասաւ խելագարութեան.

— Ինչո՞ւ արձակեցիր, շան ձագ:

Պատասխան չը կար. Սօնան ատամները կրճատելով կռացաւ երեխայի գլխին. Բարիկը զգում էր իր երեսին նրա շար կատաղի հեքը, նրա տաք խոխոցը, որ իր ճակատն էր այրում, նրա աչքերի ատելութեան բոցը, բայց ո՞չ մի շարժում չարեց: Եւ երբ խորթ մօր գոյգ ձեռները նրա նիհար կողորդը սղմեցին օձի օղակներով, Բարիկը չը ճչաց, չը փորձեց պաշտպանել:

Նա որոշել էր մեռնել, վերջ դնել այս դժնդակ կեանքին:

Կինը, որի խայտառակութիւնը վաղը պիտի ծփար ողջ գիւղում, վիրաւորւած էզի անսահման, անսիրտ կատաղութեամբ փրկուրը բերանին խեղդում էր նրան, հարւածում գլխին, կրկին խեղդում, սղմում կողորդը, պարանոցի ոսկորները նրա մատներին տակ ճռնչում էին, ու էլ աւելի խաբազանում, բորբոքում էին նրա ատելութիւնը, ու նա ճմուռում, քամում, ոտնահարում, տրորում էր իր գոնի փոքրիկ մարմինը...

— Ինչո՞ւ արձակեցիր, շան ձագ...

Մանուկը նախ հետևում էր, ապա խռոխոաց և դարձեալ ձեռքերը չը բարձրացրեց, չը փորձեց փախչել. այդ խելագար

կինը նրան մաս-մաս կտրատում էր ա-  
տամներով, եղունգներով միսն էր պատա-  
ռոտում, ոտների տակ ոսկորներն էր փըշ-  
րում, դարձեալ Բարիկը չը ճչաց, նա միայն  
հեռւմ էր և խոխոում, ապա Սօնայի ոտ-  
քի մի ուժեղ հարւածը նրան շար-  
տեց հեռու. երեխան թափով զարկեց  
թթենու ծառին, մի անգամ, միայն մի ան-  
գամ մեղմիւ հեծեծաց՝ հայրիկ... ու ընկաւ  
շան դիակի մօտ, անզգայ, ուշաթափ . . .  
. . . . .  
. . . Երբ նա ուշքի եկաւ. առաջի պահուն  
ոչինչ չէր յիշում... Ի՞նչ է անցել իր գըլ-  
խով, ինչո՞ւ է ցուրտ քամու ու ձիւնի տակ,  
ո՞ւր է ինքը, ո՞ւր է հայրը, գլուխն ինչո՞ւ է  
այսպէս ծանր, ասես ուղեղի տեղ արձիճ է  
գանգի մէջ, երեխան չը գիտէր... շուրջը  
շօշափեց և ձեռքը թաղեց շան թանձր մա-  
զերի մէջ...

— Չօմառ, Չօմառ, կանչում էր նա նը-  
լագ, խղճուկ ձայնով. շունն անշարժ էր...  
յիշեց. «Նրան սպանեց այն մարդը», մտա-  
ծեց նա. յիշեց և ֆնացածը... գիշերը, շը-  
շուկները, իր կրած տանջանքը, յիշեց, որ  
շունն «այն մարդուն» խեղդեց և խորթ մայ-  
րը իրան... «չը մեռայ ուրեմն...»

Գլխին ձեռք տւեց, մազերը կպել էին  
թաց մորթուն:

«Արիւն է». մտածեց նա, պարանոցը,  
երեսը, կուրծքը շօշափեց, ամեն տեղ ա-  
րիւն, արիւն, արիւն:

Լաց չ'եղաւ. ցաւ չէր զգում, միայն մի  
անծայր թուլութիւն, ամբողջ մարմնի մի  
խուլ տնքոց:

Փայտը գտաւ, դժւարութեամբ ոտքի  
ելաւ, կանգնած մտածում էր:

«Ի՞նչ անել, ո՞ւր գնալ...»

Նա գիտէր, որ դեռ գիշեր է. շրջա-  
պատում ո՞չ մի ձայն, գիւղը քնած էր,  
միայն աքաղաղների ձայնն էր լսում հատ-  
հատ այս ու այն տնից, և եկեղեցու գանգն  
էր հեծեծում մեղմանուշ:

Լուսաբաց էր. քամին դադարել էր:

Բարիկը յիշեց աշուղ Սարհադին:

Շարժեց և երերալով, դողդողալով  
գնաց դէպի դուռը և դուրս եկաւ փողոց:

Սարհադի տունը ձանաչում էր:

Դիմեց դէպի այնտեղ:



VIII

Մի օր յետոյ Թաթուլն եկաւ. օջաղի աւերածը կատարեալ էր:

Կինը չը կար. շունն սպանւած, երեխան Սարհաղի սազի տակ վիզը ծռած, և յետոյ մի աղտոտ հեղեղ, իր յարկի, իր տղամարդութեան պատիւն առաջ արած, քըշում էր գիւղի փողոցներով գարշահոտութիւն տարածելով ամեն կողմ: Մարդիկ խոյս էին տալիս, քիթերը բռնում, փակում աներում, և գարշահոտութիւնն ամեն տեղ էր, հրապարակներում, բակերում, սաքուններում:

Բարիկին թողեց Սարհաղի մօտ. ինչո՞ւ յետ բերել, երբ մի մութ ձեռք նրան քայլ առ քայլ մղեց դէպի աշուղութիւն:

Բակը մտաւ Գասպարի հետ, կանգ առաւ, նայեց տանը, ուր կատարել էր իր պատւի անարգանքը, ու ներս չը գնաց:

Ձը ճշաց, աղմուկ չը հանեց, լաց չ'ե-

ղաւ, լուռ նստեց թթենու տակ, քունքերը ձեռքերով գրկեց և աչքերը յառեց գետին.

Ձէր մտածում. նայում էր, ինչպէս կը նայեն այն ճեղքին, ուր հէնց նոր ծածկեց մի օձ:

Գասպարը կանգնած էր կողքին համը կտրած. նրա ծնօտը գողգողում էր մի ահագին, ծածուկ յոյզից և շնչառութեան փոխարէն կրծքից լսում էր խուլ դրնդիւն.

Ձին, որին անուշաղիր թողել էին բակում, կանգնած էր քիչ հեռու, գործիքներով լի խուրջինը մէջքին կանգնած էր հընազանդ, ինչպէս միշտ, նայում էր իր պղտոր, իմացական աչքերով, ու սպասում, թէ երբ կը քաշեն նրան ախոռ:

Երկու ընկերները սակայն անուշաղիր էին դէպի նրան:

Իւրաքանչիւրն իր հողում առանձին էր ապրում սարսափելի շմեցնող անցքը:

Գասպարը մտածում էր, ինչպէս վրէժխնդիր լինել անմիջապէս, ո՞ւմ գանգը փըշրել, ո՞ւմ խորտակել իր դժբաղդ վարպետին մի փոքր մխիթարելու համար. և այս մտքից ձեռները գողգողում էին:

Թաթուլի համար էլ անելիք չը կար. ամեն ինչ արւած էր, ամեն ինչ ասւած էր:

Անշուշտ՝ նա կարող էր իսկոյն դուրս

պրծնել, սար ու ձոր ընկնել, գիւղերը պտրտել, գտնել կնոջը և իր ձեռքով խեղդել, բայց դրանից ի՞նչ օգուտ... իր յարկի տակից հոսող աղտոտ հեղեղի առաջը էլ փակել չէր կարող. պատիւը՝ թուքի ու ցեխի մէջ շաղախւած, տրորուած էր բոլոր ոտների տակ: Լաց լինել... ինչո՞ւ, դրանով իր զաւակը չի փրկւի. անիծել, ո՞ւմ և ո՞ւմ անոռնով, վերևում ու ներքևում էլ ոչինչ չը կայ, որի անոռնով արտասանւած խօսքը կայծակի պէս շանթէր: Աշխատել այսուհետև, առաքինի, արդար վաստակը շարունակել, ո՞ւմ համար, և ինչո՞ւ, երբ միևնոյն է՝ մի մութ ոյժ թիկունքիդ կանգնած է միշտ, իր ուզած պահունք քո մէջքը փշրելու համար:

Ո՞վ է նա, Աստուծո՞ւ, թէ՞ մի ուրիշ ոյժ, աւելի հզօր, աւելի անողորմ քան ինքն Աստուածը. թաթուլը չը գիտէ... միևնոյն չէ, ով և լինի, նա սարսափելի է, նա խորտակիչ է, անիրաւ է, անարդար—նա զուլումի մայրն է. նա ինքը զուլումն է...

Թաթուլը դողում էր, մի սուր սարսուռ գետնից բարձրանում էր և ոտների ծայրից թափանցելով, ելնում էր դէպի վեր, դէպի կուրծքը, դէպի սիրտը, և ողջ մարմինը բռնում դողով: Թաթուլը կծկւեց,

ծնկներն իրար սղմեց, բայց մնաց նստած, միշտ գլուխը սղմած թաթերի մէջ:

Նրանք երկար ժամանակ լուռ էին:

— Գոսպար ս՛ւտ է, ասաց թաթուլը. ատամների արանքից:

— Ի՞նչը, վարպետ.

— Ամեն բան, աշխարհը, արևը, երկինք, ես, դու, մարդիկ, հողի, հաւատ, ողջ սուտ է, սուտ է սուտ է...

— Ը՛ր, ըր... վար... վարպետ, մեղք է... ախր ի՞նչպէս... մեղք է... Գոսպարի շըրթունքներն իրար չէին գալիս յուզմունքից. վարպետի խօսքերը սարսափելի էին:

— Ի՞նչն է մեղք, Գոսպար:

— Ա... ախր, ես ի՞նչ գիտեմ... վարպետ, Աստուծո՞ւ գէ՛մ ինչպէս ձէն հանենք...

— Չըգտայ, Գոսպար, չըգտայ, ո՞չ մի տեղ:

— Ո՞ւմ վարպետ.

— Աստուծոն.

— Վա-վա-վարպետ... ախր... ես ի՞նչ ասեմ... ես... ես... Նա շարունակել չը կարողացաւ. թաթուլը յանկարծ գլուխը վեր բարձրացրեց, Գոսպարը նայեց նրան և մընաց սոսկումից քարացած: Մահւան զուսատու թիւնը ծածկել էր նրա դէմքը, աչքերը լայնացած և բորբոք, բիբերը՝ անշարժ, ինչպէս ապակի, շրթունքները դող-

դոջուն, և մի ցաւոտ, չարագուշակ ժըպիտ, որից Գասպարի հոգին դողդողաց:

«Թաթուլի զընգ-զընգան Մարանն եմ ես...»

Թաթուլն էր երգում... ձայնը գալիս էր ասես անդունդներից, խուլ, նւազ, ու խուպոտ: Նրա հնչիւնները բարձրանում էին, ինչպէս վառւող տան կտուրի ճեղքերից դուրս սողացող բոցի հրեղէն լեզուներ և վառում, մրկում էին Գասպարի հոգին: Նա զարհուրում էր այդ երգից, զարհուրում էր վարպետի դէմքից, նա զգում էր որ Թաթուլի հետ մի ահաւոր բան է կատարւում, ծանր, սև, անդառնալի բան: Գասպարը վախենում էր ձայն հանել, վախենում էր և լռել, ու չը գիտէր ի՞նչ ասել, ի՞նչ անել, վերջապէս նա ծանր հեւլով, դէմքը լացակամած, վախվխելով, սիրտ արաց, կամացուկ մօտեցաւ և իր ահագին ձեռքը դրեց Թաթուլի ուսին.

—Վա-վարպետ, աղաչում եմ, մի ասս էդ խաղը, Մարանի խաղը մի ասա... Լալագին, դողդոջուն ձայնով աղաչում էր նա որպէս հիւանդ, վախլուկ երեխայ, որ աղերսում է մօրը իրեն գիրկն առնել, օրովհետև վախենում է խաւարից:

Գասպարը վախենում է, Գասպարը դո-

դում է այն խաւարից, որի մէջ մի անբրևոյթ ու սարսափելի ձեռք աւերում է, խորտակում, և նա զգում է, ինչպէս իր շուրջը ամեն ինչ փլչում է, ամեն ինչ ցըրիւ է գալիս:

—Վա-վարպետ... աղաչում եմ... տուն գնանք... պարկիր, հողը մի տուր Գասպարի գլխին... վարպետ, ախր Ասածու դէմ ի՞նչ անենք. ձիւնը որ եկաւ, սարը ուր թագցնի գլուխը. շար բազդի տէրը մեռնի, ի՞նչ ասեմ. ուղտը, որ չօքեց, կը չօքի դրանը, ո՞ր ջուրն ընկնենք... մի սպանիր Գասպարին, վարպետ, սաղ կեանքս աչքս քո ձեռքին, սիրտս ոտիդ տակն եմ դրել, լսել եմ քեզ, դուլի պէս յետևիցդ գնացել, էս մի անգամն էլ դո՛ւ ինձ լսիր, աղաչում եմ, զընանք տուն պարկիր, հիւանդ ես...

Գասպարը երբէք այդքան համարձակ, այդքան յոյզով չէր խօսել վարպետի հետ. նրա լեզուն բացւել էր, բռռերը թափւում էին, տաք, սրտամորմոք բռռերը, բայց Թաթուլը չէր լսում. աչքերը միշտ չռած, շրթունքները դողդոջուն, դէմքը սարսափելի, և այն ահաւոր ժպիտը շրթունքներին նա շարունակում էր երգը.

«Ծամերս հովին տւի,

Սիրտս իմ եարին տւի,

«Թաթուլի զընդ-զընգան Մարանն»  
եմ ես»...

—Վա-վարպետ, վարպետ... Գասպարը նախ տնքաց կրծքի խորքերից, ապա ինչպէս մի պատ փլչէր, կուրծքը քանդուեց որոտով, և նա լալիս էր, մերթ ինչպէս ժայռի խոռոչում խեղդուած վտակ, մերթ ինչպէս քամուտակ շառաչող կահնի: Թաթուլի ուսը ցնցւում էր նրա յաղթ կրծքի ուժգին ելևէջերի տակ, մարմինը սարսուսւմ, դողում: Երգը լռեց.

Թաթուլը յանկարծ թռաւ ոտքի, կանգնեց այնպէս, ասես ձգւում էր դէպի երկինք, աչքերն արիւնակալած, կուրծքը պայթելու չափ ուռած, դէմքը ծովուած անհնարին յուզմունքից, ոտքը գետին զարկեց կատաղօրէն ու բացականչեց.

—Տէյ, հէյ, սի տարաւ Բարիկի շողերը, սի տարան, յետ տւէք, յետ տւէք, բռնեցէք, բռնեցէք... որ ես խլեմ, կը փշրեմ, կը քանդեմ... Մարանն, Մարանն... համբուրեցին... Գասպար, սիմ են համբուրել... Մարանին... տես էէ, պատերը տեղսնն, կըտուրը չի փլել, պատիւն ինչ է որ, մի գրգահ, զարկ ոտներիդ տակ, արորիք, թքիւր վրան... Նա ահագին թափով գրգահը գլխից առաւ, զարկեց գետին, արորում, թքում էր

վրան. բռունցքները սղմած, դողդողում էր, ձչում, մոնչում, հեծեծում փոխառփոխ:

Գուռը բացուեց և յայտնեց Բարիկը գլուխը կապոտած լաթերով: Հօր ձայնի վրայ կանգ առաւ, գունատուեց. Թաթուլը հետում էր ու նայում էր որդուն այնպէս, ասես պատրաստուում էր վրան յարձակել. ապա թափով առաջացաւ, երկու ձեռքով բռնեց նրա գլուխը, և նայում էր աչքերի մէջ:

— Բարիկ, տեսնում ես ինձ, հարցրեց Թաթուլը կատաղաբար.

— Չէ, հայրիկ:

— Լաւ է, մի տես, էլ գրգահ չը կայ գլխիս. տեսնում ես երկինքը.

— Չէ, հայրիկ:

— Այդ էլ լաւ է, երկինք չը կայ, դատարկ է այնտեղ. Բարիկ, տես՜ր «նրան», որ Չօմառին սպանեց.

— Չէ հայրիկ... հայրիկ, ախր վիզս ցաւում է հեծեծաց երեխան.

— Ա՜ն, խեղդել է քեզ, խեղդել են կոյր երեխային, որ չը տեսնի իր մօր շընութիւնը... հա, հա, հա, որ չը տեսնի, Գասպար...

— Հա, հայրիկ, խեղդեց, վիզս սղմեց, գլուխս ջարդեց...

— Լաց եղ՜ր, Բարիկ...

— Չէ:

— Լաց չէ եղել Գասպար, լաց չէ եղել Բարիկը... կողոպտեցին ինձ, լոյսերս տարան, պատիւս տարան, հոգուս վրայ թըքեցին ու պղծեցին և դու լաց չես եղել, հուճ. Թաթուլը զայրոյթով դէն շարտեց երեխային, որ ընկաւ գետին հեծկլտալով, Գասպարը վագեց դէպի Բարիկը, գրկեց, բարձրացրեց, համբուրում, գուրգուրում էր մ'օր պէս...

Արդէն երեկոյ էր. եկեղեցու զանգի ձայնը հնչեց մեզմ լալագին դողդոջներով. ինչպէս միշտ՝ նա հաւատացեալներին կանչում էր աղօթքի...

— Գասպար, Գասպար, էլի կանչում է, աղօթքի է կանչում նա՛ որ կողոպտեց ինձ, որ հոգուս վրայ թքեց ու պղծեց, որ իմ աղօթքը հոսած դիակի պէս ոտքով փողոց շարտեց, որ շները լափեն... ու կանչում է, կանչում է հա, հա, հա, ինչպէս է կանչում... հա, հա, հա...

Եւ Թաթուլը ծիծաղում էր, բարձրաձայն զանգի ձայնի իւրաքանչիւր հնչիւնի հետ, նրա ծիծաղը բարձրանում ու խորանում էր, ու վերջը դարձաւ ահագին քրքիշ, խենթ, անմիտ, հրէշաւոր. վաղվզում էր բակում ու քրքշում և յանկարծ կանգ առաւ ու լռեց. նրա աչքն ընկաւ ձիուն... Թաթերի վրայ կամացուկ մօտեցաւ ու կանգ առաւ նրա

առաջ հեալով, պարանոցն առաջ ձգած, աչքերն անթարթ. կենդանին յոգնածութիւնից ու բեռից տանջւած՝ գլուխն ու ականջները քաշ նայում էր անյոյս ու հնազանդ՝ ինչպէս մի անծայր ձանձրոյթ, նայում էր տիրոջը անասունի իր համբ, իր տանջւած հոգին հայեացքի մէջ:

— Ի՞նչ ես նայում, անիրաւ կենդանի, ճշաց Թաթուլը, ասան, էլ ի՞նչ մնաց... յետ յետ քաշեց դողալով, կրկին մօտեցաւ, ու յանկարծ խլեց խուրջինից ծանր քլունգը ու մինչ Գասպարը զբաղւած էր Բարիկով, ահագին թափով հարւածեց ձիու ճակատին... կենդանին փնչաց, խռխուաց, նախ՝ յետին ոտների վրայ նստեց, ջախջախւած արիւնոտ գլուխը ցցած ինչպէս մի այլանդակ հրէշ, պղտոր աչքերով վերջին անգամ նայեց տիրոջը, ասես հարցնելով «ինչո՞ւ», ապա շառաչալից ընկաւ փուկով իր մարմնի բոլոր երկարութեամբ: Արիւնը ժայթքում էր նրա բերանից ու ուննգներէից:

Գասպարը յետ նայեց ու մնաց սոսկումից շշմած. յետոյ թափ առաւ դէպի բակի դուռը, դէպի փողոց մարդ կանչելու, վարպետը խենթացել էր: Բայց հազիւ բակի դրանը հասած՝ Թաթուլի սարսափելի ճիշի վրայ յետ նայեց ու բոլոր թափով նետեց

դէպի նա... ուշ էր, Թաթուլի վարժ ձեռքը երկրորդ անգամ օդի մէջ պտտացրեց քլունգը և անագին թափով հարւածեց սեփական գանգին:

Թաթուլը փռւեց ձիու կողքին...

Գասպարը նրա վրայ ընկաւ գլխին տալով, Բարիկը սոսկալի ճիչ արձակեց չիմանալով ուր փախչել, յետոյ քար լռութիւնս իջաւ.

Մթնեց...

Օրեր անցան, յետոյ շաբաթներ...

Ձմեռային մի մութ գիշերին, շինական գրագրին խեղդել էին անկողնում...

Ոչոք, չիմացաւ, ո՞վ է սպանել նրան. հարց, փորձ, քննութիւն, սրա նրա բանտարկութիւն, ողջ ի գուր անցան:

Մարգասպանը մնաց անյայտ:

Միայն մի երեկոյ, Գասպարը երկար խոստովանւում էր քահանային: Երեկոյեան ժամերգութիւնից յետոյ, եկեղեցու կիսախաւարի մէջ, նա մերթ պատմում էր, մերթ հեծեծում, լալիս, ու արցունքով թրջում էր քահանայի աջը, որ պինդ սղմել էր իր ձեռքի մէջ ու չէր թողնում:

Քահանան շփոթւած էր, գունատ, ինչոր մը մնջում էր այնքան զգոյշ, այնքան

գաղտագողի, ասես վախենում էր թէ իր ձայնը կը լսեն սրբերի պատկերները, որոնք չորս կողմից չռած աչքերով նայում էին ձգնելով իմանալ անաւոր գաղանիքը.

— Լաւ է, որդի լաւ ես մտածել... բարի գործ է... քաւութիւն, արիւնի քաւութիւն...



# Epilog

«Par le chemin des aventures  
ils vont haillonneux et hagar

. . . . .  
La nature à l'homme s'allie  
Pour chatier comme il le faut  
Lorgueilleuse melancolie  
Qui vous fait marcher le front haut.  
Tous vous repousse et tout vous navre  
Et quand la mort viendra pour vous  
Maigre et froide, votre cadavre  
Sera de daigne par les loup.

P. Yerlaine

Արկածների ճամբաներով հեռուոր-  
հնում են նրանք ողջ գողւած ու մռայլ:

. . . . .  
Մարդ ու բնութիւն դաշն են կուած միա-  
սին,

Պատժելու այդ ձեր թախծութիւնը հը-  
պարտ,

Թախծութիւնը, որ ձեզ տալիս է հնար  
Քայլելու միշտ ճակատներդ վերամբարձ-

Ու ձեզ համար ամեն ինչ է խոտելի:

Ու ամեն ինչ մորմոքում է ձեր սրտեր-

Եւ երբ հասնի մահը վտիտ ցրտաշունչ:  
Քայլերն անգամ կարհամարհեն ձեր դիեր:

Պ. Վերլէն.

Քայլէք, քայլէք...

Նրանք երեք հոգի են, երկուսը կոյր՝  
մէկն առողջ:

Արջևից գնում է մի յաղթանդամ տղամարդ, վայրի ու մռայլ, որպէս պարտաժամ մի հսկայ, որ հեռաւոր արիւնհոտ դաշտերում՝ օրհասական մարտից յետ՝ խենթ հողմերին, գիշերներին ու գայլերին է թողել ցուրտ դիերը իր ընկեր մարտիկներին, և ընկճած ու յուսաբեկ՝ տարւում է մուլար ճամբաներով պարտութեան, յաւերժական լուռութիւնը շրթունքին և մի ծով միտք ճակատի տակ փրփրուն: Վաղաժամ ալիքներով ծածկւած, բրդբրդոտ ու ահագին գլուխը միշտ կրծքին քաշ, նա քայլում է սուերապատ հայեացքը շեշտ դէպ գետին և քարերի, փոշիներին, փշերի մէջ անդադրում, մի կորուստ է փնտրում, որ էլ երբէք զբոսելու չէ. ճակատի խոր կնճիւններից և ոչ մէկը չի բացւում ինչպէս աշնան մուկ երկինքը ամպամած, և դաժան թաւ յօնքերը երբէք չեն բարձրանում անփայլ ու մռայլ թուխ աչքերի վրայից, որպէս սև անդունդների շրթին կախ՝ երկու անշարժ ու մամուապատ խօլ ժայռեր: Լայն ու յաղթ թիկունքը մի աներևոյթ բեռի տակ, նա քայլում է յամրաշարժ ու ծանր, և ամեն մի քայլ փոխելիս նա կարծես ցաւագին ճիգ է անում ու գոհ է, որ իր կեանքի մի վայրկեանն էլ անցկացաւ և դէպ մուկ անյայտը

գալարւող իր ճամբան մի փոքր էլ կարճացաւ:

Երկու մահակ ունի ձեռին ահագին, մէկին ինքն է յենում կեանքի իր բեռը, և միւսը մեկնել է դէպի յետ՝ դէպի մի կոյր ծերունի, որ բռնած քայլում է նրա յետևից:

Ա՛յդ ծերունին...

Բարձրահասակ ու նիհար, ինչպէս մի ուղղաձիգ կաղնի ծառ, նա գլուխը միշտ բարձր է պահում և մի կոյր Աստու վեհութեամբ տարածութեան մէջ փնտրում է այն երկինքը, որտեղից մի օր ընկաւ գահավէժ. ճերմակ ու գգգւած միրուքը, որ արեւի բարկ շողերն ու ձմրան ցուրտ հողմերն են կրծոտել, ցանցառ ու խեղճ ցաք ու ցրիւ իր կրծքին, իր ամեն մի կոյր քայլի թափով, դողդողում է վշտօրէն: Յօնքերը միշտ բարձր, ճակատը պայծառ ու դէմքն անյոյգ նա քայլում է այնպէս, ինչպէս ամպի մի համր սուեր յեղյեղուկ, որ սահում է երկրի երեսից անժպիտ ու անցաւ: Բերանը միշտ կիսաբաց ու շրթունքները դողդոջուն՝ թւում է թէ ականջ է դնում երկնքի տակ խաղացող ձայներին, որ միայն ինքն է լսում և միայն ինքն է հասկանում աշխարհում:

Երբեմն միայն՝ չը գիտես ո՞ւմ և ին-

չո՞ւ, շրթունքները մեղմ ժպտում են վայրապար, մինչդեռ դէմքը մնում է միշտ խաղաղ ու անյոյզ. այդպէս մանուկ. ձեռքով նետուած մի խիճը մանր ալիքներ է հանում լճի մի կէտում, մինչդեռ հեռուն, դէպ խորքերը, ջրերի պաղ հայելին, մնում է միշտ անաղարտ: Թիկունքին սազը և աջ ձեռքին գաւազան, նա ձախ ձեռքով պինդ բռնել է առաջնորդի մեկնած մահակը և քայլում է հանդարտ նրա յետևից:

Ամենից վերջը գնում է մի կոյր մանուկ, ձախ ձեռքը ծերունու գօտին ձգած ու աջով բռնած մի փոքրիկ գաւազան. Աչքերը բաց ու անլոյս՝ յառած ծերունու թիկունքին, ուր սազն է ոստոստում, նա քայլում է փոշիների մէջ կորած՝ մանր, անհաստատ քայլերով, ու երբեմն կամացուկ սրբում է ձակատի քրտինքը, կամ ուղղում է թիկունքից քաշ ընկած իր փոքրիկ սազը, որի գօտին կրծոստում է նրա արևառ պարանոցը քրտնաթոր: Այդ մանուկ վտիտ դէմքին մի տանջանք է քարացել և նուրբ, գունատ շրթունքներին մի ջերմ համբոյր է մարել:

Քայլէք, քայլէք...

Երեք հոգի են նրանք, երկուսը կոյր՝ ու մէկն առողջ. ծերունին ձայներ է փնտրում

երկնքում և երեխան յուշեր, իսկ մռայլ առաջնորդը կեանքի ծանր գաղանթի բեռն է քաշ տալիս:

Եւ անցնում են փոշոտ, մոլար ճամբաներով հեռաւոր, անցնում են լուռ, ինչպէս խոհեր համր, ծածուկ տանջանքի, և մի տնգամ անցած տեղից էլ երբէք յետ չեն գալիս: Չմեռը ցուրտ հողմերն են ծածում նրանց գլուխները, և ամառը արևի կիզ շողերն են վառում նրանց թիկունքն ու ձակատը. ու նրանք քայլում են, քայլում ինչպէս մի հին ցաւոտ առեղծւած, որ ոչ ոք չի իշխում լուծել:

Ու երբ յայտնւում են խօլ կարաւանով, երեխաները խմբերով նրանց յետևից են վազում և շները կատաղօրէն նրանց կրքունչին հետամուտ՝ մոմուտ են ու ոռնում ցասումով առաջնորդի մահակի սաստի առաջ կարկամւած:

Կանգ են առնում բակերում, հրապարակներում, փողոցներում. առաջնորդը թողնում է նրանց՝ մի բանի քայլ յետ քաշւում, մահակները ձեռքին և աչքերը նրանց տանջւած թիկունքին, որպէս զգաստ ու հօր պահապան կոյր ծերութեան ու մանկութեան, և սպասում է հանդարտ:

Ամբօխը՝ բուխ ու գունատ ամբօխը,

մերթ լիտի, որպէս կինը վաճառքի և մերթ ընկճած սարկօրէն ու սողուն՝ հօրնների ոտներին տակ գեանամած և մերթ կեանքի աղբերի մէջ անասնօրէն խայտացող, ստոր ու գարշ կրքերի սև ամբոխը շրջապատում է նրանց խիտ առ խիտ շարքերով:

Կոյրերը լուռ ցած են բերում թիկունքներից սագերը, դուրս են քաշում մոխրագոյն պատանների միջից, շօշափում, յարգարում են լարերը, որոնք մրմնջում են լալագին, որպէս խորը քնից ընդոստ զարթնած մանուկներ:

Կոյր ծերունին առաջինը սղմում է սազը կրծքին և նրա չոր, երկար մատները զարկում են լարերին, նախ մեղմօրէն ու զգոյշ, ապա աւելի ու աւելի յուզմունքով:

Սազը տնքում է, սազը հեկեկում:

Հնչում են ձայներ, որ դեռ ոչ ոք չի լսել աշխարհում:

Կենդանի ու կիզիչ մի ցաւ, մերթ գալարուն, որպէս ժայռերի կուրծքը չանդոող ու քարքարոտ արահեա. ու մերթ խորունկ, որպէս վերաւոր հոգու անդունդները խաւարամած, բարձրանում է դաժանօրէն գեղեցիկ և մորթոտւած ու արիւնոտ ճմարտութեան գերեզմանի վրայ իր խելայեղ երգն ասում անդրջիրմեան շեշտերով:

Հեռու մի տեղ՝ սև ու մթին այրերի մէջ հանգչող տանջանքն է զարթնում. և փոխ առ փոխ քրքջում է ու լալիս, անծայր ծովը մի մութ ոյժից ալեկոծ, փրփրում է ու մռնչում, ալիքները, որպէս հերարձակ վրէժխնդիր Փուրիաներ, սոսկումի թևերի վրայ երիվարելով, դէպի ափերն են վազում:

Հոգիներէ անապատի վրայ զարկւում է մի գոռ մրրիկ տառապանքի ու արցունքի հողմերով, և գորշ երկնքի խորքերից սև կայծակի անձրևն է մաղում բիրտ ու անզգայ ամբօխի գլուխների ու սրտերի վրայ:

Ամբոխը լուռ է. լիտի ծիծաղ ու քրթմնջիւն մեռնում են շրթունքներին, ախտաւոր կրքերի հուրը ծածկւում է մոխիրների տակ և հոգիները թրձւում են ցաւոտ երգի բոցերով:

Ու կոյր ծերունին ժպտում է իր սառն, սպանիչ ժպտով:

— Զարկ, բալիկ, զարկ, շնջում է նա կուանալով փոքրիկ աշուղի ականջին:

Երեխան բարձրացնում է սազը, փխրուն գունատ մասները սահում են լարերի վրայով, որոնք մեղմիւ հեծեծում են:

Էլ մրրիկ չը կայ, և ոչ անձրև կայծակի: Երեկոյեան հովերն են կախւում մեղ-

միւ հսկայ լեռներից, սև հօձիներն են շը-  
շնջում կէս գիշերին նիրհող լճակի վրայ,  
վերջալոյսի պաղ շողերն են մեռնում ա-  
ռանց բողոքի, ծովափի եղէգներն են հեծե-  
ծում խեղդւած կոյսի դիակի վրայ, որ լո-  
ղում է ալիքների երեսին հերարձակ, ան-  
ժայր դաշտերն են հնում երեկոյեան մշուշի  
տակ, աստղերն են երկնքում պլպլում խոնջ  
ցոլքերով վաղորդեան և հանգչող մանկան  
աչքերի պէս՝ արշալոյսի վարդագոյն խան-  
ձարուրի մէջ մարում. ու ծով կեանքը հա-  
զար ու մի յեղյեղումով ալեկոծ, մեղմիւ  
մրմնջում է իր համր ցաւը յաւերժական:

Ունկնդիրների մօրթին է փշաքաղում,  
սրտերի վրայ մաղւում է վշտի մի անուշ  
անձրև և աչքերից քամւում են սփոփիչ  
արցունքներ:

— Ի՞նչ դարդոտ է էդ փոքրիկ աշուղը,  
շշնջում են ծերերը:



Յետոյ կոյրերը վերստին պատանում  
են սագերը ու նետում իրենց թիկունքին,  
առաջնորդը մօտենում է ու լուռ մեկնում  
է իր մահակը ծերունուն, ապա երգի ու  
տանջանքի անօրինակ կարաւանը շարժւում  
է դէպի այլ աշխարհներ, դէպի հեռաւոր ու  
նոր հորիզոններ, ուր համայնատարած տա-  
ռապանքն է ծանրացած, ուր տրորւած խեղ-

ճութիւնն է մօրմօքում, ու վիրաւոր արդա-  
րութիւնն է լալիս:

Այն Գասպարն է առաջնորդում աշուղ  
Սարհադին ու Բարիկին...

Քայլէք, քայլէք, քայլէք...





Ա. Ա Հ Ա Ր Ո Ն Ե Ա Ն Ի

Առանձին գրքերով լոյս տեսած երկերը

Հոս կինը . . . . .	— 40	կ.
Մայրերը (սպառուած) . . . . .	— 15	»
Մըրիկի սուրբը . . . . .	1	— »
Իտալիայում (պատկերագրող) . . . . .	1 50	»
Արազը . . . . .	— 80	»
Լուսիկները . . . . .	— 60	»
Ազատութեան ճանապարհին . . . . .	— 80	»
Արցունքի հովիտը . . . . .	— 35	»
Կեանքի վեպը . . . . .	— 75	»
Գայլերը ոտնում էին . . . . .	— 10	»
Ժողովածու երկերի հատոր I Պատկերներ Բ. հրատարակութիւն . . . . .	1	— »
Ժողովածու երկերի հատոր II Սեղծերը Բ. հրատարակութիւն . . . . .	— 75	»
Անդունդը . . . . .	— 40	»
Մոխրների տակից . . . . .	— 40	»

Գրմել Հեղինակին. Тифлисъ, Бебутовская № 60.

1000

«Ազգային գրադարան»



NL0374169

18431